

Punaru

Ճ. Ա. ՏԱՐԻ


Թ Ի Ի 10

ՀՈՒՏԵՄԲԵՐ 1973

Printed by A.R.A.R. ©

Ք Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

- Պ. ՍՆԱՊԵԱՆ Թատերգաւթիւն մէկ արարով
- Պ. ՍՆԻԱԿ Երգ երգոց
- Կ. ՍԱՍՈՒՆԻ Հորիզոնի հորիզոն
- Մ. ԹԱՒՐԻՋԵԱՆ «Եւ հղել խաւար»
- Ռ. ԿՈՒՆԵԱՆ Տպագրութիւններ
- * * * Կառոյցներու վարպետին
«Էսայիբէն» կտակը
- Ռ. ԻՍՐԱՅԵԼԵԱՆ Ինքնատիպութեան պահպանման համար
- Լ. ՄԿՏՏՅԵԱՆ Ո՞վ է ճշմարիտը
- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Լիբանանեան անմիջական
բանաստեղծութիւնը
- Պ. Ս. Համօ Սահեանի «Սեզամ-բացուի՛ր»ը
- * * * Կը դողանջեն
- * * * Հոգ՛ հոգատարութեան մասին
- * * * Մունետիկային արժագանցներ
- * * * Ո՞վ է այդպէս յափշտակում
- * * * Տխար լարեր



Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ.Ն. ՅԱՐԻ, ԹԻՒՒ 10 Հ Ա Կ Յ Ե Մ Ը Ն Ը 1978 ՊԵՏՐՈՒԹ

Պ. ՍՆԱՊԵԱՆ

Թ Ա Տ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Է Կ Ա Ր Ա Ր Ո Վ

Սեպտեմբերը եկաւ Վազգէնին ծանօթ սեպտեմբերեան յայտագրով, գրուեցան գրասարկիկները, ծովային հաճոյքները ընդհատուեցան, վերջին նորոյթներուն համար խաղի իր ընկերներէն երկուքը Եւրոպա մեկնեցան ու սեպտեմբերեան գաղջութիւնը ծաւալեցաւ սրտին: Ծովէն զատ ուրիշ շարժումներ կ'անգիտանար իր մարմինը, խաղը կը սիրէր՝ իր խումբին հետ: Ներքին ցուրտը բարեխառնելու համար մէկ հոգի մնաց իրեն, միայն մէկ գիշեր, Լեւոն, Լեւոնի ազատ գիշերը: Շարքուան մնացեալ օրերուն...

Աւտու՝ վաճառատուն, գիշերը՝ տուն: Վաճառատան մէջ՝ կայունութիւն, տան մէջ՝ լուսթիւն:

Կնոջական նորաձեւութիւններու Լամ ընկերութեան խորհրդակցանին հետ տեսնուելէ ետք, յետմիջօրէին, Վազգէն նոր ապստամբներ թելադրեց քարտուղարուհիին: Պահանջուած գումարը ահաբեկեց հայրը: Նուազագոյնը չկարսնցնելու անոր իրապաշտութիւնը եւ առաւելագոյնը պատկերացնելու տղուն երեւակայութիւնը նորէն բախեցան իրարու եւ սրեցին յարաբերութիւնները: Վազգէն վառեց Փրանսական բարկ սիկարէթ մը եւ սպասեց իրիկուան, Լեւոնին, յարանորոյ հրապոյրներով վարարուն ալիկան:

Պէշուրթի Փրանսական համալսարանի հոգեբանական ճիւղը աւարտած ազջիկ էր Լեւոնն ու կը հետեւէր պատասխան սկզբունքներու: Նոր ճանչցած էին զիրար, ծովագի, ա'յն պահուն, երբ Վազգէն կատաղի ալիքներու հետ իր երկարատեւ խաղը աւարտած ափ վերադարձաւ ու ընդունեց Լեւոնին ժպիտը, ապա՝ յանդգնութիւնը շնորհաւորող անոր հիացիկ ար-

ստացառութիւնը: Այս սկիզբը խորացաւ մինչեւ մտերմութիւն: Օրերուն հետ՝ այդ քսանամեայ, թուի ու բարեձեւ աղջկան հրեղէն մերկութեան քով՝ Վազգէն կիրքին ստրկեց ուրիշ ապրումի մը հուրը զգաց ներսը եւ վազեց բոլոր կանչերուն: Մով իջած օրը ամառանոց շէր բարձրանար Լեւոն, կը սիրէր մնալ Բուռնի իրենց ծովափնեայ տունը, ուր, զիւրքը, արեւակէզ իր մարմինին աճող պտպակները կը խառնէր տղուն ծարուններուն:

— Ինչպէ՞ս է տրամադրութիւնդ այս դիչեր, — Հարցուց ժիւլ վաճառատունէն ներս խուժելով յանկարծ:

— Եկա՞ն, — Հարցուց Վազգէն՝ Եւրոպա մեկնած ընկերներուն ակնարկելով:

— Ոչ: Բայց ուրիւնք կան: Մէկը կը յիշես, քանի մը անդամ եղած է մեզի հետ, նպարավաճառ Հայկազը, իսկ միւսը Ռուսցի՛ն է:

— Ռուսցի՛ն:

— Անգլիական վարժարանին մէջ անգլերէն լեզու կ'աւանդէ: Ամառը Անգլիա անցուց: Մեր դրասենեակին մէջ ծանօթացանք իրարու:

Վազգէն արագ հաչիւ մը ըրաւ: Լեւոնին մօտ պիտի ըլլար ժամը իննին: Կրնար երկու ժամ խաղալ: Հաղորդեց պայմանը: Ժամադրուեցան:

Ժիւլ առանձին տղայ մըն էր, եզրիպտոսէն, եւ միշտ Համբարի իր յարկարածինը կը հաւաքուէին խաղի համար: Արարեքէնը, Փրանսերէնն ու անգլերէնը կը խօսէր մեծ ճարտարութեամբ եւ կը վարէր ճամբորդական իր գրասենեակին արձանագրած ելուէջներուն յար եւ նման կենցաղ մը, լաւ օրերուն՝ սանձաբեկ, միւս շրջանին՝ ինքնամփոփ: Հայկազը ուրիշ էր, չուռէր ժիւլի եւ միւսներուն քմահաճ խառնուածքը եւ ստոր համար յաճախ կը խուսափէին իրմէ: «Ոչի՛նչ, խաղ ըլլայ միայն», ըսաւ Վազգէն իւրովի, բայց միաքը կառչած մնաց երբորդին: Ռուսցի՛ն մը հետ խաղի նստելու հեռանկարը շէր խանդավառութիւն: Ուստի կը սիրէր խաղալ նիւթական իր ուժին համազօր մարդոց հետ, Հարուստներուն ու չուկայի ճարտիկներուն հետ: Միւսները յանցաւորի զգացումներ կ'առթէին իրեն: Այս անդամ սակայն չլըրցաւ յազթահարել փորձութիւնը:

Աւստրիական դիզած տիրութիւնները նոյն վայրկեանին փարատեցան Վազգէնի մէջ եւ սիրտը սկսաւ արիւն արիւն արիւն արիւն, խառնուել Լեւոնի հրապոյրներուն ու խաղին նրբութիւններուն, ալեկոծիլ սարսուռներու, կիրքերու, մոլեռանդութեան անձկայի ջուրերուն հետ:

Երբ Վազգէն հասաւ, արդէն սկսած էր խաղը: Մուին ու ուխտի բարկ բոյրը լեցուցած էին մթնոլորտը եւ մեղմունունջ ժապաւէնի մը վրայ կը դառնար անգլերէն բառեր կոտորող զժգո՛հ երիտասարդի մը ճիւղը:

Ժիւլ ներկայացուց երկու անձանօթները՝ իրենց գործերով ու պաշտօններով: Լեւոն ամուր մը սեղմեց նորեկին ձեռքը եւ աթոռին վրայ կրկին տեղադրուած պահուն, իւրաքանչիւրին մէկ-մէկ նայելէն՝ ըսաւ.

— Դուն՝ դրասենեակի տէր, սա՝ նպարավաճառ, ան՝ վաճառական: Կը նշանակէ, որ առանձինս պիտի ճակատիմ կեղտոտ պուրժուաներու միացեալ ճակատին դէմ:

Ոնդացին բոլորը: Առաջին տղաւորութեամբ Վազգէնին այնպէս թուեցաւ, որ կրնայ նոյն բերկրանքը ապրիլ, եթէ Լեւոն նոյնիսկ հայհոյէ իրեն: Անոր թաւ ձայնէն վստահութիւն ու մտերմութիւն կը բխէր եւ աչքերուն ճառագայթող կայտառութիւնը աւելի կը շեշտէր անմիջակահոթութիւնը:

Վազգէնին մասնակցութենէն ետք խաղը մտաւ տարբեր հունի մը մէջ: Սկսաւ յազթական ժիւլին անկումը, Հայկազ կորսնցուց խոհեմութեամբ պա-

համ Հաւատարակչութիւնը եւ շուտով կրկնապատկուեցան Լեւոնին կո-
րուստները: Սկսած վայրկեանին, Վաղզէն ինք խառնեց թուղթը, նախաձեռ-
նութիւնը սկսաւ ուղղակի իր աջին նստած Լեւոնին կողմէ, Հայկազ կրկնա-
պատկեց դուժարը, Ժիւլ հետեւեցաւ, Վաղզէն երկու աղջիկներով փորձեց
բախար: Վերստին բոխեցան իրարու: Ժիւլ նահանջեց, Լեւոն երեք քուռ ցոյց
տուաւ, Հայկազ երկու աստիճանով փռւլ վալի կազմած էր, իսկ Վաղզէնի ափին
չորս աղջիկներ անբացատրելի հաճոյք մը կը փոխանցէին ներսը: Աղջիկները
հաւաքեցին դիզուած ֆիշերը, Լեւոն մեծազմուկ բառերով զովքը ըրաւ աղ-
ջիկներուն հաւատարմութեան ու արարեբէն լեզուով բարեմաղթութիւններ
ըրաւ Վաղզէնին, Ժիւլ խօսեցաւ աղջիկներու դաւաճանութեան մասին եւ
հայհոյեց աղջիկներուն, իսկ Հայկազ կուտակուած ֆիշերուն աչք մը նետե-
լով՝ լսյն թղթը պարպեց մեծ արտաշնչումով:

Վաղզէնի թուղթը զլուխը առած կ'ընթանար նոյն թափով: Տասնամ-
եակէ մը ի վեր մոլեռանդօրէն կը խաղար այդ խաղը, բայց թուղթը երբեւեցէ
այսքան չէր հնազանդած իրեն: Մողակոն ուժ մը կարծես կը վարէր ձայնը.
զոյն, պատկեր թէ թիւ՝ անվրէպ կամակորութեամբ մը կ'ենթարկուէին իր
կամքին: Կը մասնակցէր բոլոր խաղերուն, խաղին մէջ խաղեր կը սարքէր շա-
րունակ, քիչ հաւանականութիւններ ունեցող համեմատութիւններու կը վրս-
տահէր յաճախ, բայց նորէն ձեռք կը ձգէր առաւելագոյնը, Գախախտով
պատրաստի պատնէշները: Սազընկերներուն ֆիշերը բարկ արեւին տակ զըր-
ւած սառի կտորներու պէս կը հալչին ու կը ծովմտային իր սողնէ:

Վաղզէնի հաճոյքը բոլորովին անխառն չէր սակայն: Յարթական կո-
րուստներու առջեւ Լեւոնին պահած խաղաղութիւնը վայրկեան առ վայրկեան
կը խորացնէր առաջին ակնարկով իր մէջ սկսած համարումը եւ ներքուստ կը
մաղթէր, որ վերջ գտնէ անոր հանդէպ թուղթին թնամանքը: Ատոր համար
երբեմն նոյնիսկ վտանկներու կը դիմէր: Չօրաւոր հարուածներով կը մեկու-
սացնէր Ժիւլն ու Հայկազը եւ անպաստ թուղթով առանձին կը մնար Լեւո-
նին հետ, բայց նորէն ի նպաստ իրեն կը զտաւորուէր թուղթը, մինչ միւսը
կը շարունակէր ժպտիլ, կատակել, երգել՝ իբր թէ ի'ր կամքը կտտարուած
ըլլար թուղթի իշխանութեան մէջ:

— «Այս արեւին սառ չի դիմանար», կը պատգամէ առածը, — ըսաւ
Հայկազ, — քիչ մը սանձէ ինքզինքդ: Բոլոր խաղերուն մասնակցեցար ու
հիմա հասիր ետեւէն եթէ կրնաս...

— Ես խաղալու եկած եմ եւ ոչ թէ նման նրբին բաներու մասին մտա-
ծելու, — ըսաւ Լեւոն հանդարտ, — ես կը խաղամ իմ խաղս, մնացեալը
թուղթին դիտալիքն է:

— Չարմանալի է, որ կը կորսնցնես ու չես ջղաշնանար:

— Չղաշնանա՞լ: Ես ջիգերս խաղաղեցնելու համար կը խաղամ այս
խաղը: Անոր հետ ամբողջական ազատութեան մէջ կը զգամ ինքզինքս ու ա-
տիկա կը բաւէ ինձի: Կրնամ ուզածիս պէս վարուիլ ինձի հետ եւ ուրիշնե-
րուն, ձեռնարկել արկածախնդրութիւններու, վտանգել, վտանգուիլ, խարել,
խարուիլ, մոռնալ աշխարհը եւ լիանալ յարախոփոխ յուզումներու հեշտան-
քով:

— Այո, — ըստ Վաղզէն մեղմ, — պայմանաւ, որ թուղթը միակտուր
ձեւով մը շղաւանանէ քեզի:

— Ուղի մէջ միակտուր բան չի կրնար գոյութիւն ունենալ: Շահը թէ
վնասը՝ օր ունին: Այսօր քու օրդ է, լա՛ւ վարուէ թուղթիդ հետ, այլապէս
կրնայ քէն ընել:

- Քէ՞ն: Թո՞ւղթը:
- Այո՞, թո՞ւղթը: Այս մտութենէն առաջ՝ ես կ'անդիտանայի նախապաշարում ըստածը: Հիմա նախապաշարումներով խաչածեւ հողի մը կը կրեմ: Թուղթը օր ունի:
- Բայց կայ նաեւ խոհեմութիւն ըստած բուն մըն ալ, որուն բնաւ արժէք չէս տար դուն եւ խաղի մէջ յաղթանակն ու պարտութիւնը իրարու հետ կը շփոթես, — յիշեցոց Հայկազ՝ դողահար ձեւքով թուղթը խոսեցին:
- Դուն Գիփիինկ կարգացած ես, — Հարցոց Լեւոն լուրջ:
- Գիփիինկը ով է:
- Թուղթը մէկ կողմ գիր վայրկեան մը եւ մտիկ ըրէ.

Երէ կրնաս շաքը հագար ֆիզերու
 Մէկ հարուածով յանձնել բախտի սեղանին
 Եւ ամարտուեց, առանց ելլիք ողբալու
 Վերսկսիլ ծայրէն ամէն ինչ կրկին...

Ի սեւ բառերը արտասանած աստէն Լեւոնի սյուկերպութեան՝ քաղցրութիւն մը ծաւալեցաւ Վազգէնի սրտին: Անոր շնչտերը, ձայնին հաղորդականութիւնը եւ անոնցմով դրսեւորած ներքին ինքնափոխակերպութիւնը հեռուները տարին գինք ու շրիտացաւ ինչու նախանձ մը խլրտեցաւ ներսը եւ Հաւհայու հանձնքն ու լաւը կորսնցուցին իրենց ձուղականութիւնը:

— Ի՞նչ ըսաւ, ինչո՞ւ կանդ առիք, — հետաքրքրուեցաւ Ժիւլը:
 Լեւոն դարձաւ անոր եւ հաղորդեց բանաստեղծութեան անդերէնը.

If you can make one heap of all your winnings
 And risk on one turn of pitch-and-toss,
 And lose, and start again at your beginnings
 And never breathe a word about your loss.

Ժիւլ ուրախութեան ազազակ մը արձակեց եւ խնդրեց, որ թուղթի մը վրայ գրուին իրեն բանաստեղծութեան բառերը.

— «If you can make», — ինչպէ՞ս էր...

— Տի՛շ, — եչաց Հայկազ գծով եւ բաժնեց թուղթերը:

Ձիւրը նետած աստէն՝ Վազգէն նայեցաւ ժամացոյցին: Վայրկեանները կ'ընթանային անհաւատալի արագութեամբ, մինչ ինք կ'ուզէր, որ կանդ առնէ ժամանակը, մնայ խաղին մէջ, յաղեցնէ հողին բազակտն նորութիւններէն յորդող յուզումներով, տեղով, աւելի պրկուին ջիղերը, աւելի խենթանայ արիւնը: Որոշեց հեռաձայնով իմացնել Լեւոնին ուշահալու իր մտադրութիւնը: Անապարեց նրբանցք: Ձրադած գտաւ զիծը: Ջղային քայլերով վերադարձաւ, քով քովի բերաւ իրեն սպասող թուղթերը: Ստացուեցաւ Վէտիկն Փոլ մը: Բախեցաւ Հայկազին: Հայկազ արբեց քրտնաթոր ճակատը եւ արարեքէն շնորհով հայհոյեց բախտին քրոջը մտերիմ մտակրուն...

— Ո՛չ, ո՛չ, — միջամտեց Լեւոն վրդոված, — խաղի մէջ Հայհոյիլը օրինական չէ:

— Եւ ինչո՞ւ: Կարծեմ ամէն մարդ քեղի շափ ազատ է:

— Ոչ այն շափով, որ ուրիշին խաղաղութիւնը խոսովես: Նման առիթներու անձնուպէս կը վիրաւորուի: Կը կարծեմ, թէ բանութիւն մը է գործ դրած եմ, անիրաւութիւն մը գործած: Ճիշդ է, որ դրամը պայման է այս

խաղին մէջ, բայց ինծի կը թուի, թէ անիկա ներքին հարստութեան տէր անձերու կը վաշելէ ստուելարար, վճռական, անխարզախ, զուարթ, յարգալիք մարդոց:

— «If you can make one heap of all your winnings», — սկսաւ կարգալ ժիւլի թուղթին վրայէն, — բայց ի՞նչ լաւ բեր է շան դաւակիր:

Վազգէն նորէն վազեց հեռաձայնին ծօռ: Լսեց նոյն բզզիւնները: Զարմացաւ: Պատկերացուց մօտիկ անցեալը: Յիշեց, որ Լեւոնի ազատ կը ձգէր իր ազատ գիշերը: Հեռաձայն չէր բանար, ոչ ալ կը պատասխանէր եկողին: Երեսակայութիւնը անցաւ արագ կապ մը շկարենալ Հաստատելու տաղտուկէն անդին ու ձեռքը ջղաձգօրէն թափահարելով կրկին ելաւ ոտքի եւ զարկաւ թուանդաններուն՝ 48456: Պժայուր ձայներու նոյն յաջորդականութիւնը: Մուտաց:

— Ի՞նչ է, — հետաքրքրուեցաւ ժիւլ:

— Քիչ մը ուշ երթալու լուր մը պիտի ձգեմ, բայց հեռաձայնը գրագած կը զարնէ միշտ:

— Դե՞ռ՝ ի՞նչ: Ուրեմն զեղի սպասող չկայ: Նստէ՛ եւ խաղէ շարունակէ, — թելադրեց Հայկազ շոր:

«Քեզի սպասող չկայ», արձագանգեցին բառերը Վազգէնի մտքին: Նստեցաւ: Մտին՝ կրակ: Երբորդի մը ուրուականը սկսաւ տանջել զինք: Պատկերացուց անոր հեռաձայնած առին Լեւոնի զբոթիւնը, մահճակալին վրայ, կրտսմերկ, թաւալիլէն, ձայնի խռովարար ելեւէջներով: Յաճախեցը կրկնուեցաւ ու կրկնուեցաւ ու ներս առած թոյները շօգնեցին բորբոքած ջիղերուն: Գոյները քաշուեցան զէմբէն, լեցուեցան աչքերուն ու վերածուեցան կսօգածի, նախանձի, վիրաւորանքի բարկտնայթ բոցերու:

— Կ'ենթադրեմ, — ըսաւ Լեւոն՝ մթնալորար փոխելու յայտնի մղումով, — աղջիկ մը կայ այս իրարանցումին ետին: Բայց պէտք է դիտնալ, որ կարելի չէ միտամանակ երկու կիրքերու ծառայել: Ֆրանսացիները կ'ըսեն. «Նազի մէջ կ'որսնցնողը, սիրոյ մէջ կը շահի»: Առածին հակառակն ալ ճիշդ է հաւանարար: Նազի մէջ լաւ է քախտը: Մոռցի՛ր մնացեալը:

Վազգէն չկրցաւ մոռնալ, չկրցաւ խաղաղիլ, չկրցաւ հեռանալ: «Երանի՛ չգայի», անցաւ մտքէն, «երանի՛ Լեւոնին հետ ժամագրուած շրջայի», ըսաւ դարձեալ լուռ, «երանի՛ շահած շրջայի», ըսին իրեն խորունկ ու խաշածեւ ձայներ ու խառնուեցան միւսներուն՝ թիւերուն, ֆիշերուն, միտթիւններուն, մէկ քարթ, երեք քարթ, երկու քարթ, երկու փէր, երեք, ֆուշ, սոլա, ֆուշ, եւ դարձեալ յոգնահարով նոյն թիւը՝ 48456, 48456, 48456, 48456, 48456...

Վերջին փորձին՝ հեռաձայնին բզզիւնները ետ շփեցին Վազգէնը: Պաղը արդէն հմայաթափ եղած էր աչքին: Կրկին խաղցուց մատները թիւերուն վրայ, կրկին, կրկին, հառաչիլէն, մուտակէն՝ — պիտի փրցնե՛մ այդ շատախօս լեզուդ, բողբ ձագ, փշո՛ւր-փշո՛ւր պիտի ընեմ օսկորներդ, ազատախո՛հ պոռնիկ, պիտի փորե՛մ դաւաճան այդ աչքերդ...

— Յետո՛յ, — ըսաւ ցած ձայնով Լեւոն, որ անշուղհ հասած էր ծօռը: Վազգէն թեթեւ ցնցումով մը ընդհատեց զայրազնած մենախօսութիւնը:

— Դե՛ռ չխօսեցա՞ր:

— Ոչ:

— Հանդարտէ եւ անդամ մը առանց սեճապարանքի փորձէ դարձնել թիւերը:

Վաղպէն օգնութեան կարօտ մէկու մը համակերպութեամբ շարժեց մատները՝ մէկիկ-մէկիկ արտասանելով թիւերը.

— Չորս... ութ... չորս... վեց... հինգ...

Լեւոնին այնպէս թուեցաւ յանկարծ, որ լսածը ծանօթ էր իրեն, նոր տեսած էր անոր պատկերը: Բնեւեց աչքերը զիմացի գործիքին եւ պահանջեց, որ Վաղպէն դարձեալ կրկնէ թիւը:

— Քառասունութ հազար չորս հարիւր վաթսուներ...

Ինչ չէր ամբողջացուցած նախադասութիւնը, երբ անզուսպ քահքահ մը փրթաւ միւսին կողորդէն, խնդաց՝ ոտքերը գետին դարնելէն, ինքն իր վրայ դալարուելով, աչքերէն արցունք ու բոց արձակելով՝ հա՛-հա՛-հա՛-հա՛:

— Տեղտեմոնա՛, թաշկինա՛կս, — պոռայ ապա տունը դղրդող ձայնով մը:

Վաղպէն ցնորական մթնոլորտի մը մէջ զգաց ինքզինք մէկէն, անճանաչելի մէկը թուեցաւ իրեն քիչ առաջուան համակրելի երիտասարդը, յիմար մը, թշնամի մը, սատանայ մը, որ շարսխինդ քրքիջով մը կը հեղնէր իր տառապանքը:

— Կը բաւէ՛, — պոռայ յանկարծ ինքնիրմէ ելած ու քայլ մը առաջ նետուելով, — Տեղտեմոնային ալ մայրը, աշխարհին ալ, վե՛րջ տուր:

— Վե՛րջ տուր, — կրկնեց Լեւոն՝ թեթեւօրէն ծեծելով հետոձայնին արձանագիր թիւը, — վերջ տուր: Ու մի մոռնար, որ խաղէ խաղ մեծ են հեռաօրութիւնները եւ բոլոր խաղերը ունին իրենց խաղիւրը: Միւս հեռաձայնին առջև քեզի սպասողին լուր կ'ուզես ձգել, մինչդեռ իրարանցումը հոս դալու գինովութեան մը շարունակութիւնն է, կը կարծես, որ դեռ չես եկած, դեռ կը վառիս դալու տնկոյզ: Սթափէ՛ եւ տես...

Վաղպէն բեկուած օրտով մտիկ ըրաւ, հետեւեցաւ Լեւոնին շարժումներուն, տեսաւ թիւը եւ խառնաչփոթ իր զգացումներուն վրայ մէկէն ծիածան մը կարծեց բարձրացաւ: Սրբեց քրտինքը, մեղաւոր ժպիտով մը նայեցաւ եւ աչքերուն խոնարհումին հետ հոն, հինգերորդ յարկին մէջ տեսաւ Լեւոնը, որ արեւուն ճառագայթները աչքերուն, ծովուն բոյրերը մազերուն՝ նստած էր լուսամտիտիկն առջև, եւ ներքին բարդութիւնները լուսաօրման նուիրուած հերթական գիրքերէն մէկուն վրայէն ակնարկը մերթ վեր առնելով՝ կը վերծանէր մօտակայ ոտնաձայնիւր...

Վաղպէն քացաւ հեռաձայնը, որուն առաջին հունչին հետ զիմացիներ կոպուեցաւ իրեն: Սիրոյ եւ կարօտի իր տաք զեղումները կ'ընդմիջուէին երբեմն անձկալի հունչերով ու կ'աճեցնէին գէճքին ճառագայթները:

— Տեղտեմոնա՛, — պոռայ դարձեալ Լեւոն՝ զուարթ եղանակով մը:

— Սա խաղը պիտի շարունակե՞նք, թէ թատրոն պիտի խողանք, — ջղայնացաւ Հայկազ, որ ժիւլին ետևէն փութացած էր անոնց մօտ:

— Թատրոնը վերջացաւ, — բտաւ Լեւոն, — ճակոն անձնասպան եղաւ եւ Օթելլոն որոշեց չիեղզել սիրեցեալ Տեղտեմոնան:

Ըսաւ, եւ միւսներուն հետ քայից գէպի սեղան, բաներ մը փոփսալով անոնց:

Լեւոն հեղութեամբ եւ գոհունակ ժպիտով մը վերադրուեց իր աթոռը:

ՊՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Պ Ա Ր Ո Յ Ր Ս Ե Ի Ա Կ

Ե Ի Գ

Ե Ի Գ Ո Յ



Գ Լ Ո Ւ Խ Ա .

... Խնորեցի գնա՝ եւ ոչ գտի.
Կոչեցի գնա՝ եւ ո՛չ ետ ինձ գձայն...
... Ինչ բարեալ է անուն քո...

1.— Գարունն այս անգամ ձմրանը եկաւ,
Այն էլ հիւսիսում.
Եւ բարորակի՛ն չէի սպասում,
Զմեռն այս վկայ:
Քեզ չփնտռեցի՛, չը որոնեցի՛
Եւ... գտայ յանկա՛րծ,
Ինչպէս դու մի օր անունդ եւ գտել,
Օ Սուլամի՛քա:

2.— Օ Սու՛ւլ...
Սուլամի՛ք...
Օ Սուլամի՛քա.

Քո բիրիլական անունն եմ սիրում,
 Սիրում եմ, այն էլ բիրիլակա՛ն սիրով,
 Որ երբ իր նեղիկ բառէ շապիկն է աշխատում հագնել.
 Թւում է հիմա հեք-անուակա՛ն՝
 Նոյնիսկ անապրկե՛շտ,
 Բայց... նրա աչքում,
 Ում համար սիրոյ սրբութիւնն արդէն
 Դարձել է հագուստ սունակա՛ն օրուայ,
 Մինչ նա իմ միա՛կ շապիկն է. մսէ՛... .

- 3.— Եւ ես սիրում եմ քեզ՝ ամբողջովի՛ն:
 Իսկ ի՞նչ ես, ի՞նչ ես դու ամբողջովի՛ն,
 Եթէ ոչ մարմին,
 Ու նաեւ արիւն:
 Իսկ մնացածը՝ բառեր եմ միայն,
 Պա՛ղ-արհեստակա՛ն ու հապա՛ղ լեզուի
 Մի քարգմանութի՛ւն:
 Իսկ ես խօսում եմ մայրենի՛ լեզուով՝
 Աղամի՛ մման
 Ու Եւայի՛ հետ:
- 4.— Օ Սուլամի՛թա, օ, Սուլամի՛թա.
 Մե՛նք, կարծեմ, արդէն խնձորը կերանք,
 Քանզի նա, ով որ մտքով է տրւում,
 Տրւում է, անշուշտ, մարմնից առաւել...
 Ո՛ւր է դրախտը,
 Եթէ ոչ՝ միայն քո քարթիչների հովանու ներքոյ,
 Քո
 դեռ փակ
 ծոցում,
 որի գոները,
 Արդէն թակում են
 Եւ երկո՛ւ կողմից.
 Քո սիրտը՝ ներսի՛ց,
 Իմ ձեռքը՝ դրսի՛ց...
- 5.— Օ Սուլամի՛թա, բա՛ց արա դուռը:
 Ես քեզ չե՛մ փնտռել, քեզ չե՛մ որոնել,
 Ձե՛մ էլ հարցըրել ես պահակներից
 Քո
 Իմ չունեցած-չիմացած հասցէն:
 Ես համբորդի պէս,
 Ու մոլորուածի,
 Հասել եմ դուռը:

Որ եւ բախում է իմ ձեռքը դրսից,
 Քո սիրտը՝ ներսից:
 Ընդունիր հիւրիդ,
 Որ կը գառնայ տէ՛ր,
 Բայց նաեւ՝ ծառա՛յ...

6.— Եւ թո՛յլ տուր խօսել.
 Գրկելուց առաջ,
 Փարուելուց առաջ,
 Թոյլ տուր քեզ նայել
 Մի վո՛ժըր հեռուից:

Եւ թո՛յլ տուր կրկնել՝
 Համբոյրից առաջ,
 Համբոյրի մե՛ռն
 Կրկնել անունըդ.

— Օ Սո՛ւլ...
 Սուլամի՛...
 Օ Սուլամի՛քա...

Գ Լ ՈՒ Ն Բ.

... Գեղեցիկ ես իբրևս գերուսողեմ.
 «ԵՐԳ ԵՐԳՈՑ»

1.— Օ Սուլամի՛քա.
 Հապա շո՛ւս արի, որ ես քեզ տեսնեմ:

2.— Գեղեցիկ ես դու, ինչպէս բոլորը,
 Որոնց սիրում եմ,
 Եւ ո՛չ աւելի ու ո՛չ էլ պակաս:
 Ի՞նչդ է գեղեցիկ՝ ուրի՛շը կ'ասի,
 Մինչդեռ ինձ համար դու գեղեցիկ ես,
 Ինչպէս բոլորը, որոնց սիրում եմ:
 Եւ կախարդիչ ես, ինչպէս բոլորը,
 Որոնց չեմ տիրել:
 Ե՛ւ անսովոր ես,
 Քանի որ նոր ես,
 Ե՛ւ սովորական՝ քանի որ դու էլ
 Երբեք չես կարող չսիրած մնալ:

3.— Դու սեր ես՝ ինչպէս քո ժողովրդի դարաւոր բախտը,
 Եւ սերութեան մէջ՝ այնքան լուսաւոր,
 Որքան լուսաւոր անուն է տուել քո ժողովուրդը:
 Սեր են աչերբոյ՝ իմ աչերբի պէս,
 Եւ գիտեմ նայել այնպէ՛ս տրտմօրէն,
 Որքան տրտում է սիրտըս ա՛յն պահին,
 Երբ ինձ քուում է, քէ չե՛ս սիրելու: .

4.— Սեր են վարսերբոյ, ինչքան ներմակ է
 Դեռ փակ կուրծքը քո,
 Աւելի՛ ներմակ
 Միշտ անհալ ձիւնից իմ Արարատի
 Որ փրկեց Նային,
 Ուրեմն՝ եւ քե՛զ,
 Ի՛նձ ու... մեր սե՛րբը.
 Աւելի՛ ներմակ, քանի որ նրան
 Իմ աչերբի պէս եւ ո՛չ մի սեր աչք
 Դեռ չի ստուերել անգամ հայեացքո՛վ:

5.— Մի՛ լինիր այսքան... այսքան սպիտակ-
 Բացուի՛ր հայեացքիս եւ աչերբիս դէմ,
 Նաեւ մատների՛ս,
 Իւրաքանչիւրը՝ միս դարձած մի շոյ:
 Արեւառութի՛ն բնդունիր մի քիչ
 Իմ հայեացքի՛ տակ,
 Նաեւ մատների՛ս:

6.— Քո կրծքի նման ներմակ են նաեւ քո ատամները:
 Եթէ պարկեշտ ես՝
 Մի՛ ծպտա երբեք...

7.— Օ Սուլամի՛թա.
 Այդպէս ամաչկոտ շուռ մի՛ եկ ինձնից,
 Բայց շիկնի՛ր, շիկնի՛ր,
 Որ իմ նեղ խցում
 Արեւածագի պատրանքն զգամ ես:
 Շիկնի՛ր ու քո՛յլ տուր,
 Որ հետքդ խօսեմ՝
 Փարուելուց առաջ.
 Փարուելուց առաջ՝
 Մի փոքրը հեռուից
 Քեզ նայեմ այնպէս,
 Կարծես առաջի՛ն անգամն եմ տեսնում:

8.— Ա՛խ, այդ քո շիկնած այտերը մաքուր՝
 Քո քույր մազերով լուսապսակուած:
 Եւ քո շուրթե՛րը...
 Ինչո՞ւ է քոււմ,
 Թէ քո այտերին — առաջի՛ն անգամ —
 Հպուելը նոյնքա՛ն դժուար է հիւս,
 Որքան որ հնում հաւատափոխման — դարձի բերումը,
 Եւ ինչ համբուրելն — առաջի՛ն անգամ —
 Նո՛յնն է, ինչ մի նոր տանա՞ր աներել,
 Թէ՞ հիմնադրել մի եկեղեցի...:

9.— Քո պարանոցը՝
 Ազնիւ մարմարէ մի վե՛հ աշտարակ,
 Որտեղից — դարե՛ր — մարդիկ են կախուել՝
 Ինձ նմանե՛րը...
 Նման երջանիկ կախազանի դէմ
 Եւ չե՛մ բողոքում:

10.— Օ Սուլամի՛թա.
 Դու ամաչելոց շրջում ես ինձնից:
 Ա՛հ, քո կոնքերը քնար են լարուած:
 Դու չե՞ս կամենում, որ ամբողջ գիշեր
 Քնարը հնչի,
 Որ իմ մատները ողջ գիշերն ի լոյս
 Սաղմունե՛ր երգեն.
 « Օ Սու՛ւլ...
 Սուլամի՛...
 Օ Սուլամի՛թա... »:

11.— Օ Սուլամի՛թա.
 Տեսնո՞ւմ ես, քէ ինչ ինչպէս եմ սիրում.
 Առասպելական քո նախապապի՝
 Սողոմոնի՛ պէս:
 Նրա արիւնից մի՞թէ մի կաթիլ
 Յորձանք չի տալիս քո երակներում
 Որտեղի՞ց հապա
 Նրա արիւնը օտարի՛ս սրտում
 Ի՛մ սրտում, որ ինչ
 Սիրում է աչպէս՝
 Աստուածաշնչեան ա՛յնտեսակ սիրով,
 Որ երբ իր բառէ շապիկն է հագնում,
 Թուում է այսօր հեթանոսական՝
 Նոյնիսկ անպարկե՛շտ,
 Բայց... նրա՛ աչքին,

Ում համար սիրոյ սրբութիւնն արդէն
Գարձել է հագուստ տօնակա՛ն օրուայ :
Իսկ նա իմ միա՛կ շապիկն է. մտե՛ :

- 12.— Ես քեզ սիրում եմ քո նախապայի՛
Սողոմոնի՛ պէս,
Որ մի արքայ էր,
Միջնդեռ ես...
Գիտե՞ս,
Ես ինչ-որ չափով նո՛յնպէս արքայ եմ :
Ո՛չ նրա համար, որ ունեցել եմ
Հարկեր ու կանայք,
Ո՛չ էլ նրանով : որ ես կարող եմ
Երգ երգոց թողնել :
Եթէ ինձ համար թագուհի ես դու,
Ի՞նչ եմ ե՛ս հապա,
Ինչպէ՛ս ի՛նձ կոչել, եթէ ոչ արքայ, —
Այլ կերպ չի՞ լինում.
Թագուհիները ե՛րբ են պատկանել մանկլաւիկներին...

Գ. Ա. Պ. Ի. Ն.

Մտածք ինձ ի տուն գինոյ...
Վասնի խանդակաթ եմ սիրով...
«ԵՐԳ ԵՐԳՈՅ»

- 1.— Երուսաղէտում երբեւէ չեղած աղջիկներ՛ն խարտեաշ,
Իուստրե՛ր Հիւսիսի.
Ի՛նձ էլ սնուցէ՛ք կազդուրիչ գինով,
Քանի որ սիրուց ես նուազում եմ :
- 2.— Ես նուազում եմ, իսկ կրծքիս ներքոյ
Կախուած է նաեւ ծանրաքար մի քեռ՛
Սեփական սի՛րտըս :
Նա ծա՛նր է դարձել,
Եւ... ծանրը այնքա՛ն,
Որ հագիւ մի ցուլ իր մէջքին տանի :
Իսկ մինչեւ անգամ եթէ ցուլ եմ ես,
Այդ բեռը գոնէ մէջքի՛ս չեմ կրում,
Որ դիւրին լինէր.
Այդ ծանրութիւնը ներսումս է կախուած :
Երուսաղէտում երբեւէ չեղած խարտեա՛շ աղջիկներ,
Ինձ էլ սնուցէ՛ք կազդուրիչ գինով,
Քանի որ — տեսէ՛ք — միւսում եմ արդէն
Սեփական սրտիս ծանրութեան ներքոյ :

- 3.— Երուսաղէմում երբեւէ չեղած խարտեա՛ջ աղջիկներ,
 Դուստրե՛ր Հիւսիսի.
 Երուսաղէմում երբեւէ չեղած
 Երուսաղէմի դուստրը սեւահեր
 Ի՛նձ չի պատկանում:
 Նա կայ եւ չկայ՝ ինչպէս երկինքը,
 Իմն է — իմը չէ՝ ինչպէս որ ինքը...
- 4.— Ողջ գիշերն ի յոյս իմ մահակալին
 Փնտռում եմ նրան, չեմ գտնում սակայն,
 Ողջ ցերեկն ի բուն իմ նեղ սենեակում
 Կանչում եմ նրան, եւ ձայն չի տալիս:
 Եւ դուրս եմ գալիս,
 Որ փողոցներո՛ւմ որոնեմ նրան:
- 5.— Երուսաղէմում երբեւէ չեղած աղջիկնե՛ր խարտեա՛ջ,
 Դուստրե՛ր Հիւսիսի.
 Երուսաղէմում երբեւէ չեղած
 Երուսաղէմի զստերն եմ փնտռում,
 Փնտռում եմ նրան եւ փողոցներում,
 Փնտռում եմ նրան նաեւ ձեր դէմքին,
 Գտնում եմ մի մա՛ս, մի նշո՛յլ, մի շո՛ղ,
 Իսկ իրե՞ն՝ բնա՛ւ:
- 6.— Երուսաղէմում երբեւէ չեղած խարտեա՛ջ աղջիկներ,
 Թէ պատահաբար հանդիպէ՛ք նրան՝
 Երուսաղէմի թխահեր դստեր,
 Ի՛նչ պիտի ասէ՛ք:
 Երդուեցնում եմ ձեզ. ասացէ՛ք նրան,
 Որ եւ հիւանդ եմ կարեւկէր սիրով:
- 7.— Ասացէ՛ք նրան, որ սիրում եմ եւ
 Նրա անծանօթ մօրը սիրելի,
 Նրա դարաւոր արիւնն եմ յարգում,
 Ինչպէս յարգում եմ յղիութիւնը:
- 8.— Երդուեցնում եմ ձեզ. ասացէ՛ք նրան,
 Որ սէրն իմ հին է ու վազընչական՝
 Իր բազմադարեան
 Հրէական արեան
 Եւ նոր՝
 Նոր գարթնած իր սրտի՛ նման, —
 Հին ու նոր՝
 Ինչպէս առաւօտն ինքը:

9.— Դուք լսում էք ինձ, խարտեա՛շ աղջիկներ:
Դուք գիտե՞ք արդեօք, թե ի՞նչ եմ ուզում,
Որ ասե՛ք նրան՝ այդ սեւահերթին:
Երդուեցնում եմ ձեզ, ասացե՛ք նրան,
Ուզում եմ լինի նա սերն իմ վերջի՛ն,
Իսկ ես էլ՝ նրա առաջի՛ն սերը:

10.— Երուսաղեմում երբեւէ չեղած աղջիկներ՝ խարտեաշ.
Թե՛ իմ փոխարէն դուք պատահաբար հանդիպե՛ք նրան՝
Երուսաղեմի մրահոն դստեր,
Ասացե՛ք, որ նա մի փակ այգի է,
Այգու մէջտեղում՝ ղոնփակ հնձան,
Բուրոզ հնձանում՝ եռացոզ գինի,
Իսկ դուք, բարիներ, սնուցում էք ինձ
Ուրի՛շ մի գինով,
Որպէսզի սիրոյ անյազ ծաբաւից
Ես չնուաղեմ:

11.— Երդուեցնում եմ ձեզ. ասացե՛ք նաեւ,
Որ եթէ յանկարծ նա ինձ որոնի,
Եթէ իմ դուռը նա բախի յետոյ,
Եւ նոյնիսկ կանչի՛
Ինձ ձա՛յն տայ սիրով՝
Կը լսի միայն
Իր խօսուող ձայնի արձագանգը թոյլ.
Կեանքի եւ սիրոյ եզերքին բնկած
Խեցին կա՛յ,
Սակայն...
Անփոփոխ խեցու խեղճ բնակիչը
Յափշտակուած է օտար գազանից
Եւ կամ թաղուած է իր քարէ բնում...

12.— Երուսաղեմում երբեւէ չեղած աղջիկներ՝ խարտեաշ,
Թե՛ յանկարծ տեսնե՛ք Երուսաղեմի սեւակըն դստեր,
Աւելացրե՛ք,
Որ առայժմ ես ննջում եմ ամուժ,
Բայց դեռ արթում է սիրտըս նուաղուն:
Թող նա շտապի՛,
Թե՛ չե՛ կ'ուշանա՛յ:
Թե՛ չե՛ կը լսի
Ոչ թէ իմ կանչը,
Այլ վերջին նի՛շը...:

ԳԼՈՒԽ Դ.

Ահեակ նորա ընդ գիտով իմով.
Ե՛ւ աչ նորա պատեսցէ պիտեւ...

«ԵՐԳ ԵՐԳՈՅ»

- 1.— Եւ դու չուշացա՛ր.
Դու շտապեցի՛ր,
Իմ Աս՛ւլ...
Սուլամի՛...
Իմ Սուլամի՛թա...
- 2.— Իմ Սուլամի՛թա.
Երկար վազէ՛վազ՝
Եռամեայ կայտառ գամբիկի նման,
Եւ գամբիկի պէս գեղեցիկ՝ եկա՛ր:
- 3.— Եկա՛ր... եւ իսկոյն, իմ Սուլամի՛թա,
Հազարամեակներ իմ ու քո միջեւ ասես ջնջուեցին...
Ես այգի չունեմ,
Որ հիմա քեզ պէս դալար վագրից
Կողերիդ համար մահին պատրաստեմ:
Ես այգի չունեմ... եւ այգի՛ս չեկար:
- 4.— Մայքե՛ր կամ իմա
Ու գորշ քաղաքնե՛ր,
Շէնքե՛ր քաղմայարկ,
Նրանից մէկուս՝
Սենեակ մի նեղլիկ:
Դու այնտե՛ղ եկար:
- 5.— Եկար փարուեցիր՝
Քո ամբողջութեա՛մը:
Մամուռն է այդպէս քարերին փարում,
Եւ արշալոյսի գոյները՝ երկնին:
Ու ես այդ պահին զգայում էի՝
Ինչպէս քո մա՛շկը,
Եւ մա՛խը էի՝
Ինձ վրայ յառուած հայեացքի՛դ նման:

- 6.— Եւ դու բացուեցի՛ր...
Այդպէս բացում է մահնում երեխան,
Մթնում՝ ծաղիկը:
Ու ես այդ պահին՝
Քն անմեղութեան բոյրերից արբշիտ՝
Մոռացայ իմ ողջ անցեալը հարուստ
Ու երջանկացայ իմ... ազնատութեամբ:
- 7.— Ու տրուեցի՛ր դու՝
Ծնուելով նորից:
Այդպէս սրում է հողն արմատներին,
Իր հունին՝ ջուրը:
Ու ես հասկացայ, որ ես ո՛չ մի տեղ
Այնքան չեմ գգում իմ գոյութիւնը,
Որքան քո՛ գրկում:
- 8.— Ես այլ բան չէի,
Քան մի ապակի:
Որ թափանցիկ է — լոյսը չի բեկում:
Եկար ու նրան ամալգամ դարձար,
Եւ ինձ դարձրիր դու մի հայելի,
Ուր անդրադարձաւ սէրդ երփներանգ...
- 9.— Իմ սէրերն իրար կ'ու նման էին,
Ե՛ւ նման չէին,
Ինչպէս աշխարհի մեծ ֆազաֆները:
Եկաւ սէրը քո
Եւ ծննդավա՛յր դարձաւ ինձ համար...
- 10.— Իմ Սո՛ւլ...
Սուլամի՛...
Իմ Սուլամի՛թ-ա:
Քիչերը կարծես իր սկիզբն առաւ
Քն թուխ վաքսերից
Ու ծաւալուելով՝
Վերբասին եկաւ խառնուեց նրանց,
Երկինքը նորից
Զբաղուեց աստղեր սեղաշարժելով,
Քայց մենք չտեսանք ո՛չ այս, եւ ո՛չ այն,
Քն գլխի տակ էր իմ ձախը դրուած,

Եւ ին մէջքն էի պատել իմ աչով.
 Ձկա՛ր ժամանակ,
 Ձկա՛ր նաեւ միտք.
 Կար շնչառութի՛ւն,
 Որ շատ էր նման
 Ովկիանոսների տուրետառութեա՛ն...

Գլխի՛ն Ե.

Ես ննջեմ, եւ սիրտ իմ արթուն կայ...
 Ի՛ր գեա իբրեւ վկնիք ի վերայ սրտի
 Քո... վստիկ հյօր է իբրեւ զմահ սեր...

«ԵՐԳ ԵՐԳՈՅ»

Լա ես երկու, քան զմի... զի եթէ
 ննջեսցեն երկուք՝ ջեռուցանեն զմիմեանս,
 իսկ մին՝ զհա՛րդ ջեռուցու...

«ԺՈՂՈՎՈՂ»

1.— Իմ Սո՛ւլ...

Սուլամի՛...
 Իմ Սուլամի՛թա:

Ես այլ բան չէի,
 Քան մի ապակի,
 Որ թափանցիկ է — լուսը չի բեկում:
 Եկար դու դարձար նրան ամալգամ,
 Եւ ինձ դարձրիր դու մի հայելի,
 Ուր անդրադարձաւ սերրդ երփնեբանգ:
 Հիմա դու չկա՛ս,
 Ու ես վերջստին
 Անա հայելուց ապակի դարձայ՝
 Մի սովորակա՛ն — աննե՛րկ ապակի,
 Որ թափանցիկ է — լուսը չի բեկում...

2.— Ինձ արդէն վաղա՛ւց այնպէս է թւում,

Թէ ես մնջում եմ, իսկ սիրտս արթուն է:
 Եւ փնտռում եմ քեզ,
 Սակայն չեմ գտնում,
 Ու կանչում եմ քեզ,
 Բայց ձայն չես տալիս.
 Տարածութիւնն է ընկած մեր միջեւ,
 Ինչպէս մի սահման,
 Որ բաժանում է
 Երկու թշնամի երկիր մէկմէկուց:
 Իսկ մենք — թշնամի՞...



- 3.— Գարունը նորից
 Իր վտանգաւոր ֆարոզն է կարդում,
 Կոչեր է անում ինչ-որ նոր սիրոյ,
 Եւ չի հասկանում,
 Որ վտանգաւոր իր ֆարոզի դէմ
 Թէ ես արքունն եմ՝ իմ սիրտն է քնած:
- 4.— Հեռու ես, եհու՛ւ,
 Ու ձայն չես տայ ինձ՝ որքան էլ ձայն տամ:
 Դիտե՛մ, որ չկա՛ս,
 Ու չե՛մ գտնի քեզ՝ որքան էլ փնտռեմ:
 Բայց... մի՞թէ սրտին բան կը հասկացնես:
 Խորից ակամայ ելնում եմ փողոց,
 Սանրոզ հայեացքով իմ շուրջն եմ նայում:
 Մայքերը լի են ժպիտ-ծիծաղով,
 «Ներողութիւն»ով ու «համեցէ՛ք»ով,
 «Տեսեսութիւն»ով ու «բարեւ»ներով.
 Բայ՛րն այստեղ են — իրենց տեղերում,
 Միայն դո՛ւ չկաս — իմ սիրտն է քափուր...
- 5.— Եւ նո՛ր հասկացայ,
 Որ ես էլ, գիտե՛ս, ես էլ եմ նախանձ:
 Նախանձում եմ ես սիրող գոյգերի՛ն,
 Շրջում են գրկուած, ձեռք-ձեռքի, կիսկ-կից:
 Մեմակ եմ լոկ է՛ս,
 Դո՛ւ չկաս, լոկ դո՛ւ:
- 6.— Ձեռքիս ավերը հայտել են ուզում:
 Ո՛ր է կրակը.
 Քո ձեռքը չկայ:
 Մատներս ուզում են լոյս ու շող հունցել.
 Ո՛ր են ուսերըդ,
 Եւ լանջող ռ՛որ է:
- 7.— Եւ ամէնուրեք ծաղիկ են ծախում,
 Սիրա՛ծ ծաղիկըդ:
 Ես ո՞ւմ նուիրեմ:
- 8.— Հեռախօսային խցերն ազատ են,
 Եւ խօսափողի կեռերը բոլոր
 Ձորս կողմից ինձ են հարցական նայում:
 Ո՛ւմ զանգահարեմ, եթէ դու չկաս:

- 9.— Ու էս պատուած եմ
Մեր անցած օրուայ յուշերով այնպէս
Ինչպէս Պոմպէյը՝ սառած լաւայով:
- 10.— Եւ ինձ վրայ են լոյս աւ ստուերը՝
Ա՛յժըմ եւ ընդմի՛շտ:
Ա՛յժըմ եւ ընդմի՛շտ
Այդ քո ստուերից աւ լոյսից՝ արդէն
Շերտաւոր եմ ես,
Ինչպէս յովազը:
- 11.— Ա՛խ, երանի՛ թէ
Իմ տառապանքը բռնագրբաւեն
Եւ անմիջապէս հանեն անուրդի՝
Ցանկացա՛ծ գնով:
Եւ ո՛ւր էր յանկարծ ձերբակալէին
Ու տային դատի
Կարօտ յարջորջուած այս յանցապարտին:
Իսկ այս յուշե՛րք,
Որ կենդանի են կենդանի մարդուց,
Ինչո՞ւ չեն կարող
Յանկարծ ենթարկուել աւտոաղէտի...
- 12.— Իմ Սո՛ւլ...
Սուլամի՛...
Իմ Սուլամի՛թա-
Առանց քեզ ապրելն այնքան է հիմա
Անհասկանալի աւ տարօրինակ,
Որքան սառույցի կամ ձիւնի վրայ
Վառուող խարոյկը:
Ու էս ապրում եմ՝
Այդպէ՛ս վառուելով:
- 13.— Դու կարծես չկաս
Ու չես լինելու,
Այլիւս ինձ համար մեռած էս կարծես:
Սակայն էս գիտեմ,
Որ դու ամմահ ես,

Ինչպէս անմահ է կրակն աշխարհում.
 Այստեղ կը հանգչի,
 Կը վառի այլուր:
 Եւ դու — ինձ համար — չե՛ս մեռնի երբեք,
 Ինչպէս չի մեռել
 Քո նախա-նախա-նախամայրիկը,
 Որ քո սիրելի անունն էր կրում,
 Իմ Սուլամի՛թա:

14.— Եւ ուզում եմ ես փորձըս մոռանալ,
 Ահաւոր փորձքը իմ ամբողջ կեանքի,
 Եւ ի հակառակ՝ անկասկած ասել,
 Որ կը մոռանայ շունը տիրոջը,
 Ծառն՝ իր ծաղկելը,
 Ցուլն՝ իր բառաչը,
 Եւ ժամապահն՝ իր նշանաբանը,
 Սակայն ո՛չ ես՝ քե՛զ,
 Իմ Սուլ...
 Սուլամի՛թ...
 Իմ Սուլամի՛թա...

Պ. ՍԵՒԱԿ

1957 Դեկտ. 1960 Մայիս
 Մոսկուա



Կ. Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

ՀՈՐԻԶՈՆԷ ՀՈՐԻԶՈՆ

Դ.

Ուսուցիչը նոր մարդ մը դարձած էր :
Գրադէտը անսահման հորիզոն մը բացաւ իմ առջեւ : Հոգեկան ապ-
րումները, որոնց թրթռացումներն անսահման են, գրիչս չի կրնար պատ-
կերացնել :

Կայ նաեւ աւելի լուրջ ցնցումը, որ այդ օրերուն ճամբաս կտրեց, նոր
ճանապարհներու դուռներ բանալով առջևս :

Դպրոցի բակի իմ բնակարանս եկան երեք անձնաւորութիւններ, որոնց-
մէ մէկը մեր լուրջ ուսուցիչներէն էր : Երեսուն տարեկանէն վեր այս հիւրե-
քը սուրճ խմեցին, ծանօթացման քանի մը բառերու փոխանակութեամբ :

Ապա՝

— Ընկեր Ստտունի, — խօսողը դերձակ, բայց զարգացած ծանօթ
դէմքն էր այդ միջավայրին, — Դաշնակցական Մեկուսի Կոմիտէն մեզ դրկեց
մօտը, խնդրելու որ մեր Մարմնին մաս կազմես...

— Ինչպէ՞ս իմացաք, որ ես կուսակցական եմ : Գիտէք, այս օրերուն՝
յեզափոխական կեանքը որքան զաղտնի է :

Ոտքս կտրեց տոաջարկ բերողը .

— Դանիէլ լեանը Չարդինէն մեզի դրկած է Դուրան-Բարձրաւանդակի
մէկ նամակը, ուր կը թելագրեն օդտագործել ձեր ուժերը :

— Հիմա ըսելիք չունիմ, հիմա կը հաւատամ ձեր խօսքին : Ձեզի հետ
եմ. ինչ որ հրահանդէք, պատրաստ եմ կատարելու :

— Մեր դադանի Մարմնին անդամ պիտի ըլլաս, ու միասին պիտի
դորձենք :

— Սիրով կը մասնակցիմ ձեր դործին : Ոտքը վերջացնենք, անցնինք
գործին...

**

Պանդավառ ու գործօն Մարմինը գտայ գաղտնի ժողովատեղին :
Ձենքի փոխադրութիւն : Յեղափոխական բռնկումներու բռնուած հայ-
կական լեռներէն հասած փախստականներու պահպանում : Բանտարկուած
հերոսներուն օժանդակութիւն : Կորովի երիտասարդներու կազմակերպում :
Մնացած բաղձապիտի աշխատանքները ընթերցողը թող չարէ իրարու ետե-
ւէն . . .

Ուրեմն, տանեւեօթ տարեկանիս, արդէն ազատագրական շարժում-
ները ապրող, տնոց ընթացք տուող զինուոր մըն եմ : Անխախտ հաւատքով :
Մահ կամ ազատութիւն :

Այժմ, երբ իմ ճերմակ մաղերով Մասիսի գաղաթին նստած ու սառ-
ցային բարձունքէն աշխարհին կը նայիմ, պաղարիւն հանդարտութեամբ կը
յիշեմ երիտասարդական օրերս, երբ արծիւի թռիչքով կ'անցնէի Մասիսի
գաղաթէն գէլպի Մովսասար՝ արիւնի ժայթքումը սրտիս մէջ, սատոյցները չէի
տեսներ, սառելու գաղափար չունէի . . . ճամբորդը, որ այդքան լեռներ կըտ-
րեր-անցեր էր, նոր հորիզոններու դիմացը կը գտնէր ինքզինք :

Իմ հողիս ճամբաներ կտրելով, անզուսպ ջրվէժի մը պէս, զիս կը մղէր
անվերջանալի շարժումներու :

Գրականութիւն, ազատագրական պայքար, ուսուցչութիւն :

Գումարեցէք իրարու վրայ դէպքերը, գրելու երազանքը, աշակերտու-
թեան հետ սպրեւու հրճուածքը, հայոց աշխարհը ազատելու անզուսպ ձր-
տումը : Մտէք սրտիս մէջ, ուր սէր կայ, կիրք կայ, բարութիւն կայ, եւ՝
այնեկոծ ծոխուն մէջ պիտի գտնէք դուք ձեզ : Ինչպէ՞ս ներկայացնեմ այս
ծովը : Որքան տարածութիւն կրնամ գրուել այս դրելով :

Լաւը այն է, որ ձեզի թողում այս վազքը, սիրելի ընթերցողներ, ու
ես ճանապարհս շարունակեմ : Թերեւս օր մը իմ շատ սիրած տեղը հասնիմ . . .

— Ո՞ր է այդ շատ սիրած տեղդ, — պիտի հարցնէք՝ մտովի փնտըր-
տութեով :

— Մի հարցնէք ու փնտըք. սպասեցէք այս գրուածքի վերջին հաս-
ւածին : Պատումս պիտի կատարեմ, եթէ երակներուս հոսումը շարունակե-
իր ճամբան :

**

Դառնամ բարեւս տամ ողջ եղողներուն, երկար կեանք մաղթեմ իրենց ,
ու վերագառնամ ճանապարհս շարունակելու : Անշուշտ օր մը, այդ ճանա-
պարհներուն միայ, իրարու պիտի հանդիպինք :

**

Տիրապէջիր կեանքս բարդացաւ :

Տարիքոտ մարդ մը դարձայ :

Ձեմ ուզեր, որ ընթերցողը այս զգացումը վերադրէ դրական առաջին
թալիերուս, կամ ուսուցչական դիրքիս եւ կամ կուսակցականի գաղտնի դե-
րիս : Ճիշդ է, որ այս գործերը անհուն հրճուանքով հողիս կը պարուրէին,
բայց տարիքս չէիմ մեծցներ :

Պատահմունքը միշտ անսկզկալ մը կը բերէ իրեն հետ : Ու այդ փոփոխութիւնները պատահեցան տարեվերջին :

Դպրոցը փոխեցի ու ուսուցիչ ընդունուեցայ Ս . Կիրակոսի դպրոցը , որ հազարէ աւելի աշակերտութիւն ունէր :

Հայրական դպրոցում մը առաջացած էր մէջս : Մօրս խօսքերը մտքիս մէջ աւելի դարձան :

— Դուն հօրդ տեղը պիտի բռնես . . .

Այսպէս ըսած էր հայրս իր մահուան օրը , երբ ես դեռ տասը տարեկան էի : Այդ մտածումը զիս մղեց վճռական քայլի մը : Որոշեցի երկու փոքր եղբայրներս (Արմէնը եւ Սեդրակը) Տիարպէթի դպրոցը փոխադրել եւ առնոց ճանապարհ բանալ աշխարհէ աշխարհ :

Արձակուրդին վերադարձալ Սասունի մեր դիւղը : Հրճուանք ու վայելք շատ ապրեցայ : Բոլորին գուրդուրանքին առարկայ էի : Մտածումս իրականացնելու մասին կը մտնայի :

Օր մը , երբ երեք մեծ եղբայրներուս հետ սեղան նստայ , մայրս տեսայ կողքին ու ծանրութիւն կենցառածքով մը խօսքս ուղղեցի անոր ու եղբայրներուս .

— Այս տարի միտք ունիմ Արմէնն ու Սեդրակը դիւղի նախակրթարանէն հանել եւ հետո տանիլ Տիարպէթի . հոն կատարեալ կրթութիւն մը կը ստանան , ի՞նչ կ'ըսէք :

Իրարու երես նայեցան : Դարձան մօրս .

— Դուն ի՞նչ կ'ըսես , մայրի՛կ :

Մայրս , զի մը արցունքոտ աչքերով , ուրախութիւնը դէմքին՝ բացառեբանը .

— Կարոյի խօսքը թող ըլլայ : Գիտէք , թէ ան իր հօրը տեղը բռնած է . . .

Որոշումը կայացուած էր :

Ու ես , փոքր եղբայրներս հետս առած՝ մեծ եղբորս մեծաքանակ կարուստին հետ ճամբայ կ'ելլէի :

Այդ թուականէն ետք , թէեւ տարիքս տասնութի մէջ մտած էր , սակայն ինքզինքս քառասուն տարեկան հայր կը զգայի :

Հայրական զգացումներով տողորուն մարդը եւ պատանի սխալաբար իրարու կողքին կը քալէին հուրանա մէջ :

Ծանապարհներու գաղտնիքը ո՞վ կրնայ լուծել :

Ինծի կը մնար շարունակել ճանապարհը ու անցնել հորիզոնէ հորիզոն . . .

**

Կեանքի փոփոխութիւնը երբեմն փոքրիկ ու սովորական եղելութեամբ նոր հորիզոններ կը բանայ հրեաստարդի մը համար :

Իմ կեանքի փոփոխութիւնները յանկարծական երեւոյթ ունէին : Սակայն երկաթեայ կամք մը ունէի՝ հորիզոնէ հորիզոն անցնելու որոշակի մտածումներով :

Այս դպրոցին մէջ արդէն փորձառու ուսուցիչի մը դերքը կը պատկերէի :

Երբտարագ մըն էի, հազուած միշտ Գալուստ Անդրէասեանի շիբոթեամբ:

Մայրս առատ դրամ արամազրած էր, որպէսզի փոքր եղբայրներս լուսանային: Ու կը պահէի լուսնի խնամակալի մը վարձուքով:

Ասոնք դրսերեւոյթն էին իմ կեանքին:

Կային Մեկուսի Կոմիտէին բազմապիսի աշխատանքները: Գաղանի ժողովները: Բանտի այցելութիւնը, որ սիրտս կը լեցնէր: Խարբերդէն Տխարպէքերի բանտը փոխադրած էին Վարդգէս Աէրէնկիւրեանը, Վանի ազատազրական շարժման վարիչը: Վանի ընդհարման ընթացքին ծունկէն վերաւորուած էր եւ շարժիչ չկարենալուն հետեւանքով՝ ձերբակալուած էր: Հոն չէին կըրցած պահել ու իսխադրած էին Խարբերդ, անկէ՛ Տխարպէքեր, ուրկէ փոխադրուած անկարելի կը թուէր:

Ու ես դարձայ բանտի այցելուն:

Մեկուսի Կոմիտէին օչնութիւնը պիտի հասցնէի Վարդգէսին եւ իր մարտական ընկերներուն: Վարդգէսի խորհուրդը պիտի առնէի՝ մեր դործերը ծառայելու համար: Վանէն ու Դուրան-Բարձրաւանդակէն ստացուած լուրերը պիտի հաղորդէի ազատազրական շարժման այս նուիրեալներուն: Ու անոնց թելադրանքները պիտի զրէի հայկական լեռնաշխարհը թնդացնող անձնագոհներուն:

Անբնական շարժում: Նոր ճամբաներ կտրուելու մտաւան կամք:

Օրերը թող անցնին իրենց առօրեայ ճանապարհով: Մենք մեր ուղիքն պիտի անցնինք անկէ կերպով:

Այդ օրերուն, պատահեցաւ զէպք մը մեր Մարմինն մտնում: Մտաւորական տնեւոր մը լինչի ենթարկուեցաւ կէս գիշերին, երբ լամբարը ձեռքը՝ սուն կը դռնար: Մեծոգը մշտի մարտիկ Աւետիսն էր: Մեծուողը՝ թուրք կառավարութեան գաղտնի տեղեկատուն: Տեղացի հայութիւնը ասելութեամբ կը նայէր անոր:

Վատութիւն գործողին փառաւոր ծեծ մը տուած էր Աւետիսը:

Յաջորդ օրը, իմ սենեակիս մէջ ժողով կար: Հոն էին Մարմինն անդամները եւ մեր գործին համակրանքով կապուած քանի մը ուսուցիչներ:

Գիշերուան ժամը սասն էր, երբ մեր դուռը բախեցին: Տանտիկինը վեր եկաւ.

— Ոստիկաններ են, քեզ կ'ուզեն:

Մեռելական լուսութիւն տիրեց սենեակին մէջ: Ես վար իջայ... Գիշերանոցով նստած էի ընկերներու քով: Ձիս գիտեցին քիչ մը շուարուն: Դեռ մազ չունէի քթիս տակ: Երևի մտածեցին, թէ սխալ ցոյցմունք եղած էր:

Ոստիկաններու վարիչը մտայլ զէմքով ըստ.

— Հաղուսաները հազուէ, մեղի հետ պիտի դաս:

Անխօս՝ վեր ելայ. մատով զգուշացուցի, որ ձայն-ծայտուն չհանեն: Հաղուսաներս հազայ ու անմիջապէս վար իջայ:

Ոստիկանատուն տարին պիս:

— Դուն հոս տեսնո՞ւմք կը կատարես: Սա օտարացի բանտ տարէք...

Իմ հելուրը, գիշերուան լուսութեան մէջ, կըցած էին իրենց սուները հասնիլ: Իսկ կէս գիշերը արդէն անցած էր, երբ ես բանտի դուռնէն ներս կը մտնէի:

Երեք օր ու երեք գիշեր ասնջալից ժամեր անցուցի, բայց ներաշխարհով ուրախ էի. կը զրայի, թէ ազատազրական ճանապարհի վրայ եմ:



Երեք որ ետք, զիս յանձնեցին ոստիկանի մը եւ քիւրտ ջորեպաններու :
— Գուն ձեր դիւղը կ'աքսորուիս . առանց կաւտոյարութեան արտօնադրին այլեւս որեւէ անց երթալու իրաւունք չունիս :

Լուր դրկեցի փոքր եզրայրներուս , որ դպրոցը շարունակեն : Իմ աքսորէն եւ զիւղ երթալէս տեղեակ եղան մեր Մարմնի անդամները եւ պէտք եղած խորհուրդներն ու ցուցմունքները տուին եզրայրներուս , որոնք 13 եւ 15 տարեկան էին :

Հիմա աքսորական մըն եմ իմ սիրելի գիւղին մէջ :

— Գրէ յուշերդ : Այս քանի մը տողերը ծաւալէ իր ներքին բովանդակութեամբ , ու ծաւալուն գիրք մը կ'ըլլայ :

— Ինչպէ՞ս գրեմ . . .

Պատասխանը ես ինծի կու տամ , միշտ ներքին մտածումներով : Իբրեւ ուշացած պնտուր՝ դուն գունաւոր դրօշներ միայն բարձրացուցի՞ր ճանապարհներուդ վրայ , վստահ՝ որ զայիք նոր բանակները այս անցորդին հոգին ու կամքը պիտի ըմբռնեն :

* *

Աքսորական . . .

Բարերախտաբար՝ հայրենի գիւղին մէջ :

Աքսորը ճանապարհներս կը փակէր , իսկ հայրենի գիւղը հողիս խայտանքով կը լեցնէր :

Մանկութիւնս կ'ապրէի : Ճանապարհի յոյս չկար : Գեանքի ճամբաները կը դիտէի հրճուանքով : Մեր տունը լեցուած էր տասնեակ մը երեխաներով : Գիւղը լեցուն էր երեխաներու ճիւղով : Փամանակի իմ ընկերները ծանրաբայ երիտասարդներ էին , ոմանք արդէն ամուսնացած , ոմանք նշանածներ հետապնդող : Հարսները զեղեցիկ ու ժպտուն էին , երբ գիւս կը տեսնէին իմ տարագրին մէջ : Մարդկային այս ծաղկաստանին մէջ , բոլորովին տարբեր ձեւի ու գոյնի ծաղիկ մը կը նկատուէի իմ ինքնայատուկ հուրօտքով :

Իրացի աղջնակները , հարս դարձած՝ երբ կ'անցնէին շորտալէն , կանգ կ'առնէին եւ մինչեւ իրենց ականջները կարմրած , մեղմ ձայնով կ'ըսէին .

— Իարով ես եկեր . . .

Ու ես մեծահասակ հօր մը պէս կը ժպտէի .

— Արդէն զեղեցիկ օրերդ մը եղած ես . լաւ նշանած մը գտիր :

Աղջնակը կարմրած՝ վազքով մը փողոցի դարձուածքէն վեր կը վազէր :

Ո՛վ զրացումներու ծով շունի :

Ինչ ապրումներ ունէին այս աղջնակները , երիտասարդի հովեր տաած պատանիները . գումարեցէք իբրաւս վրայ ու գուք կ'ունենաք փոթորկալի ծով մը . . .

Որքա՞ն սրտի ծովեր ցածքած են , առանց թուղթի կտոր մը ձգելու . . .

* *

Թուրք բռնակալութեան տաժանըր ծանօթ էր մեղի . մենք ամէն օր կ'ապրէինք Մահ կամ ազատաբիւն ներապրումով : Շատերը դացին եւ մահը նկատեցին անմահութիւն : Ու հիմա , մենք այդ ճամբան կը շարունակէինք , բոլոր հնարքներուն դիմելով :

Ու ես աքսորականի տառապանքը կ'ապրէի :

Աքսորական: Գիւղին բանտարկեալը:

Այդ կեանքը իմ նկարագրին անյարիր էր: Լեռներ բարձրանալ եւ երկտասարդ Փետայու գէրն ստանձնելը անկարելի էր, ոտքիս կոտրուածքին պատճառաւ: — Ուր, մարմնիս մէկ մասնիկը: Բայց տրամաթիք պատմութիւն մը ունի: Վէպ մը պիտի չգրեմ այդ մասին, բայց անիկա իր առանձին էջը պիտի ունենայ այս գրուածքին մէջ: Ողբերգութիւնը իմաստ ունի, երբ երջանկութեան կը հակադրուի: Ոտքիս պատմութիւնն ալ թող իմ ողբերգութիւնը ըլլայ...

**

Կացութիւնը, զոր կ'ապրիմ իբրեւ բանտարկեալ, գիւղիս հրճուալից ապրումները կը սպաննէ հոգիիս մէջ: Անհամբեր եմ դուրս դալու:

Մեծ եղբայրս կը պատրաստուի մեկնիլ դէպի Տիարպէքեր, ուրիչ էս աքսորուեցայ: Քառասուն ջորիներ ու ջորեպաններ արդէն պատրաստ են ու բռնեցը տեղաւորելու մեծ աշխատանքին մէջ:

Մօրս ու եղբայրներուս հետ կը խորհրդակցիմ: Կ'ուզեմ կարաւանին միանալ: Եղբայրներս մտահոգ են, կը մտածեն, թէ կրկին կրնամ բանտ իրնալ եւ այս անգամ երկար ժամանակով:

Ես միտք ունիմ անցնիլ Տիարպէքերէն Պէյրութ եւ մտնել բժշկական համալսարան: Հոն, թերեւս, հնարուոր ըլլայ նաեւ ստքիս դարմանումը:

Մայրս ու եղբայրներս կը համաձայնին:

Մեկնումէս քանի մը վայրկեան առաջ, մայրս դիտ կը կանչէ Անրախ տունը, իր պառնիսն ու հինգ հնչուն սակի կը կարէ ներսի շապիկիս թելին տակ:

— Տղաս, եղբայրդ քու ուսման եւ սպորտի ծախքերը պիտի տայ, երբ Տիարպէքերէն ճամբայ ելլես: Այս քանի մը սակին վրայ կը մնայ: Փորձանուտ ճանապարհներ են, ով գիտէ, նեղ օրերուն քեզ կը փրկէ...

Մարմարէն կը խօսի: Մօրս կատարածը բնաւ տարօրինակ չեմ նկատեր: Այլ կը մտածեմ, թէ եղբորս սուսած գումարին վրայ յաւելեալ դանձմ մը ունիմ: Այն օրերուն հինգ հնչուն սակին կէս տարի կրնար բաւարարել մէկը:

Լէյլանը տակս է, ու ստեղծ թափ կու տայ: Կը բռնենք Տիարաւանկերտի եւ Տիարպէքերի ծանօթ ճանապարհը: Կարաւան: Քառասուն բռնատար ջորիներ, ջորեպաններ ու հինգ ձիաւորներ մթնոլորտը կը գողգողանեն: Յուիքին վրայ, մայրս կեցած է արձանի պէս, ու իր հին սովորութեամբ երթաւ բարովի նշանը կ'ընէ ձեռքի շարժումով: Ձեռքս կը շարժեմ ու ծառերուն տակ կ'անցնիմ:

Կրկին արցունք կայ աչքերուս մէջ կուտակուած: Հիմա հեռու հորիզոններ պիտի անցնիմ, ու թերեւս երկար ժամանակ մայրս չտեսնեմ:

Ես բռնած էի արդէն կարօտի ճանապարհը...

**

Ազատագրական յեղափոխութեան դաժան օրերը կ'ապրինք: Ընդհարումներ՝ ամէնօրեայ: Հերոսներու նահատակութեան լուրերը սիրտերը կ'ալիկոծեն:

Անմահները ինչպէ՞ս մահացան:

Հարցումները մեր ժողովուրդին օրտի ճիշերն են : Յնցում, ափսոսանք, ու նաեւ՝ սրտի հպարտանք : Մուգն ու հպարտանքը՝ իրարու ձուլուած : Ման կամ ազատութիւնը կը տրոփէ հայ ժողովուրդի հոգիին մէջ :

Արիւնոտ ճանապարհներէն կը վերադառնամ Տիրապէքիբ : Ես անկէ հետու ճանապարհներու մասին կը մտածեմ : Եւ եղբայրս մտահոգ է :

— Ինչի՞ մասին կը մտածես, Արրիկ :

Երեսս կը նայի, ու՝

— Մտահոգ եմ այն մասին, որ այս ոճրազորը կառավարութիւնը քեզ ձերբակալէ եւ բանտարկէ : Եթէ այդպէս բան մը պատահի՝ մեր տունը սուգի կը մատնուի : Հօրս սուգը անցաւ, բայց քու կեանքին սպառնացող վտանգը անդամանելի տիրութիւն մը պիտի ըլլայ մեր ընտանիքին :

Ես, քիչ մը լաւատես, ժպիտը դէմքիս՝ վճռական կը յայտարարեմ .

— Վստահ եղիբ, որ զիս պիտի չկտրենան ձերբակալել : Թաքուն տեղեր շատ ունիմ, նուիրեալ ընկերներ շատ ունիմ, նոյնիսկ զոհուող քոյրեր կան . . .

Եղբայրս կը լռէ ու կարաւանը կ'ընթանայ մեծ ազմուկով . . .

Ճանապարհներու ելեւէջը կը շարունակուի : Ու ես, երբ Զարդինի լեռներու բարձունքէն ետ կը նայիմ, երկնքի հորիզոնին վրայ Անտոքի, Տարկուշի, Տոլլինի լեռնադաղաթներու ձիւնածածկ դադաթները կամայ-կամայ կ'անհետան երկնքի կապոյտին մէջ :

— Մնա՞ք բարով, ոչ ոք չենք : Մնա՞ք բարով դէպի երկինք արձանացած բարտի ու կազինի անտառ, իմ կանաչ ու անմոռանալի՞ ընկերներ . . .



Այս ճանապարհը իմ հին բարեկամն է : Քանի՞-քանի՞ անգամներ անցայ ու դարձայ այս ձորեմէն ու արիւնոտ բարձունքներէն : Այժմ տեսակ մը ձիւնառ է : Զիւնքու ու Ղորիներու խրիինջ կայ մթնոլորտին մէջ : Քրտական երգերու արձագանգը ձորերը կը լեցնէ : Բանակի ծանրաշարժ զնացքը ունի կարաւանը : Վտանգաւոր անցքերու պահերուն, զինեալ ուժերը բարձունքներու վրայ դիրք կը բռնեն, մինչեւ կարաւանի հարստութիւնը ապահով ճանապարհի վրայ օրօրուի :

Ճանապարհը աւելորդ կրկնութիւնները չի սիրեր : Դէպքեր ու պատահմունքներ այլազան են : Բայց ես աչքս յառած եմ հեռուոր հորիզոնի մը : Արտաթոփելի մը պէտք ունիմ : Շուրջս շատ շեմ նայիբ : Մտքով կը ծրարեմ, թէ ինչպէ՞ս խուսափիմ ոստիկաններէն, երբ Տիրապէքիբի պատմական դուռնէն ներս մտնելու պահը գայ :

Կարաւանը արդէն մեծ դուռնէն ներս կը մտնէ : Մալախտակները կը դղրդան : Պատմական բարձրադիր պարիսպները կ'արձագանգեն : Քրտերէն, թուրքերէն ու հայերէն խօսակցութիւններ մթնոլորտը լեցուցած են :

Երկու ստիկաններ կան կտնդնած դրան աջն ու ձախը : Բայց այս մեծ խուժուժի ընթացքին, անոնք կձկուած կը մնան իրենց տեղերը, նայուածքները անտարբեր :

Կարաւաններու ելեւմուտքը շատ է այս առեւտրական քաղաքին :

Այս խուժումները անընդհատ են : Սովորական՝ ոստիկաններու նայածքին, ինչպէս դարաւոր պարիսպը իր քարէ անտարբերութեամբ :

Կ'անցնինք : Ու ես, այդ առեւտրական հեղեղին հետ, կը հասնիմ հայ

կական թաղը: Ինձի ծանօթ փողոցի մը անցքին առջեւ, լէյլանէն վար կը նետուիմ, ձին կը յանձնեմ եղբորս, ըսելով:

— Մի՛ մտտնողուիր, ես ապահով տեղ մը ունիմ: Նաճար-Թուճարեանի տունը լուր կը զրկեմ, զիշերները դուռն անոնց տունը պիտի իջեանիս:

Ու կ'անհետիմ տուներու դարձուածքին մէջ:

Արդէն տունն եմ մեր կազմած զաղտնի Մարմինն մէկ անդամին, Յովհաննէս Երէցեանին, դիտակից ու զարդացած ընկեր մը, որ սակայն զերձակութիւն կ'ընէր: Իբր տիկնոջ ինամքին յանձնեց զիս ու ինք դուրս եկաւ՝ լուրը հասցնելու եղբորս:

Այս ղէպերը տեղի կ'ունենային 1908 Յուլիս 4ին: Ծանր բռնակալութեան օրեր էին: Յաջորդ օր, եղբայրս եկաւ դիս տեսաւ եւ Համոզուեցաւ, թէ ապահով է տեղս:

— Քու ճամբան ղէպի Պէյրութն է: Կը մտածենք ճար մը գտնել, — ըսաւ եղբայրս ու վերադարձաւ իր առեւտրական գործին:

Գաղտնի Մարմնի անդամները մօտս եկան, ու մենք խորհրդակցեցանք կտրու մը խնդիրներու շուրջ: Իրենք միջոցներ պիտի գտնէին զիս զաղտնորէն ղէպի Պէյրութ ճանապարհ ղնելու:

Բռնակալութեան գանցին մէջ:

Անորշութիւն: Միշտ վտանգի ենթակայ:

Ո՞ր հորիզոններէն հրաշքը պիտի գայ:

Սպասել եւ յուսալ...

Եւ անսպասելի հրաշքը պատահեցաւ այդ օրերուն:

Մեր Մարմնի ընկերները Յուլիս 9ի առաւօտեան սենեակս մտան անբռնակալելի խոնրալատութեամբ, ու բացազանչեցին:

— Աղատութիւն, սահմանադրութիւն, եղբայրութիւն...

Յայտնեցին, թէ Յուլիս 8ին պալատներու թրջական բանակը մտած է Պոլիս, գրաւած է Երւրդի պալատը եւ հռչակած է Սահմանադրութիւն եւ աղատութիւն...

Դուրս եկայ թաքստոցէս: Քաղաքը ուրախ եւ իրարանցումի մէջ գտայ: Իրար համբուրող բազմութիւն՝ ամէն կողմ: Հայը, թուրքն ու քիւրտը իրար գրկած՝ կը համբուրուէին:

Մենք հայ բազմութեան դուրին անցած՝ ուղղուեցանք ղէպի բանտ: Հոն էին Վարդապետն ու մեր Փետայի ընկերները: Ծանոթութիւնը անհաշուելի զարձակ: Հայը, քիւրտը, թուրքն ու ասորին իրար գրկած կ'առաջանային:

Ձեռքի՛ աղատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն՝ աղաղակները տուները կը թնկացնէին ու կը հասնէին մեծակառոյց հին բանտի պատահաններուն:

Արդէն բանտին առջեւն ենք:

Դուռները բացուած են:

Նահանգապետն ու քաղաքի դատաւորներն ալ մեր կողքէն կ'առաջանային:

Առաջին դուրս ելլող խումբին առջեւէն Վարդապետը կը քալէր: Ծեռայի ընկերները անոր կը հետեւէին, անձնուրաց մարտիկի հպարտանքով:



Վարդգէսին հետ գրկախառնուեցանք՝ ուրախութեան արցունքը մեր աչքերուն:

Ճիւղ այլ մտորկեանիս, նուհանգապետը մօտեցաւ Վարդգէսին եւ ձեռքը սեղմեց, իր ուրախութիւնը յայտնեց, աւելցնելով.

— Մենք ա՛լ եղբայրներ ենք եւ պիտի պաշտպանենք Սահմանադրութիւնն ու ազատութիւնը մեր արիւնով:

Ընթերցո՛ղ, դուն ինքնօրէն արար կրնաս ըմբռնել այս աներեւակայելի ուրախութիւնն ու իրարանցումը:

Յուլիս 10ին, Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ Սահմանադրութեան տօնակատարութիւնը յայտարարուեցաւ: Հոն համախմբուած էր 7000է աւելի բազմութիւն: Հոն էին նահանգապետը՝ իր շրջապատով, զօրքերու հրամանատարը՝ իր սպաներով: Հոն էր Գաշնակցութիւնը՝ Վարդգէսի ղիսաւորութեամբ եւ հուսակցական ղեկավարներով, երէկ դադարի, այդ օր՝ արդէն բեմի վերայ:

Այդ օրերու ժամին գրուածք մը ունիմ իմ դիրքերուս մէջ: Աւելին պէտք չկայ արձանագրելու:

Սակայն, կ'ուզեմ շեշտել, թէ իմ ու Վարդգէսի ընկերական կապը աւելի ամուր մնաց մինչեւ իր նահատակութիւնը:

Վարդգէս, իր խօսքը վերջացնելէ ետք, բեմէն իջած ատեն աւելցուց.

— Այս թօփալը իր խօսքը վերջացուց: Հիմա բեմ պիտի գայ երիտասարդ թօփալը, ու զիս վեր քաշեց:

Ես կ'ը կարծիքի, թէ սուլթան Համիտը կործանած էն, ազատութիւն ստալու երկրին: Երբ խօսքիս մէջ յայտարարեցի, թէ արիւնարբու բռնակալը տապալած է, փէշս քաշեց.

— Ձգուշ խօսէ, բռնակալը դեռ իր գահին վրայ է... Ամփոփուեցայ եւ խօսքս վերջացուցի ազատութեան հաւատքով:

Փուլ եկան բռնակալութեան պատուարները: Հորիզոններուն ճամբաները բազուեցան իմ առջեւ:

Մէկ շաբաթ վայելեցի ընկերներուս, բարեկամներուս ու եղբօրս ընկերակցութիւնը, ու ճամբայ ելայ զգպի անորոշ հորիզոններ:

Նոր կեանք մը, նոր ու փոփոխական հորիզոններով... Ծամբորդն իր ճամբան պիտի շարունակէր...

Կ. ՍԱՍՈՒՆԻ



ՄԻՔԱՅԷԼ ԹԱԻՐԻՋԵԱՆ

«ԵՒ ԵՂԵԻ ԽԱԻԱՐ»

Գ. Սեւակի յիշատակին

Ա.

Հայոց աշխարհի արծիւներն ցասկոտ
 Կը թեւաբախեն անեղազգորդ,
 Եւ ապառաժներ կտցաեարելով՝
 Վրէժխնդրութեան կայծեր կ'արձակեն,
 Մինչ իրենց լիկիչ ժամիքներուն մէջ՝
 Ճանկաւտուած օձ մը կու լայ շնչահեղձ:

Սօսեաց անտառէն
 Եւ Արարատի խորխորատներէն՝
 Հայկեան Ոգիներն կը գարբնուն յանկարծ,
 Եւ շղթայակապ վիշապներու պէս
 Կը կազկամձեն խիստ՝
 Իրենց դիրքերէն շա՛րճը ու վեհանիստ...
 Կը գարբնուն հայոց աստուածներն դժգոհ,
 Եւ սեւեռաբիթ՝

Կը մային հեռուն,
 Ուր այգաբացը լիկուած էգի պէս,
 Պզծուած կ'արիւնի,
 Մինչ իր ծոցին մէջ արեւն հրաշէկ
 Հանդարտ կը ծնի...

Հայոց աստուածներն իհստ ցասումնեար,
Կը քֆնե՛ն դէմքին արեւին պայծառ...

Կը քֆնե՛ն դէմքին արեւին պայծառ,
Ջի հայուն հանդէպ արեւն հրովառ,
Եղաւ ո՛չ քարի եւ ոչ ալ արդար:

Մինչ մեմք դեռ կ'երգեմք յանկերգն այս յիմար՝
«Առաւօ՛տ լուսոյ, արեգա՛կն արդար...»

Յունիսեան պայծա՛ռ այդ առաւօտով,
Ի՛նչ յիմար կատակ,
Ի՛նչ յիմար վքար,
Սիրելի՛ Սեւակ...

Հայոց աստուածներն գայրացած են իհստ,
Հայոց աստուածներն ա՛լ չունին հանգիստ...

Բ.

Հայոց աստուածներն գայրացած են իհստ,
Հայոց աստուածներն արքուն են, ոտքի՛,
Հայոց աստուածներն դժգո՛ւն, անհանգի՛ստ,
Եկած են կռուի՛ ու մեղամարտի՛...
Եւ ա՛լ թոյլ չեն տար մակատագրին ճենգ,
Վքարի յիմա՛ր քնայքով հնճէ
Հայ ժողովուրդին պոետները եկէ՛ք...

Հայոց սուրբերը գայրացած են իհստ,
Հայոց սուրբերը ա՛լ չունին հանգիստ,
Հայոց սուրբերը ա՛լ չեն ազօքեր,
Թող տաճարին մէջ բուե՛րը վայեմ...

Հայոց աստուածներն գայրացած են իհստ,
Հայոց աստուածներն ա՛լ չունին հանգիստ...

ՄԻՔԱՅԷԼ ԹԱԻՐԻՉԵԱՆ

Բ. Կ Ո Ւ Ա Ն Ե Ա Ն

Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր



Գիշեր մը անցուցինք Ձուլի Պէրժէր, շքեղ դռներու, տեքորներու, երաժշտութեան եւ մերկ մարմիններու հմայքին տակ: Ամէն ինչ խնամուած, ճաշակաւոր եւ դրաւիչ, այնպէս՝ ինչպէս Փրանսացին կը յղանայ: Ներկայացումէն ետք, խտալական զինի եւ փիցա՝ Պուլըճար տէ՛ Գափիւսին: Եւ դըլուսի գլխի զրոյց: Քիչ մը ամէն քանի մասին: Առօրեայ հոգերը, դործի պատասխանատուութիւնները այնքան կը կլանեն մեզ, որ քիչ անգամ կրնանք նստիլ եւ աւելի հիմնական եւ տեւական ու մտերիմ քաներու մասին խօսիլ: Այդ պահը մեզի համար միշտ եղած է առաօտեան սուրճի պահը: Հիմա միայն մեր զաւակներուն կարօտը կայ. այլապէս ոչ մէկ ճնշում: Պարզապէս մեր անձն ենք: Կը խորհրդածենք կեանքի մասին: Անցեալին, որ միշտ քաղցր է եւ ներկային, որ մեր ափին մէջ է: Ապագային, որմէ դեռ ակնկալութիւններ ունինք: Ինչու չէ, նաեւ վախճանի մասին: Քիչ մը ախտը է զգալ, որ տեւական չես: Օր մը, չես գիտեր ե՛րբ: Ամէն ինչ թողուլ եւ երթալ: Մեղմ լոյսերը, որ արշալոյս չեն: Յեամիջօրէ, զէպի մայրամուտ: Գոյները կախարդանք կը զգնեն: Ձայները զգայուն եւ լսողութիւնդ աւելի սուր: Գրականութենէն աւելի՝ խորհրդանշաններ: Իրերու էութեան կը թափանցես եւ աթոճը կը տարբարւածուի, հոտուն կը զսոսնայ, կը ծփայ: Վերացականն է արուեստը: Բանաստեղծութիւն, քան փիլիսոփայութիւն:

Կէս գիշերը անց է: Կը քալենք քիչ մը ամայի փողոցներէն: Մեր ոտքերուն տակ կը զգանք երկիրը: Ինքնալարժ չէինք նոտած օրեր: Տուները, դուռները, պատուհանները՝ երբեմն թաղարներով, քանդակ մը հոս, ծեփը, մարմարը, դռներն ու սալաշատակը կը վերադանենք, նոր աշխարհ մը ընկճելու նման: Եւ մարդ էակները: Իրենց զիմազմերով, յատկանիշներով: Կը հարստանայ կեանքը, իմաստ կը ստանայ: Նշմարներ, հին զէպքեր, նկարներ եւ զղացումներ կ'արթնցնեն: Փարիզը չի քնանար:

Փլաս տը Փիքալ: Երգերու մէջ եւ նկարներու: Մուլէն Բուժ եւ Թուլուզ Լոգրէք: Հիմա՞: Ահոելի է: Մաշած, դուհիկ, Կ'աճապարենք ցուցափեղկերու եւ կասկածելի վայրերու առջեւէն: Մերկ եւ առփայլին նկարներ: Կը բարձրանանք Մոնմարթը: Մաքրէ Քէօր եւ նշանաւոր նկարչակեղ Շրադարակը: Նոյնը: Կը փնտռես Բընուարը, Փիքասոն, Ուտրէյոն: Փոխա-

բէնը — հաւաքուած են բոլոր անտաղանդները: Եւրկարարներ, որ պատաս-
աք կը մրտեն: Ապստոլանքի վրայ զիմանկար դժոգներ եւ իրենց դիմաց նըս-
տած գեղեցիկ դրօսաշրջիկներ: Միամիտ արուեստի դպրարանքէն զուրկ:
Կատարեալ կապիկութիւն:

Կը նստինք ճաշարանը, կարծիք սփռոցներ, գիւղական միջափոյր մը:
Մտանքը, անցեալը, որ չի մեռնիր: Խորհրդանշանները հոն են: Մարդիկ չեն
մեռնիր. իրենց ոգին հոս է, եւ հաղորդական: Մենք կարծես վերացական աշ-
խարհի մէջ կ'ապրինք աւելի: Պատկերներէն, տեսանելի աշխարհէն ու փոք-
ձառութենէն կը ձգտինք դէպի էութիւնը, որ վերացականութիւն է: Ասոր
համար է, որ դէպքերն ու մարդիկ չեն մեռնիր:

Փարիզ կախարդական է Մոնմարթրի բարձունքէն: Թուր էյֆէլը կը
տիրապետէ: Մարդու ճանկն է դէպի սասողերը: Կը լսէ անհունի ձայները:
Դասական արուեստի կաշկանդումներէն տաղին ձերբազատուող լոճոտոր:

Ֆրանսացին անհունի դիտակցութիւնը ունի: Ատկէ է հեռանկարի իր
զգայարանքը: Կեցէք Թիւիլլորի մէջտեղ, հետզհետէ նահանջող եւ իջնող
ծառերու գծերուն եւ շատրուաններու ընդմէջէն կը տեսնէք Փլաս ար յս
Քոնքորտի Օպլէսքը, Արք տը Թրիտֆը եւ ոնգին: Փլաս տը լիթուայէն
մեկնող պուլլոյները շառաւիղներ են: Որ մէկ հրապարակը որ կանգնիս,
ճարտարապետական կոթող մը, — էյֆէլէ աշտարակը, ծառուղիները, շա-
տրուանուող ուղին դէպի անհունը, գեղեցկութիւնը, կեանքի սէրը: Ամէնէն
սպաւորիչը եւ երազներու տանողը Վերսայլի պալատի Լագոնի Աւազանէն
դէպի Մեծ Ջրանցքը խորասուղուող տեսարանն է: Կարծես կանգնած ես տիւ-
զերքի կեդրոնը:

Փարիզ դեռ միջափոյր մըն է, ուր դէպի մտազմայլում, գեղեցկու-
թիւն եւ ստեղծագործութիւն կրնաս յածիլ: Գտնել էութիւնը, սիրտը, ինք-
նութիւնը: Հակառակ ստեղծականացումի ախտէն իր իսկ վարակումին:
Այդ է պատճառը, որ կ'ըսեմ — Փարիզ անպարտելի է: Կրնաս ֆրանսացին
չսիրել իր սուրեային մէջ: Կոպիտ է, անկիրթ, այլամեթ: Բայց Փորիզը
դեռ կը պահէ իր երիտասարդութիւնը, ինքզինք վերանորոգելու հազուադիւս
առաքելութիւնը: Դեռ հոս, կրնան նոր շարժումներ ծնիլ, մարդկային միտ-
քը կրնայ նոր հորիզոններու յանգիլ, արուեստը՝ նոր ճամբաներու: Որովհե-
տեւ Եւրոպան, որ եղած է մեծ քաղաքակրթութիւններու եւ շարժումներու
օրրան, ինչպէս Արեւելքը, հետզհետէ իր անցեալի ժառանգութիւնը օգտա-
գործելու փորձութեան մէջ է: Դրամ չիներու, զրօսաշրջիկներ սոթեւելու,
կութնած իր թանկարաններուն եւ յիշատակարաններուն: Այդպէս է, որ գու-
ցէ մեռան Եդիպոտը, Հելլադան, Միջագետքը: Հնդկաստանը: Խորհրդածել
հասեւ Չինաստանի, Ճափոնի եւ Հայաստանի մասին:

Հայաստան կը ստեղծագործէ դեռ: Հայ հաննարը կարծես դեռ կրնայ
ինքզինք նորոգել: Պէտք չէ կոթիլ անցեալի ժառանգութեան: Վտանգը հո՞ս
է: Հպարտանալ մեր անցեալ մեծութեամբ միայն: Ասիկա ինքնին ազգանշանն
է: Ի վերջոյ, կենդանութեան փաստը ներկան է: Արդեօք մեր ցեղը ամլու-
թեան նշաններ ցոյց կու տա՞յ, ինչպէս ոմանք կը կարծեն: Ամլութիւնը ծե-
րութեան սկիզբն է: Կեանքը՝ ստեղծագործութիւն:

Արի՛ հայը կը ստեղծագործէ դեռ: Նորիքը Հայաստանի եւ Սփիւռքի
մէջ: Ինչպէս անցած աշխարհարար մը, գրականութեան եւ արուեստի թար-
մութիւններ: Բարդաւաճութեան աննախընթաց շրջան: Քաղաքական յարա-
բերական ապահովութիւն: Կրթական մակարդակի բարձրացում, ֆիզիքական
գեղեցկութիւն: Կարելիութիւններու անսահման ուժականութիւն:

ՆԱՓՈՒԷՆՆԻ ԴԱՄԱՐԱՆԸ

Դրան վրայ գրուած է. «Կը քաղձամ, որ աճիւններս հանգչիմ Աէնի ափերում, այս փրահացի ժողովուրդին մէջ, զոր այճեամ սիրեցի»:

Կայրը մեռաւ 5 Մայիս 1821ին, Ս. Հելենայի մէջ: Իր մարմինը մնաց այնտեղ տասներինը տարիներ, մինչեւ որ Լուի-Ֆիլիպի որուհեց անոր աճիւնները փոխադրել Պրանսա:

30 Նոյեմբեր 1840ին, «Լա Պափորիդ» նաւը Նափուէննի աճիւններով խորսիւնց Շէրպուրդի:

Փարիզ ոտքի ելած էր ընդունելու իր սիրելի կայսեր մարմինը, Նէօյի կամուրջէն մինչեւ Փլաս աը յա Քոնքորտ՝ փառահեղօրէն զարդարուած՝ կը վխտար քաղձազար ժողովուրդով:

Հինգ Հարիւր նաւազներ կ'երթային առջեւէն հսկայ մեռելակառքին, որուն շուրջ կը բարձրանային տասներկու ոսկեզօծ արձաններ, որ կը խորհրդանշէին կայսեր մեծ յաղթանակները:

Թնդանօթաձութիւն, նուազախումբեր, թմբուկներ եւ զանգակներու զօղանջ:

Տաճարին մէջ մասնաւոր տեղ մը յատկացուած էր իր նախկին զինւորներուն: Լուի-Ֆիլիպի թագաւորը, շրջապատուած արքայական ընտանիքով, նախարարներով ու պետական պաշտօնատարներով կը սպասէր կայսեր աճիւններուն:

Խորունկ եւ երկիւղած լուսթեան մէջ, իշխան փուէնվիլ մօտեցաւ հօրը եւ արտասանեց.

— Տէր, Ձեզի կը ներկայացնեմ Նափուէննի Ա. կայսեր աճիւնները:

Արքան պատասխանեց.

— Ձանձօք կ'ընդունիմ յաճուեմ Պրանսայի:

Աճիւնները Ս. Ժերոմ մտտրան մէջ ամփոփուեցան եւ հոն մնացին քսան տարի, մինչեւ որ Լուի Վիգոնիի ծրագիրը իրագործուեցաւ եւ Նափուէննի Ա. ի մարմինը զետեղուեցաւ իր վերջնական դամբարանին մէջ, Լէ զ'էնվալիտ:

Այս հոյակապ կառոյցը, զոր Մոնթէսքիէօ կուհեց ճամենապատկառելի վայրը աշխարհի վրայ, իր լրումին հասաւ Արտուէն Մանսարի կողմէ, որ աշխարհի մեծաղոյն ճարտարապետներէն էր: Իրեն աշխատակցեցաւ Բոպէր աը Քոթթ, իսկ քանդակները եւ զարդերը գործն են Ժիրարտոնի, Գուաղույի, Գուաղի Վոքսի, եւ այլն:

Մանսարի յղացումը, իր փառահեղ գծրէթով, յանդուգն եւ տղաւորիչ է: Անհնար է դուռնէն մտած աստե ն կարգալ՝ Le Tombeau de l'Empereur եւ չյուզուիլ: Նափուէննի մարդկային բովանդակ ցեղին կը պատկանէր: Պատմութիւն կերտող անձ մըն էր: Ապագան նախատեսող եւ պատմութեան ու կեանքի ընթացքը շեղող հանճար մըն էր: Սիրելի էր մանուաւնդ անոր համար, որ մարդկային էր, մեզի պէս տկարութիւններ, թերութիւններ, փորձութիւններ ունէր:

Իր դամբարանը, մանուաւնդ բուն շիրմաքարը, գլուխ-գործոց մըն է արուեստի: Վոթի կանաչ մարմարեայ խարխուիին վրայ բազմած է շիրմը, Փիկանտական կարմիր պորփիւրէ: Ըր վսեմ պարզութիւնը, վերեւի մասի հոնիական խոյակէ ներշնչուած զարթածոն, բուրբակի զամբարանը, երկաթալանի կառոյցը, որ առիթ կ'ընծայէ շիրմաքարը այլազան կողմերէ եւ մակերեսներէ դիտելու, — ամենատպաւորիչ կոթողներէն մէկն է:

Կը զգաս, որ մեծութեան ներկայութեան ես: Հոն է, յաւիտենօրէն, ազին եւ, ինչո՞ւ չէ, մարգը:

Դուրսը, Փարիզի աշունը, էյֆէլի աշտարակը ամպերու մէջ, կամուրջը գետի վրայ, — դեղեցկութիւնը կեանքին: Մաքով գետ ներսն եմ:

Կիրակի է: Լուսընէ կ'ելլենք, դեռի փէն կը քալենք դէպի Նոթրը Տամ: Բերեղ է ամէն ինչ, թափանցիկ ու ջրանկար: Նաւերը կը սահին հակառակ ուղղութեամբ եւ այս գորշ շէնքերը, իրենց քարերը, նե՛րսը մանաւանդ՝ պատմութիւն են: Միշտ կը զգաս, որ անցեալը զոյութիւն ունի: Երեղ, երբեմն արիւնտ, առհասարակ՝ գեղեցիկ, որովհետեւ ամէն ինչ կ'անցնի, դեղեցկութիւնը կը մնայ: Եւ Հաճոյք է դեղեցկութիւնը: Ամերիկա երբ կը քալես փողոցներէն՝ ներկան է, որ կը զգաս միշտ:

Անցեալը պատահական է հոն:

Ամէն ինչ նոր եւ յանդուր:

Մեծութեան եւ գալիքի խառն սպաւորութիւն մը: Գեղեցկութիւնը կարծես աւելի անցեալին կը հակի: Կամ, ներկայէն ետ անցնելու պահուն է, որ կը զգացնէ իր ինքնութիւնը: Եղած են երջանիկ արուեստագէտներ, որ իրենց կենդանութեան գնահատուած են, բայց միշտ, իրենց անցումէն ետքն է, որ դեղեցկութիւնը յայտնաբերուած եւ հաստատուած է բոլոր ժամանակներու համար:

Գեղեցկութիւն: Որպիսի գին: Տուայտունք, Ֆիդիջական եւ Հոգեկան դալարում, ցաւ, աղքատութիւն, գժրախտութիւն, տեսալուծ մաշում եւ, յաճախ, մինչեւ իսկ հասկցուելու զրացումը: Վան Կոթը, Կոկէնը, Սեզանը, Պեթլոմէնը, Ռէժիսարը, Եւայլն: Ամէնէն ողբերգականը, անուշտ, իր ողբութեան չղնահատուիլն է: Ամէնէն դաժան երեւոյթներէն մէկը: Այսօր միլիոններ արժող, թանկարանէ թանկարան յափշտակուող երկերու Հեղինակներէն ոմանք, ամէն օր սպառեցան, ամէն օր մեռան, երկար մահ մը, որուն մէջ Հոգեկան ոչ մէկ բաւարարութիւն: Հեղինքը կեանքին:

Կինս ինձմէ բարեպաշտ է: Կ'աղօթենք Նոթրը Տամի մէջ: Հաւատացեալներ Երկրաշարժ եւ գրոսաւրջիկներ հետաքրքիր: Տաճարը այս անգամ գիտաւելի կը տպաւորէ: Մլացքը, բոլոր գիծերը վեր կը խոյանան: Բայց նոյն վերապահութիւնը, — ներքին հսկայ միջոցը կարատուած է կամարներով ու սրիններով, կողմնակի մատուցներով: Նոխրնարութեան հարց է. կը սիրեմ մեր գմբէթուտը եկեղեցիներուն ներքին ազատ եւ ընդարձակ միջոցը: Ամբողջութիւնը կ'ընդգրկես մէկէն: Յղացումի եւ կառուցման պայծառութիւն: Եւ զարգի ու քանդակի ժուժկալութիւն, կառուցումի եւ մակերեսներու պարզութիւն:

Տաճարէն կ'ելլենք, կ'ուղղուինք դէպի Փլաս տ'է Վոմ: Բարտէսը ձեռքիս է: Ի վերջոյ, հարգութեամբով կը զանենք քիչ մը գժուարին ժուտքը: Մէկէն կը կարուիս հսկայ քաղաքէն: Կը յիշեցնէ Փլազա Մայորը եւ Պիացցա Նալոնան, որովհետեւ փակ հրապարակ մըն է. շէնքերով, կամարներով շքեղապատուած եւ մէջտեղը ծառեր ու աւազան:

Կզգի մը՝ մեծ քաղաքի ժխորին մէջ: Այս հրապարակը գետ պահած է իր անկախութիւնը: Մեքենան չէ կըցած լիովին գրաւել զինք: Ամփոփում մըն է: Մտքի կեդրոնացում: Մէկէն ջիղերու թուլացում եւ խաղաղութիւն: Արագութիւնը պարտուած է եւ կ'ուզես յամենալ այստեղ, նստի ծառերուն տակ եւ լսել աւազանի ցայտքը: Կարմիր աղիւսը տուններուն՝ ճերմակորակ

քարերով կէտկիտուած, գորշ-կապոյտ երզիքները, ծխնելոյղներու խուրձ-
րը: Վարը, կամարները միջնագարեան հով մը կու տան, մենաստաններու
յիշեցումով:

Կուղղուինք դէպի աջ անկիւնի տունը: Վիքթոր Հիւկոյի տունն է: Հե-
տաքրքրութեամբ եւ յուզումով կը բարձրանանք: Մեծ քերթողը կը սկսի խ-
րական դառնալ, մարմնականանալ: Քարը, տոտոտաղը, սենեակները անպար-
տելի իրականութիւն են: Վերացական Փիղիքական տարազ կը հազնի հիմա:
Չորսյարկանի շէնքը կը պարփակէ Հիւկոյի աօրեայ եւ դեղարուեստական
կեանքի մթնոլորտը. կարասի, ձեռագիրներ, նկարներ, առարկաներ, բա-
նաստեղծին դժտորութիւնները, նկարները, փայտի փորագրութիւններն ու
քանդակները, եւայլն: Իր գծագրութիւնները կը զարմացնեն զիս: Առհասա-
րակ մեծ տաղանդները բազմակողմանի են եւ դեղարուեստի ճիւղերը իրարու
հետ սերտորէն կ'աւրնչուին: Վիքթոր Հիւկոյի հօր երեւակայութիւնը եւ
յգացքի յանդգնութիւնը կ'արտայայտուին նաեւ իր գծագրութիւններուն եւ
նկարներուն մէջ: Երբեմն մինչեւ «սիւրբէսլիգո» կը հասնի: Բարդ եւ մթին
յղացումներ, տարօրինակ էակներ, հօր արտայայտապաշտութիւն: Սրահ մը
ամբողջ դարդարած է շինական ոճով: կարասիներ, պատեր, առաստաղ,
փայտի վրայ փորագրութիւն, զարդանկարչութիւն, եւայլն: կարասիներու
մասեր հաւաքած, քանդակած, իրարու մօտ բերած եւ կառուցած է:

Իր ներկայութիւնը աւելի քան իրական է հիմա: Իր խօս եւ յորդ ոռ-
մանթիզմը կրնայ մեր դարուն այնքան հարազատ լըլլալ, բայց անկասկած որ
աշխարհի մեծ քերթողներէն է: Երեւակայութեան, զգացումի, մարդկայնու-
թեան եւ ներշնչումի բարձունքներու հասած:

Իր մթնոլորտը մեզի հետ, կը նստինք թացօթեայ սրճարանը: Քոնեակ
մը: Հրապարակը, ծառերը, աղբիւրները, կիսնքը աւելի իմաստ եւ պրաւ-
չութիւն ունին հիմա: Բանաստեղծութիւնը բացած է իրերու ներքին աշխար-
հը: Ապրելու համը լեզուիս վրայ, դեղեցկութեան զգացում մը ներսը եւ
դուրսը:

Վերսայլի տայտաը աշխարհի շքեղ դասերէն մէկն է: Այնքան նկա-
րագրուած, փառաբանուած, այնքան ծանօթ: Պէտք է տեսնել զայն: Լուսի-
նները իրենց մեղեքուն մեծ մասը քաւած են կանգնելով այս դեղեցկութիւնը:
Հոս, յաւիտենական հաճոյք է երկրագունտը, ապրիլը, մարդ էակ ըլլալը:
Ոճիւրները, անկումները, մոյեղնութիւնը հոս չեն հասնիր: Գեղարուեստի
աշխարհին մէջ ես: Տեւականը միայն: Այլուն է եւ պուրակները զոյնի կա-
խարդանք են: Լը Նոթրը հանճարեղ պարտիզպան-ճարտարապէտ-բանաստեղծ
մըն է: Հեռանկարի, անհունութեան, անմահութեան կախարդը: Մանսար
չատ բարձր կը կանգնի պալատին մէջ: Մե'ղք, մե'ղք, որ Յեղափոխութիւնը
կողոպտած է պալատի արձաններուն, նկարներուն, կարասիներուն, — դե-
ղեցկութեան եւ շքեղութեան մէկ մասը: Այնուամենայնիւ, թէեւ երբեմն վի-
բաւոր յունական արձաններու նման, դեռ հոն է դեղեցկութիւնը:

Կ'անցնինք Պուս տը Պուլոններէն: Որսորդական փողեր կը լսուին:
Սէնի ափերէն, կամուրջներէն, Ժորժ Սանի տունէն: Շան գ'իլիդէ: Անուն-
ներ, դէպքեր, վէպեր, յուշեր: Առօրեան բանաստեղծութեան կը փոխա-
կերպուի:

Բացօթեայ սրճարան, սուրճի բոյրը: Մասն ես լըլլապատին, տիե-
զերքին:

Միջադէպ մը միտքս կ'իյնայ ու կը ծիծաղիմ: Մեր առաջնորդ օրիոր-

դը Վերսայի մէջ, տնդւերէն կը խօսէր ծեղի: Քէէւ Փրանսական շէտով, բայց ճշգրիտ կ'արտայայտուէր: Միայն երբ կը բացատրէր, թէ հանդիսաւոր ճաշկերոյթներուն թազուհին չէր մասնակցեր Արեւ-Արքային հետ, վրիպում մը ունեցաւ: Փոխանակ ըսելու, որ մտերմութեան մէջ, իրենց սենեակը, They ate with each other (իրարու հետ կ'ուտէին), ըսաւ. They ate one another (իրար կ'ուտէին): Ինչ որ բուրովին սխալ չէր:

Քիւլիւրիւն զմայլելի է: Հեղուկ արեւ մը: Կ'անցնի աշնան ծառերու մէջէն: Աւազանը կը ցայտէ: Քոնքորտի հրապարակի եղբայրական Օպերաը եւ ետին Արք տը Քրիտֆըլ:

Պահ մը կը նստինք: Սուրհ մը: Մտառդիները հրաւեր կու տան: Կար միւր գրեւոր մը: Երեխաներու ճիշդ: Մեծ քաղաքին մրմունջը: Տարիներ առաջ, ճիշդ այսպէս: Պայծառութիւն. յատակը կ'երեւայ. կորսուած պատկերներ տեսանելի կը դառնան: Զրացումի ակը կը ցայտէ մէկէն: Աղուոր է, աղուոր: Փամանակ, հոգ, տաղնապ. — անգոյ են: Վայելչութիւնը մարդը լլայլուն: Արատութիւնը: Հաճոյքը: Տերեւ մը կ'իյնայ: Սարուար վախճանին: Այնուամենայնիւ, գեղեցիկ է:

Կը ժտնենք ժէօ տը Փոմ: Լուսը դեռ կ'իջնէ մեր երեւակայութեան: Քիարուզուոր, մթին երանդներ, ոսկի լոյսեր: Նկարչական աշխատանոցներու արուեստը, ներքին լոյսի մէջ:

Երբեմն, հոտուն եւ դաշտուն ջուրակներու կը յաջորդեն յանդուզն եւ Հզոր պղինձները եւ թմբուկները: Տպաւորապաշտութիւնը լման է: Մէկէն, երկար ամիսներէ ետք, կը բանաս վարազոյրներն ու պատուհանները եւ տրեւն ու դոյնները ներս կը խուժեն, — թարմութիւն, վերանորոգում եւ հաճոյք: Գոյնի իւրախանք: Դարձ զէպի արեւը, որ կ'իջնէ տիեզերքին: Ամէն ինչ անոր ճառագայթներուն տակ կը թրթոսայ, կը պարզայ, կը խայտայ Հաճոյքը: Իրերը ներքին եւ արտաքին կեանքով կը սարսուան, միջոցը անհուն է եւ հոտուն: Ամէն ինչ սփռնորով եւ սաստաւանորով կը խայտայ:

Ըմբոստացում աւանդութեան, դասականութեան, տիրող կարգերուն դէմ: Մահ՝ ակադեմիզմին: Հզոր մարդիկ կը քալեն աշխարհի վրայ: Նոր կայծեր, ճամբաներ, հորիզոններ: Արտայայտութեան ինքնատիպ եւ նոր միջոցներ կը վիճին, կը կուտին, կը ազնուպին, մա'նաւանգ՝ կը ստեղծագործեն: Արուեստը, առաջին անգամ, կը ձեռքադառնի կանոններէ եւ տարազներէ, այլեւ սահմանը՝ անհուն է, մարդ-աստուածի կարելիութեան աննախատեսելի հնարաւորութիւնները:

Տաղանդներու տարօրինակ առատութիւն եւ Համախորում: Փարիզն է կեդրոնը: Թեյադրանքը, ծնունդը յանախ այլ տեղ է, բայց Փարիզն է ձգողականութեան կեդրոնը, ուր հնոցը կը բորբոքի: Պատուանդաններ կ'իյնան, կը հայհոյեն, կը պոսան, լոխն կը տազնապին, ոճանք ինքզինքնին կը պարտադրեն, շատեր՝ կը մերժուին: Բայց զարուեստագէտը ինքզինքնին հետ Համաճայն է: Հանճարը միշտ կը գիտակցի իր արժէքին: Անշուտ, դառնութիւնը չհասկցուելուն, սակայն, ժամանակը կը յաղթանակէ:

Երեք մեծերը. Սեզան, Վան Կոխ, Կոկէն: Ալպա՝ Մանէն, Մոնէն, Բիսպարոն, Բընուարը: Եւ ուրիշներ: Սէօրան, որ տեսարան է եւ գիտնական: Լոյսի եւ գոյնի նոր օրէնքներ եւ առընչութիւններ:

Նոյնքան կախարդուած եմ, ինչպէս տարիներ առաջ: Տպաւորութիւններն նոյնն են: Թերեւս, աւելի խորը կը զգամ Հիմա: Արուեստի մեծ շրջաններէն մէկը: Նոյն աշխարհն է, ըստ էութեան՝ արեւուն տակ ոչ մէկ նորութիւն: Սկզբունքները, տարազները, յայտնութիւնները, տեղ մը, ուրիշ

տաղանդի մը կողմէ գտնուած են եւ փորձուած: Այնուամենայնիւ, արտա-
յայտութիւնը նոր է, եզակի, դերազանցօրէն անհատական: Փամասակին մէջ
չկրկնուած եւ անկրկնելի: Ճիողգոն, Տա Վինչին, Միքելանճելոն, էլ Կրե-
թոն, Բէմպրանտը, Սեզանը, Վան Կոխը եւ միւսները մէկ անգամ են միայն
յաւերժութեան մէջ:

Վան Կոխ տեսիլ մը ունի: Գերազանցօրէն իբր: Ոչ ոք այնպէս դիտած
է բնութիւնը եւ իրերը, ինչպէս ինք: Ոչ ոք տեսած է այդ ներսէն վառող
լոյսը, գծերու կշռոյթը, որ տիեզերական հոլովոյթն է կարծես: Գոյներու
այս նոր գուգակցութիւնները, դունաւոր գծերն ու կշռոյթը իր ներքին աշ-
խարհը կ'արտայայտեն, — իր տեսիլը: Եւ այդ տեսիլը անսահման սէր է
գէպի ամէն ինչ: Երկիւղածութեան, աղօթքի հասնելու շափ: Խանդալու-
ուութիւն, մաշող կրակ: Կառոյց, հեռանկար, նկարչական կանոններ անկա-
րելոր են, միջոցներ են միայն: Միակ ճշմարտութիւնը, — մարդը բնութեան
գիմաց: Եւ գիտնովութիւնը, հաշիւամոյի մը անխնայը, որ սրբազան խնթու-
թեան կը տանի:

Ճիշդ է, որ Վան Կոխ, Կոկէնին հետ, ծնունդ տուաւ արտայայտապաշ-
տութեան, եւ այլն, բայց Վան Կոխ միշտ պիտի մնայ առանձինն, եզակի եւ
անկրկնելի: Ոչ մէկ գարոցի մէջ, ոչ մէկ դասակարգումի: Արտայայտու-
թեան անօրինակ պոռթկում մը:

Մերոյ մարդը չէ Կոկէն: Մոյիգին, բմբոստ, սինիֆ մինչեւ իսկ: Եւ
հզօր, Ֆրիդրիսպէս եւ հողելին: Դժգոհ տիրող կարգերէն, ինքզինքէն: Ըն-
դունուած արտայայտական կերպերը, թանգարաններու մէծ երկերն իսկ չեն
ներշնչեր զինք: Կ'ատէ արեւմտեան քաղաքակրթութիւնը, կը նկատէ դոյն
այլասերած եւ սպառած: Կը մերժէ ամէն տեսակի քաղաքակրթութիւն: Նախ-
նականը, բարբարոսը, սկզբնական ակերը զինք կը կանչեն: Եղիպտական
որմանկարներ, ճափոնական տպանկարներ, հեռաւոր կղզիներ, անոնց բար-
բարոս զիմակները եւ արձանները, միջնադարեան դունաւոր ասպակները եւ
նախնական արուեստը: Կը մեկնի հոստաւը, Մարտինիք, Փանամա, Թահի-
թի, Տոմինիք, ուր կը չիջի աղբաւ, ցաւերու մէջ, դժբախտ:

Տպարտապաշտներուն հակառակ, բնութեան ուղղակի հայրգակցու-
թեան չի հաւատար: Կ'ըսէ բարեկամին. «Խորհուրդ մը տամ քեզի. շատ մի
բնյօրինակներ բնութիւնը: Արուեստը վերացականութիւն է: Այս վերացակա-
նութիւնը քաղէ բնութիւնէն մինչ կ'երագես իր դիմաց, եւ մտածէ արեւի ստեղ-
ծագործութեան մասին, որ պիտի հետեւի, քան մասելին մասին»: 1900ին կը
կրկնէ աւելի ինքնայտաստ. «Ես բնութիւնէն ձկարող ճկարիչ չեմ, հիմա անիի
քան երբեք: Ամէն ինչ տեղի կ'ունենայ իմ վայրի երեւակայութեանս մէջ»:

Արուեստը իրեն համար, մարդու բնութեան հետ ունեցած սպորումնե-
րուն վերակերտումն է: Յաճախ գործածուած է համադրութիւն բառը եւ այդ
պատճառով իր նկարչութիւնը կոչուած է «Ո՛րինթիսիզմ»: Կը հետեւի, որ ար-
ւեստի գործը անկախ է բնութենէն եւ ենթակայ իր իսկ արտաքին եւ ներքին
օրէնքներուն: Երբ նկարիչը իր տեսիլը կը դրոշմէ պատաստին վրայ, նկարը
այլեւս կարուած է բնութենէն եւ կ'ապրի իւրայայտուկ կեանքով: Ստեղծա-
գործութիւն մըն է: Արուեստի երկերը, որոնց կը հիանանք թանգարաններու
մէջ, կ'արժեւորուին իրենց իսկ արժէքով եւ ոչ մէկ արքնութիւն ունին
այլեւս նիւթին հետ, ըլլայ այդ բնութիւն, անձ կամ առարկայ:

Նախնական արուեստապէտներու նման, կը պարզացնէ զոյնները տա-
փակ տարածութիւններու եւ կը չնչտէ ուժեղ կերպով սահմանները: Կը խու-
սափէ դեղեցիկ եւ սահուն գծաւորումէ: Կը տիրապետէ իր հզօր գոյներուն,

անոնց լրացուցիչներուն, տաք եւ դով յարտերութիւններուն եւ կը ստեղծէ իր յանդուզն առնչութիւնները: Գոյնը իր ծօտ պայմանադրական է եւ վերացական: Իր ներքին տրամադրութեան եւ իր նկարի ներդաշնակութեան կը հետեւի: Բնութենէն շատ հեռու է: Կարծէ յիշել նկարը, ուր Յակոբն ու Հրեշտակը կը կուսին («Քարագէն վերջի տեսիլը»), կարծես ճափոնական յղացում մըն է, երկտարածեան, ճերմակներ եւ կապոյտներ, որոնց կը տիրապետէ գրեթէ նկարը ծածկող կարմիրը: Այդ կը համադաստոյանէ իր տեսիլին: Ըսած է. «Արուեստը վերացական է»: Որքան ալ որոնող ու տեսաբանող, որքան ալ ինք յայտարարէ, թէ ամէն ինչ իր ուղեղին մէջ է», իր միւս արտայայտութիւնը աւելի հարազատ է. «Ամէն ինչ տեղի կ'ունենայ իմ վայրի երեւակայութեան մէջ»: Այլ կերպ ալ չէր կրնար ըլլալ: Ամէն մեծ արուեստագէտ տեսիլ մը ունի եւ իր ներքին աշխարհն է, որ կ'արտայայտէ: Անձանօթ, անաղարտ, տարաշխարհիկ կայքերու կարօտը, Քարմութեան խռովքը, հեռու քաղաքակրթութենէն: Իրերու սկզբնական եւ ներքին էութեան հասնելու Բանաստեղծի մը նման կը յարէ. «Վայրի նա մը, որ դեռ կրնայ առանց անվայելութեան զգացումի՝ մերկ շրջիլ, պահելով իր բովանդակ կենդանական զեղեցկութիւնը... որ շրթներուն հեզմական ծայրու մը ունի... մեզի կը նայի անեղծաւծային այնքով...»:

Իր հիացողներէն Պօտյէր կը գրէր. «Ե՞նչ է մաքուր արուեստը ըստ արդիական բմբռումիմ: Թեյադրական կախարդանքի մը ստեղծագործութիւնը, որ միաժամանակ կը պարփակէ անարկայ եւ ենթակայ, աշխարհը արուեստագետէն դուրս եւ նոյնիմէն արուեստագետը»:

Կողէն եւ Մեզան եղան ամենահզօր մղումները հետագայ նկարչական նոր շարժումներու:

Փօլ Սեզան աւելի բարդ է եւ տիեզերական: Աւելի հիմնական ու խոր է Գագաթն է: Տպաւորապաշտ շարժումը, Մոնէի լուսի եւ դոյնի թրթռացումները, լուսին հետ փոխուող աշխարհը, ձեւին տարրալուծումը, միայն աչքին ապակնիւր — չէին կրնար դիմք դրահանել: Վ'ուզեմ տպաւորապաշտութիւնը դարձնել թանգարաններու արուեստին նման ամուր բան մը», կը գօչէ: Չ'արհամարհէր անցեալ վարպետները, բնդակառակն, լրջօրէն կ'ուսումնասիրէ զանոնք: Կը դիտէ բնութիւնը տարբեր աչքով, իր իսկ եզակի տեսողութեամբ: Կը հետապնդէ, կը ջանայ վերլուծել իր ներքին որոնումներն ու խռովքը անոր դիմաց: Ի վերջոյ, կը հասնի համազրութեան:

Գոյնը կը կախարդէ զինք: Ըստ իս, ամենահզօր զբոլորիւթներէն է: Իր դոյները «կ'երգեն», ինչպէս կ'ըսուի ժողովրդականօրէն: Աւելորդ է ըսել, զիտէ գոյններու բնագիտական եւ արտայայտչական յատկութիւնները եւ հմտօրէն ու գեղարուեստական յայտնատեսութեամբ կը գործածէ զանոնք: Մեզան, Նոյնպէս զիտէ, որ կարելի չէ անտեսել ձեւը, ծաւալը, միջոցը, խորութիւնը, նկարչական կառուցը, որ համազրութիւնն է ամբողջին եւ կը յանդի արտաքին եւ ներքին ճարտարապետութեան: Եւ դերադոյն հանդրուանը — գեղարուեստական զգացումը:

Արարածներն ու իրերը առանձին կեանք, տեղական անհատականութիւն ունենալէ զատ, միշտ յարաբերութեան մէջ են իրենց շրջապատին, այլ էակներու եւ իրերու հետ: Պարփակուած միջոցի, ժամանակի եւ լուսի անդրազարձումներուն մէջ, եւ այս բոլորը տեսնողն ու զգացողը, մեկնաբանողն ու վերլուծողը անհատն է (աչք, միտք եւ սիրտ), գերադասօրէն իւրայատուկ, մէկ եւ անկրկնելի:

Մեզան կը հետապնդէ իրերու եւ տարերքի այս առնչութիւնը, կը ջա-

նայ թափանցել ներքին հոսթեան (Պղատոնի գաղափարը) և, ի վերջոյ, կը հասնի տիեզերական հատասարակչութեան: Իրերու և հակներու տեղական գոյներն ու ձեւերը կը հասնին զէպի Իրենց շրջապատը և շրջապատը կը թափանցէ անոնց մէջ և նկարչական միջոցը կը վերածուի յարաբերութիւններու — գոյն, կառոյթ, ձեւ, կառոյց — վերատեղծուած ամբողջութեան մը, մի և անբաժանելի: Դիտեցէք Սեզանէն պատասա մը և հետզհետէ պիտի նըշմարէք գոյնի, երկրաչափական ձեւերու, կառոյթի, զծերու յարաբերութիւն մը, որ բնութեանն չէ, որ ստացուած է, այլ արուեստագէտին յղացումէն ու կառոյցէն: Նոյն կեցուածքը անկենդան բնութեան, զիմանկարներու, բնանկարներու և «քոմփոզիտիւն»ներու մէջ: Գոյները և ձեւերը իր մասնահատեւելու կերպէն ծնաւ թելագրանքը «քիւպիզմ»ի, Պրաքի և Փիքտոսի կողմէ: Եւ բնութեան թելագրանքները վերացական դրոյթներու վերածելու իր յատկութեանն ծագում առաւ վերացական նկարչութիւնը:

Սեզան գեղարուեստի պատմութեան մէջ անկիւնադարձ մըն է: Աւստրալը զիտեւելու նոր և աննման կերպ մը:

Այդ զիչեր, Փարիզի Օփերան գացինք: Կարծեմ զերմանական խումբ մը կը ներկայացնէր Իէյարա Շթրաուսի «Առանց ստաւերի կիմը»: Աւելորդ է ըսել, որ շէնքի համբաւուր կատոյցը կ'արդարացնէ իր համբաւը: Սիրեցի Շակալի որմնանկարները՝ զմբէթին: Իր ճէրանիմուս Պօլխան կենդանիներն ու տիեզիծ արարածները այնքան շնն դրաւեր զիս, բայց թր գոյներու հմայքը կախարդանք ունի:

Շթրաուսի երաժշտութիւնը դժուար զնահատած եմ, իբրևս առանձինն երաժշտութիւն: Սակայն հիմա, բեմական իր պատկերացումով և առաւելուն նկարագրողական բնոյթով, հասկնալի կը դառնայ և վայելք: Ներկայացում մը անթերի էր՝ իր բոլոր մատերուն և ամբողջութեան մէջ: Մարդկային բնագիւղները իրենց յուրի և ազնիւ ընթացքներով կը վարեն պատմութիւնը, բայց միջավայրը գեղարուեստն է: Պարազայ, որ արուեստը թէև կեանքէն կը ստանայ իր նիւթը և մզումը, բայց կը շարժի տարբեր տարածութեան մէջ: Վերատեղծում մը, արուեստագէտին իրականութեան և տեսիլին:

Փարիզի ժխորն ու երթեւեկը մասամբ հանդարտած են: Կը մտնենք Քաֆէ աը լա Փէ ճաշարանը: Գիտին կը հրահրէ երաժշտութեան և տպուկերներու գոյներն ու բանաստեղծականութիւնը: Եւ կէս գիշերէն ետք, պահը կարծես հմայք մը կը զգենու: Երազներու շրջանն է: Ամէն ինչ վայելք է, իմաստ, խորհուրդ: Անկապ, կորսուած պատկերներ կու գան: Մեծարենցեան «Հաշիլը» ջիղերուն թմբութիւն մը կու տայ և տեսիլներու կը բացուիս:

Բովի սեղանը, մեղի նման միջին տարիքի զոյգ մը: Ֆրանսուհին ծայրայեղօրէն ուշադիր է զէպի իր երեւոյթը, արդուզարդը. բացայայտ է, որ Օփերայէն եկած են: Ժաշակուոր հագուած, բայց բովանդակութիւնը արտաքին անթիւն շատ չի համապատասխաներ: Երիտասարդ մնալու և կրեւնալու ճիղը՝ երբ այլեւս երիտասարդ չես, ոգբերական է և ծիծաղելի: Ամուսինը բարձրահասակ, ճաղատ, զինիէն կարմրած երեսներով: Եւ շատախօս: Շարունակ կը խօսի, մինչ կինը կը ջանայ ժպիտներով ճառագայթել շուրջը:

— Մ'ուսիկո՛, տա՛մ, պոն մուի:

Ամայի պողոտայէն կը քաշենք, աննպատակ: Գէպի երազ, աստղերը, աշխարհի սահմանները և անդին:



Իմացական Հարվուժ

ԿԱՌՈՅՆՆԵՐՈՒ ՎԱՐՊԵՏԻՆ «ՀԱՅԵՐԵՆ» ԿՏԱԿԸ



Նորը գրոցից պետք է բերել ոչ թէ նրան հնագույնընկրմով, այլ հպատակեցնելով, մե՛կ ծառայեցնելու համար:

Ռ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Ռ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Ներկայ տնայն 12ին, Երևանի մէջ, 65 տարեկան հասակին՝ իր մահկանացուն կըծօց կայրենի հոշակուտը հարտարարչներին Ռաֆայէլ Իսրայէլեան:

Ռ. Իսրայէլեան Նախկին Քարակի և միջնակարգի կրթութիւնը կէ ստանայ իր ծննդավայրին՝ Քիֆլիսի մէջ, ուր ատեն մը Հեռեւեկէ հոգ զեղարուեստի սկալնիկայի հարտարարչական ճիւղին, կ'անցնի Լենինկրաս և փայլուն կերպով կ'աւարտէ մեկնի սնուան նկարչութեան, քանդակագործութեան և հարտարարչութեան ինտոտուտը: 1936ին կէ վերադառնայ Հայաստան և այդ օրէն սկսեայ միջին շունչ վերջին կէ հաւիրուի Հայրենիքը իր արուեստով հարստացնելու հոռն գործունէութեան:

Բազմաթիւ կատարչներու հեղինակ այս հարտարարչուը, ինչպէս միշտ կէ դաստակը ստանդարտներուն, հանրամտնայ սնուն կը սէ միայն իր անմիջական շրջապատին և իր

արուեստին մասին անձերուն, այնև Հետո Հեռուործներուն, նոյնիսկ Եարտարապետութեան Հետ կապ չունեցող բազմաթիւներուն, որոնք անձամբ կամ լուսանկարներու վրայ տեսած էին անոր իրազորման առեւտրային զարգացումը յուշակառոյցը, «Ձարնճի կամարը», Երկրորդ Աշխարհամարտին զոհուած մարտիկներուն ի յուշ բարձրացուցած զՅազարանկէք անունով կոթողը, արդեւ յուշարձաններէն մէկը կամ միւսը, եւայնի Տեսած են, կարգապահ, եւ՝ տեսած ենք, զիտենք՝ զիտութեամբ կամ ընազգով խոնարհած են քարերէն ցալ տեցուցած անոր խորխորհուրդ սգին առջեւ:

Յազարան, իրազորման, արժէքի սեփականով թէ արժանաւորին Հմայքը տարածելու գծով ճիշդ է այն ընդգծումը, որ՝

«Էլարպետի տեղագործութեան նշանակալի ուղեմիջը գարծու Սարգսարապետի Բալասարապետու տարած յազարանկի պատուին կառուցուած յուշակառոյցը: Այդ հարաշուի յուշարձանը, որը մարմնաւորում է հայ ժողովրդի հերոսական սիրամեք, քրտայի հետաքրքիր կոմպոզիցիոն յազարանք եւ գեղարուեստական արտացոլմամբ համաժողովրդական նախադաս ընթաց Ռ. Ս. Իսրայելեանին եւ նրա համահեղինակ ֆանդակագործներին: Յուշակառոյցի կարեւոր լրացումը կը լինի դրա մտ կառուցուող յուշարձանաբանի շէնքը»:

Ճարտարապետական իր մայր լեզուն զատ, Ռաֆայէլ Իսրայէլեան, նրբամիտ, բայց այս անգամ մեզի Հասկնալի՝ մայր յեղուով, յոգուածով եւ աստիճաններու աստե՛ն՝ խօսած է ճարտարապետութեան մասին՝ փոխանցելով վարակիչ լազարի մը վրայ Հիմնադրուած աստուր անակէտներ: Իրեն Հեռուած ընթերցողը կրթեք պիտի շտապայ իր էլիթներէն կրկուք մտնուան, մէկը դրասուր, միւսը՝ բերանացի, միշտ գիրական քերթքին մէջ, առաջինը մեց տարի առաջ, երկրորդը 1970ին, զիմպիտին է լինելու Նրեանի կնքանքը բանաձէնին հղբակակիչ Հանդիպման օրը:

Ահաւասիկ իրմէ քանի մը Հաստատուներ, որոնք այրուածով ու կիբքով ըսուած են եւ զուրկ չեն սուղեւային արժէքը.

— Մեր տեղածոր պէտք է է՛լ ունի քարորացնի հայ արուեստը, հայ մշակոյցը եւ հասնի այնպիսի աստիճանի, որ շատ հեռուներէք կրտայ: Եւ դրան մեք կազաղ եմ հասնել միայն այն շէպէտով, երբ կ'սանճէ մեր խօսքը, սեփակա՛ն խօսքը, հայերէ՛ն խօսքը:

— Առանց բնութեան, առանց բնութեան հետ զուգակցութեան, ճարտարապետութեան չի կզի եւ այտուհետեւ էլ չի կարող լինել:

— Հմարար չէ, որ մեր ճարտարապետութիւնը կենտրոնում ազգային լինի, իսկ կենտրոնից դուրս, ծայրամասերում՝ ոչ ազգային: Հարկաւոր է խորհել այն մասին, քէ ինչպէս անել, ինչպէս կառուցապատել, որ մեր ազգային ոգին, ազգային ճարտարապետութեան զիմպիտը պահպանուի ե՛ւ կենտրոնում, ե՛ւ կենտրոնից դուրս, ե՛ւ ծայրամասերում, մի խօսքով՝ ամէնուր: Սա պէտք է լինի մեր ուղեցոյցը եւ ծրագիրը»:


Այլուպէս, առանց այդ պայմաններուն, իր խօսքով դարձնալ՝ «Մեք կը լինեք ընդօրինակներ, անդէմ, անկարունք, անհայրենիք»:

Մէք է՛:

Եւ ո՞վ է ան, որ առանց դարուար այդ փորձին ու հոգեբանութեան բացած ճշմարտութեան ճանապարհէն լեզուով կրցած է սուղ գործ մը, որ զերծ ըլլար ընդօրինակութեան աղտալի կեիքէն ու ճակատադրուկանօրէն չըլլար շանդէմ, անկարունք, անհայրենիք»:

ճարտարապետ Իսրայէլեան ո՛ր միտի Հիմնալի կոթողներ կը կտակէ մեզի, այնու իր կենսագործին Հանուած խոր իմաստութիւն մը, ըստ սրում մենք՝ Հայեր, արուեստի մէջ կրանեք բարձունք մը նուանել միտի այն աստե՛ն, երբ բանեք զմեր խօսքը, սեփակա՛ն խօսքը, հայերէ՛ն խօսքը»:

Իր աստուղդան խորմաստ մէկ յոգուածին Հետ ընթերցողին կը ներկայացնենք «Մարգարապետ» յուշարձանախօսքին լաբք մը նկարներ, առեւտած՝ Վարուճան Մէթեանի ալգորիթմ:



ՌԱՅԱՅԷԼ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹԵԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՀԱՄԱՐ




Մենք՝ ճարտարապետներս, բախտաւոր ենք, որ ունենք մի հրաշք երկիր, որի ամէն մի անկիւնը մի ուրոյն աշխարհ է՝ անկրկնելի, անզուգական: Մենք բախտաւոր ենք, որ ունեցել ենք հանձարեղ հայրեր, որոնք, որպէս մեծագոյն շինարարներ, ժառանգել են մեզ իրենց սրտերը՝ դրած քարի մէջ, դրած ժպտութեան նիստ ու կացի մէջ:

Ու էլի, մենք՝ ճարտարապետներս, բախտ ունենք, եւ այն էլ մեծ բախտ, շինարարական Հայաստանը, նրա շնաշխարհիկ բնութիւնը, հայ ժողովրդին տալու այն բոլոր բարիքները, ինչին ընդունակ է արուեստների արուեստ ճարտարապետութիւնը:

Մենք մեծ կրօնասէրներ ենք և արուեստասէր պէտք է աշխատենք յայտն այդ նորաստի: Մեր ստեղծածը պէտք է էլ աւելի բարձրացնի հայ արուեստը, հայ մշակույթը եւ հասնի այնպիսի աստիճանի, որ շատ հեռուներից երևնայ: Եւ դրան մենք կարող ենք հասնել միայն այն դէպքում, երբ կ'ստանք մեկ խօսքը, սեփական խօսքը, հայերէն խօսքը: Դա կը լինի, անշուշտ, ժամանակի ողբով ասուած, ժամանակի ճարտարապետութեամբ յղեցած, բայց անպայման հայերէն ասուած, այլ կերպ մենք ճորը ասել չենք կարողանայ եւ կը լինենք միայն ընդօրինակողներ՝ անգէմ, անկողրուք, անհարկներ:

Ձգտումը՝ դրսից բերել լաւը, առաջադէմը, լինի դա կատարածքի ներքին կեանքի կազմակերպման մէջ, կոնստրուկտիւ մասերի մէջ թէ ճոր շինանիւթերի՝ միեւնոյնն է, այդ բոլորը շայն եւ համարձակ պէտք է օգտագործել, ինչպէս ժամանակին մեր վարպետներն են բերել, իւրացրել, թեկել եւ յետոյ հայերէն հնչեցրել: Նորը դրսից պէտք է բերել ոչ թէ նրան հնազանդութեամբ, այլ հպատակեցնելու, մեկ ծառայեցնելու համար: Բայց երբ Պրադիլ քաղաքից վերցնում ենք շէնքը անփոփոխ անդադրում Երևանում, դա ոչ միայն պատիւ չի բերում, այլև անգիտացնում եւ կաշկանդում է մեր ստեղծագործական միտքը: Օրինակներ չեմ բերում, նրանք, ցաւօք, շատ են:

Եւ այսպիսով, մի գեղեցիկ, աւելի ճիշդ՝ տխուր օր, մենք կը դառնանք օտար մեր իսկ հարազատ մայրաքաղաքում, որը իր ժամանակակից շէնքերով կարող է կորցնել սեփական դէմքը: Ահաւոր խօսքեր եմ ասում, որպէսզի մենք սթափուենք եւ լրջանանք: Վերջին տարիներին, կրկին ընդօրինակելով, մենք ընդունել ենք մեր քաղաքների շինարարութեան մէջ այս-




ԱՐՄԻՆԻՆԵՐԸ, ԱՐԱՐԱՏԸ ԵՒ ՊԱՐԻՍՊԸ

պէս կոչուած «ազատ կառուցապատման» մեթոտը: Սակայն, իմ կարծիքով, այստեղ էլ ընկնելով ձեռի յետեւից, մոռանում ենք նրա կիրառման հիմնական գաղափարը եւ անխտիր մեր բոլոր նորակառուցներում այն կիրառելով, ստանում ենք խայտարիչ, դիմագուրիչ, անսխտեմ շէնքերի կոտակում եւ յայտարարում, որ սա ազատ կառուցապատում է:

Ընդունելով ազատ կառուցապատման սկզբունքը, որպէս միակը, մենք կատարում ենք խիստ անսկզբունք դործ: Ստացւում է այնպէս, որ մենք այլևս իրաւունք չունենք ունենալ կանոնաւոր կառուցապատում, ասենք գլխաւոր փողոց կամ պողոտայ. որովհետեւ, եթէ շէնքերը իրար զուգահեռ դրուած լինեն այդ գլխաւոր փողոցին համապատասխան, ապա դա ամենախիստ ձեւով խայտում է «ազատ կառուցապատման» սկզբունքը: Այդ պատճառով էլ կանոնեցնում ենք ահաւոր չափերի բնակիչի տուն Սայաթ-Նովայի գեղեցիկ փողոցի վրայ եւ այն անպայման թեք դնում, որ խախտենք այդ փողոցի կանոնաւորութիւնը ու աղաղակենք՝ տեսէք, ինչքան համարձակ ենք: Ազատ կառուցապատումը հնարաւորութիւն է տալիս դասաւորել բնակիչի տները թաղերի խորութեան մէջ, յարմարելով բնական պայմաններին: Բնակիչի տան համար առաջնահերթ պայմաններից է արեւի առկայութիւնը եւ նրան պէտք է ուղղուած լինեն բնակիչի սենեակները: Սա հասկանալի է եւ լաւ: Բայց երբ մենք այն կրկնում ենք նաև մայրուղիների վրայ, աղաւաղում ճարտարապետական ընդհանուր պատկերը, միասնութիւնը, ամբողջականութիւնը, ողջ փողոցի ճարտարապետական տարածական ըմբռումը, ապա դա յանցանք է, ինչպէս եւ յանցանք է թումանեան փողոցի վրայ ամառային կինոթատրոնի արհամարհանքով թեք դրած մեծ ծաւալը:

Նորքի զանդուածը: Չզիտես ո՞րն է այստեղ փողոցը, ո՞րը բակը: Մի՞թէ, մտածում ես, վերացաւ հանդիսաւորութեան գաղափարը, մի՞թէ քաղա-



ՄՈՒՏԻՐԸ, ՅՈՒԼՆԵՐԸ, ԶԱՂԳԱԿԱՆՈՒՆԸ

քի այդ շրջանը չպիտի ունենայ իր գլխաւոր փողոցը, որտեղ քայլես ու գլխս ինչ-որ ճարտարապետական ընդհանրութիւն, ճարտարապետական կազմակերպուած միտք:

Բանն այնտեղ է հասել, որ էջմիածինն էլ նախագծուած է «ազատ» սխառեմով, ու այն էր քաղաքայարկ, ինը յարկանի բնակելի տներով: Այդ զողորմիկ քաղաքը կառուցապատուած ենք նոյն այն շէնքերով ու ձեւերով, ինչ որ Երեւանը: Ո՛ր է էջմիածին-Վաղարշապատը: Չկայ, չկայ այնպէս, ինչպէս չէլկայրի ճանապարհն է բունէլ Հոփոխիմէի տաճարը, որ խեղդուել է նորակառոյցների մէջ, կորցրել իր վեհաշուք տեսքը:


Մինչեւ ե՛րբ մեր քաղաքները սխեռք է կառուցապատուեն թէ՛ն շատ շաւ, բայց այժմ արդէն դիմազրկող համայնատարած արթիկ-տուֆով ու բնակելի տան տաղակալի միաստիպութեամբ:

Գորիս: Ո՛վ չէ հիացել լեռների մէջ շողշողացող այս քաղաքով: Բայց լաղը նա եւս կ'ողողուի արթիկ-տուֆով ու նա էլ անվերադարձ կը դնայ մեր ձեռքից:

«Բնութիւն, բնաշխարհ, լեռնաշխարհ, անբառամ գեղեցկութիւն», — հպարտութեամբ գոչում ենք մենք:

Իսկ յաճախ ինչպէ՛ս վատ ենք միտարեւում նոյն այդ բնութեան նըկատմամբ: Բաւական է նայել մեր դեղեցկուհի Սեւանի ափին, որ հասկանալի լինի, թէ ինչքան անփութ ենք զսեւում նրա հանդէպ:

Ո՛ր է ճարտարապետի զգոյուն սիրտը, նրա սէրը, երբ նա մեր աչքի առջ փակում է Արարատն ու Արագածը, Նորքի այգիները, Հրազդանի ձորը: Սա, ի հարկէ, ժամանակակից ճարտարապետական կառուցապատման ամենալուրջ հարցերից է, որ մեզ մօտ մտառուած է: Երեւան անունը տալիս եւ



ՋԱՆԱՍՏՈՒՆԸ

լեզիս մենք յուզուած, որիս տու՛մ ենք, բայց զորմնականու՛մ մտանում նը-
րան բնորոշոյ հրաշալիքնէլը եւ, տհնատական շահերով տարուած, ծածկու՛մ
այլ տեսարանները, կատուցապատու՛մ այնուղ, որտեղ դա անթոյլարելի է:

Առաւել վատ ենք վերաբերում ձեր բնութեանը մայրաքաղաքից
դուրս: Անա Ղախանը, որի թաղն է ազամանդալատ Խուստուրի ետտղաղաթը:
Եւ փակել ենք նրա տեսարանը, ու էլի սնվեցադարձ: Ո՞վ է փակել: Ճար-
տարագետը: Ստիպե՞լ են այդտեղ չէնք կատուցել: Պէտք է՛ս պալքարել, բո-

դոքել: Ծարտարապետի աչքը պէտք է լինի ամէնուր: Մեր գիւղերը աննախնիքաց թափով կառուցապատուում են նոր շէնքերով եւ յատկապէս քարէ շատ լաւ տներով: Սա անշուշտ քարեկեցութեան նշան է, որ չափազանց ուրախացնում է մեզ: Բայց քիչ չեն այն տները, ուր անիմաստ շոռայութիւն է թոյլ տրուում, եւ այն սղեղ, անտրամարան շէնքերը, ուր չի զգացում հոգատար ճարտարապետի օգնութիւնը:

Մենք հսկայական գործարաններ ենք կառուցում մեր փոքրիկ երկրում, ահռելի օտրածութիւններ զբաղեցնում այն ժամանակ, երբ մի քանի անգամ աւելի քիչ հող կարող ենք օրտագործել այդ գործարանների համար, եթէ շօղատարծենք այն տիպարային նախապծէրը, որոնք մի յարկանի են նախատեսում այդ շինութիւնները:

Գինու գործարան ենք կառուցում խաղողի այգիների տեղում, որտեղից հումք ենք ստանում: Իսկ եթէ այն լինէր մի քանի յարկանի, ապա խաղողը կը փրկուէր ոչնչացումից: Մի՞թէ լիմոնաղի կամ հացի գործարանները չեն կարող լինել երեք-չորս յարկանի: Ու մենք անխնայ շոռայում ենք հողերը, շոռայում ե՛ւ քաղաքներում, ե՛ւ Լոռուայ, ե՛ւ Դիլիջանի այնքան թանկարժէք վայրերում:

Էլ ո՞ր օրուայ համար է տեխնիկան, շինարարական հզօր արդիւնաբեկութիւնը, ինչուստրացումը, ժամանակակից հնարասրութիւնները:

Մեզ անհանգստացնող հարցեր շատ կան, որոնց մէջ մենք՝ ճարտարապետներս, նոյնպէս մեղաւոր ենք:

Եղեանին նուիրուած ճարտարապետական կոթողների նախագծերի ցուցահանդէսը խիստ նշանակալից էր այս առումով: Մեր երեսասարդութեան մի մասը լաւ չի պատկերացնում իր դերը հայ մշակութի մէջ: Այդ ցուցահանդէսում կային այնպիսի ախատանքներ, որոնք ոչ մի կապ չունէին Եղեանի համազգային ողբերգութեան դաղափորի հետ: Այս իսկ տեսակէտից լրիւ բաւարար չէ եւ այն նախագիծը, որով այժմ երանանում է Եղեանին նուիրուած յուշարձանը: Պէտք է պարզ ասել, որ դրա պատճառն այն ոչ ճիշդ մեկնաբանումն է, որ դրում էր մրցանակաբաշխութեան պայմանների մէջ:

Այստեղ շեշտը դրում է հիմնական մտքից հեռացող ինչ-որ ցնծութեան, բարձր տրամադրութեան վրայ: Ահա հիմա մտածում եմ. իսկ ի՞նչ պիտի արտայայտի այն յուշարձանը, որ նուիրուելու է Հայաստանում սովետական կարգերի հատուածանը: Մի՞թէ այստեղ չէ, որ պէտք է նշուի ամենայն ուղեւորութեամբ հայ ժողովրդի դարաւոր արիւնահեղ պատմութիւնից ելած նոր Հայաստանը, երջանիկ հայրը: Կարծում եմ, որ ամէն ինչ իր անունով պէտք է կոչուի, սուղը սուղ է, ցնծութիւնը՝ ցնծութիւն:

Ծառայի կողմեր շատ ունենք: Ամենակարեւորը մեր ճարտարապետութեան ինքնատիպութեան պահպանման հարցն է:

Անկառուած, սա դժուարագոյն հարցն է արդի ճարտարապետութեան մէջ. բայց հենց այդ դժուարագոյն խնդիրն էլ պահանջում է ոչ թէ նահանջել եւ անձնատուր լինել մողային, այլ քրանաժան աշխատել, պայքարել եւ սղեւորէն ձգտել այդ մեծ խնդրի լուծմանը:

ԲԱՅԱՅԷԼ ԻՍՐԱԵԼԻԱՆ

(«Գրական քերթ», 1967, քիւ 27)

Լ. Մ Կ Ր Տ Ձ Ե Ա Ն

Ո՞Վ Է ՃՇՄԱՐԻՏԸ



Իւրաքանչիւր մարդկային էակ, գիտակցութեան մակարդակից զիտելով, աշխարհ է զայիս ակամայ եւ միաժամանակ՝ օժտուած կամային յատկանիչներով: Քրոմազովսյին նախախնամութեան տնօրինութեամբ անտեսանելին տեսանելի է դառնում, աննշանը նշանակալի. վերջուտին աշխարհ են մղում «մարած» էակների կրկնօրինակները, ամբողջական ու համակարգուած մանրաշխարհները, իրենց կառոյցով ու զուպանակներով, ազդելու եւ հակազդելու բնազդական մըղումներով, ածելու եւ միջավայրին շրփելու իւրայատուկ օրինաչափութիւններով: Նախասահմանուած հունը որոնելով կամ գտնելով ընթանում է մարդկային կեանքը իր դոյութեան արեւածագից մինչեւ արեւմուտ եւ վկայ լինում նոյնպիսի ընթացքների իրականութեանը:

Իւրաքանչիւր կեանք գիւտերի ու կորուստների շարք է, ներքին ու արտաքին բախումներու մրցադաշտ, հաստատումների եւ հերքումների զննութիւն, թէեւ «իւրաքանչիւրը» մնում է եզակի, իր հոգսերով ու ձգտումներով, եւ խուսափում է հաստատութեան նշանից: Քանզի նոյն իրականութեան մաս կազմող եւ իրենք իրենց նոյնպիսի գոյութեան առաւելագոյն իրաւունքներ վերապահող էակների աճման շտապիղջներն ու պատկերասրահները դրսեւորում են տարրեր մակարդակով: Լարուածութեան եւ ձեռքբե-

րումների աստիճանը կանխորոշում է ընկալումների որակի ու վարքագծերի բընոյթի չափն ու կշիռը:

Ոմանց գիւտերն ու կորուստները, ձգտումներն ու բախումները դասաւորւում են սոսկ միեւնոյն՝ նիւթերի փոխանակման հարթութեան վրայ: Մնացեալ ամէն ինչ այդ տեսանկիւնից է դիտուում: Ոմանց հոգսերը բխում են ապրող էակների միջեւ անմիջական շփման կէտեր որոնելու տրամադրութիւնից: Ոմանց ուշադրութիւնը բեւեւում է կեանքի յարանուն հակասութիւնների վրայ եւ դրանից էլ անընդհատ նորանոր հարցեր են ծնւում, մնալով սոսկ հարցեր կամ ծօտենալով հաւանական պատասխաններին: Ոմանց տեսողութիւնը փչւում է թողր սահմանները եւ հետեւապէս ընկալում անհամեմատ ասելին, դրանով իսկ փոխելով ընթացիկ չափանիշներէ համակարգը, եւայլն: Եւ ահա այսպէս կեանքի մէջ թաւալում են կեանքերը՝ ինքնուրոյն մնալու եւ յարմարուելու հարկադրանքի տակ, բազմութիւնից անկախ եւ բազմութեան մէջ:

Մարդկային կեանքն ընթանում է անմիջական մղումների, անմիջական բախումների եւ անմիջական մերձեցումների ու բաժանումների՝ հրամայականի ներքոյ: Թէեւ իւրաքանչիւր օրինաչափութիւն տիեզերական խորքերից է բխում ու դաիս, ըստ էութեան տուեալ անմի-

գնահատմանն ու դադարեցնելի վերադնունթեանը: Իւրաքանչիւր կենսագրութիւն ինքնին քուական է հարցերի այնպիսի քանակ առաջ քաշելու համար, որ դա միտքն զբաղեցնի ու պատասխանի սպասի մինչև կեանքի վերջը: Կան, անշուշտ, սուսեկ կամ նուազ էական հարցեր, որոնք ի վիճակի են յարուցանելու հետաքրքրութեան մեծ կամ փոքր շրջագծեր: Հանրային մակարդակով արծարծուելու կոչուած են այնպիսիները, որոնք հանրային ճակատագրից են բխում: Այժմ ազդող հայ մարդու համար է՞նչն է աւելի հրատապ ու մտահոգիչ, քան ազդային ճակատագրի հարցը: Եւ որոնցից իւրաքանչիւրը իւրայատուկ լուսարանութիւն է պահանջում՝ ամէն կարգի կողմնորոշումներից առաջ: Ազգային ճակատագրի, իբր կանոն, պայմանաւորուած է հայրենիքի գոյութեամբ ու ճակատագրով, ինչ որ արտայայտութիւն է դոնում անմիջական քաղաքական յարցութեան մէջ: Հայոց հայրենիքի հարցը, անտարակոյտ, բազմաշնորհ է եւ նոյնպիսի մտեցումների նիւթ: Բայց մշտափոփոխ իրականութեան մէջ առաւել վշտահոգութեամբ կողմնորոշուելու համար դիտակցութեան հայեացքն առաջին հերթին ուղղուած է այն կողմը, որը շօշափելիօրէն գոյութիւն ունի եւ որի հակասական ճակատագրի մէջ հիւստեւել ու խրտացել են անգեայի, ներկայի ու ապագայի թելերը, ինքնամփոփ կծիկ կադմելով: Կծիկը բացելով միայն կարելի է պատկերացնել, թէ հայրենիքի անցնայն ու ապագան որքանով են ներկայ ներկայի մէջ, որքանով է երաշխաւորուած այն, ինչի որ մկտում է հայկական միաջը, կամքը եւ հոգին:

Անյիշելի ժամանակներից ի վեր կար հայոց հայրենիքն իր քնիկներով: Այնուհետեւ, իրադարձութիւնների բերումով, եղան ժամանակներ, երբ այդ հայրենիքում սահմաններ դժուեցին ոչ թէ ներքին մարտական բաժանման սկզբունքով, այլ հաւասարապէս օտար ուժերի սուրիների միջեւ: Հայրենատրոհման այդ իրողութեանը յաջորդեցին այլ, առաւել տաժա-

նելի իրողութիւններ՝ ազդի արմատական բնաշնմանն ու հայրենազրկման փորձերն ու իրադարձութեանը: Իսկ ազդի կիսովին փրկուած մասը վերստին նուաճուեց զըրտի ուժերի կողմից ու զլանի տակ դրուեց կապուելով այլեւայլ, խորթ ու օտարոտի առաջադրանքների հետ: Անցան տասնամեակներ, իրադարձութիւնները յաջորդեցին միմեանց, փոքրիկ միթարութիւններին զուգընթաց ծաւալուեցին մեծ ոգրբեքութիւնները, ազգային կորուստները կուսակուեցին կորուստների վրայ, մարդկային գործունէութեան մղող գործի ամէնօրեայ յորձանքներով, դնալով առաւել պարզուեց նրբեմնի՝ դեռեւս ի սկզբանէ սնանկ «դադարեցնելի» կատարելու ու անվիճելի սնանկութիւնը, միտամանակ շտապարուած» արժէքների փաւերակուն կշիռը, ճառագայթող ուժը: Այդ այդպէս է, թէեւ շատերի մտքում դեռ շարունակուած է շփոթութիւնը, տարակուսանքը եւ կուրուքիւնը: Իմաստակների քանակը աւերելու կանգուն է, պատրաստ պաշտպանելու ա՛յն, ինչ որ բազմիցս հերքուել է կեանքի ու մտքի կանց կողմից:

Ուստի եւ, այդուհանդերձ, հարցերը յամառօրէն հետապնդում են մտածող մարդկանց, նոյնիսկ պատասխանները գտնուելուց յետոյ: Կարելի է քնտրել ու կոնդ առնել այս կամ այն առանցքային հարցի վրայ, փորձելով ամփոփել նաեւ միւս հարցերի պատասխանները: Կարելի է, օրինակ, առաջին հերթին հարցնել, թէ տասնամեակների ընթացքում տեղի ունեցած որբերութիւնների ու կորուստների համար զո՞ւմ է մեղաւորը կամ ցրտաստիանատու: Բայց այժմ դա չէ ինձ զբաղեցնում: Գործուած մեղքերը շատ են, մեղաւորներն անհաշիւ, անուսնի ու անտնուն, դէմքով ու դիմակով, դահրնկէց ու պատուանդանի վրայ, ողջ կամ մեռած, ու այսպէս շարունակ: Մեղաւորների ճշգումը իմաստ ունի կամ կ'ունենայ գործնականում նրա՛նց համար, ովքեր ի վիճակի ու կոչուած են դատելու, դատապարտելու եւ պատժելու, ըստ ընկալելու ու սահմանելու հան-

բանանալ օրհնադրութեան, Կայ նաեւ, անշուշտ, մասաւոր ու բարոյական դասապարտման ոչ անկարելոր իրողութիւնը, ինչ որ, սակայն, այս պահին վշրիպում ու դուրս է մտնում իմ ուշադրութիւնից, առաջնութիւնը զիջելով մի այլ հարցի:

Բուրբ հակասութիւնների ու տարակարծութիւնների խորքից վեր է խոյանում առաւել ուսանելի մի հարց՝ «Ո՞վ է ճամբարիտը»: Տասնամեակների ընթացքում հրայարակ իմած ու գործած ուժերի վարձատրութիւնը ի՞նչ շափով են արդարանալի ու ի՞նչ շափով արդարացած կեանքում ու սերունդների աչքում: Ո՞ր՝ այսպէս ասած՝ սկզբունքները ի՞նչ ճակատագիր ունեցան: Ո՞ր արարքները ինչպիսի՞ արդիւնքներ տուին: Մարդկայնութեան անուանից ճառող ու դրժող ուժերը արդեօք մարդկայնութեան էին ձգտում, թէ այլ բան: Նրանք գիտակցում էին իրենց արածները, թէ յիմարար արկածարնդրութիւն էին սերմանում: Հարցե՛ր, հարցե՛ր եւ դարձեա՛լ հարցեր, որոնք ընդունելի էին միւսից ու նախորդում օրիշների: Այսօրուայ դիրքերից նայելիս՝ ինչպէ՞ս է երեւում իրականութիւնը: Ծննդարութիւնը ո՞ւմ համար աւելի լատ սորձէր ունէր, ո՞ւմ պատկերացումները հաւաստի դուրս եկան, անկախ այն բանից, թէ նրանք որ յայտնական կամ պարտեալ բանակներ մաս էին կազմում: Ծննդարութեան գինւորներին ու նահատակներին ճանաչելը աւելի կարեւոր է ապրողների համար, որպէսզի լուսաւորուի ու հաւաստուի ընտրած ճանապարհը:

Նախ՝ այս շարադրանքի մէջ անուններ ու թուականներ յիշատակելու հարկ չկայ, քանի որ ինքնին հասկանալի է, թէ ո՞ր իրազարմութիւնների մասին է խօսքը: Կարիւրը անուններն ու թուականները չեն, այլ երեւոյթները, դէմ դիմաց կանգնած ուժերի պայքարի բնութիւն ու հետեւանքները: Այն ձեւերը, որոնք իրենց ծննդավայրում իշխանութեան հասնելուց ու ամբանալուց յետոյ տիրապետութիւն հաստատեցին նաեւ հա-

յոց հայրենիքի մի մասում, գործում էին նոյն սկզբունքներով ու զէնքերով, նոյն յաւակնութիւններով ու խոստումներով: Միեւնոյն աղբիւրից էին բխում այն կոչերն ու յայտարարութիւնները, որոնք հնչում էին «Մեկկայնից էլ հին Մտկոյում» եւ «Ենթոյ նոր Երեւանում», Արեւմուտքի փողոցներում մարտապանէշներ երազող խմբերի հաւաքոյթներում եւ Արեւելքի փոշոտ ճանապարհներին յենուած վանգուստների զլիւնջ վեր: Նոյն հեղեղն էր սպառնում ամէնքին:

Եւ այսպէ՛ս հայոց հայրենիքի մէկ մասում եւս քաղաքական իրականութիւնը ընդհանուր պատմական աղէտի մէկ արտայայտութիւնն էր եւ բոլոր զէպքերում պէտք է դիտել իբր այդպիսին: Ուստի՝ դերակատարներն ու թուականների յարադակասութիւնը այնքան էլ էական չեն: Աղէտները, բնական թէ պատմական, տարբային երեւոյթներ են, որոնց յայտնաբերման համար հարկաւոր է համապատասխան ուժային զօրութիւն: Երբ այդ զսպիլ զօրութիւնը բացակայում է՝ աղէտն անխուսափելի է դառնում: Հետեւանքների բուրբ տարբերը չէ որ պէտք է բիւզնել հարուածող ուժի բնուանելի կամ անբնուանելի լինելու նախադրականից. այնինքն՝ նուաճուած տեղամասում ծաւալուող հետագայ իրադարձութիւնները ամբողջովին չպէտք է պայմանաւորել նուաճողի ներկայութեան հանդէպ առկայ տեղական տրամադրութիւններով: Երբ աղէտն ընդհանուր է եւ տիրական՝ անհատների ու խմբերի ներքին դիրքորոշումը յաճախ չի համրելնում նրանց գործողութիւնների հետ, երբեան են դալիս այլեւայլ երկուտութիւններ:

Բայց եւ այնպէս, այդ անվիճելի իրողութեան կողքին, եղել են եւ կան տարբեր, որոնք հանդէս են եկել եւ շարունակում են այդպէս վարուել՝ աղէտը ձի սրտէ՛ս արդարացնելու, այն հանրային լինելութեան օրգանական պահանջներին հետ նոյնացնելու, միանգամայն բաղձալի համարելու շիրքերից: Այդպիսինները ո՛չ միայն աղէտը մտքով ու սրտով

մերժողներ չեն, ոչ էլ նրա զոհեր, ոչ էլ նոյնիսկ Հարկադրեալ Համակերպողներ, այլև նրա տարածողներն են, ներկայացուցիչները: Երբ Հարց է տրուում, թէ վերջին հաշիւով «ո՞վ էր ճշմարտը» կամ «ո՞վ է ճշմարտութեան», նկատի են առնուում նաև աղբյուրները, իրենց նախորդներով ու Հնարաւոր ժառանգորդներով: Հզօր ուժերի ճնշման տակ ինքնուրոյն կեանքի նախապայմաններից զրկուած աղբերի մէջ առկայ այդպիսի ներքին տարրերը (յաճախ ցեցերը) որոշակի կողմ են Հանդիսանում եւ այս կամ այն շափով պատասխանատու՝ եղած ու լինելիք իրազարժութիւնների համար: Աստուծո՞ւ է իբր ընդհանուր ելակէտ, նկատի առնելով ոչ թէ Հարկադրանքով, այլ կամաւոր գործուած արարքները:

Երբ աւելի քան 50 տարի առաջ աշխարհի մէջ վեցերորդ մասում աէր ու տիրական դարձած ուժերը երգւում էին եւ Հրամանների արձակում գումաշխարհային յեղափոխութեան անունով, ներքան մարդկանց երեւակայութիւնը բորբոքում էին դաշիք աշխարհի գրախտային տեսիլներով եւ գոյութիւն ունեցող կամ իրենց պատճառած բոլոր դժուարութիւնները, թշուառութիւնները, անարգարութիւնները, կամայականութիւնները Համարում ճշմանակաւոր: Այսօր աւելի քան պարզ է, որ յիշեալ եւ նոյնպիսի բազմաթիւ այլ պատուհանները ո՛չ միայն «ճշմանակաւոր» չէին ու չեն վերացել, այլև աւելի են խորացել ու աճաւոր շափերի հասել:

Արդ՝ ո՞ւմ կողմն է ճշմարտութիւնը: Նրա՞նց, ովքեր գործում ու խօսում էին ամբողջաբարութեան կանոններով, խաբուում ու խաբուում, թէ՞ նրանց, ովքեր հաւատարմութիւնը չէին տեսնում շափազանցեալ հաւատարացումների ու խոստումների մէջ: Քանզի տարրական տրամաբանութիւնը թելադրում է, որ չի կարելի հաւատ ընծայել նրանց, ովքեր լազայալ կամայականութիւնների ու անարգարութիւնների ճանապարհով են ուղղում իբր Հասնել դաշիք լուսադոյն կեանքի թագաւորութեան:

Աւելի քան 50 տարի առաջ տէր ու տիրական դարձած ուժերը գործում էին «դասակարգային պայքարի» նշանաբանով, շատ դէպքերում գործը հասցնելով «դասակարգային բնաջնջման» քաղաքականութեան: Վերջնական նպատակ էր համարւում «անդատակարգ Հասարակութեան» կառուցումը եւ այդ «նպատակին» զոհարելու գասակարգ յիշեցնող ամէն ինչ: Ծիշէ է, «անդատակարգ» անմիջական խոստում չէր, բայց դրանով էր արդարացւում ընկերային քայքայման իւրաքանչիւր միջոցառում: «Շահագործող դասակարգներ վերացան» եւ «կառուցուեց սոցիալիստական Հասարակարգ»՝ կոմունիզմի նախադուռը, այն էլ ի՞նչ գնով ու շարքային ժողովրդի գրկանքներով: Այժմ պէտք է տեսնել, թէ ինչպիսին է այդ Հասարակարգի վիճակը, ինչպիսի նոր գիւտեր է տրել շահագործման մեքենան, դասակարգային ինչպիսի բեւեռացումներ են օրինականացուել եւ որքա՞ն է իրել ազնիւ աշխատանքի վարկն ու կշիւրը Հասարակութեան աշքում: Բայց գաղափարախօսական ու քաղաքական աշխատութիւնը շարունակուում է, խաբեալայութիւնը հրաշքեր գործում: Արդ՝ ովքե՞ր էին ճշմարտութեան ուղղութեամբ ընթանում: Նրա՞նք, ովքեր սոսկ երեւակայութեամբ «անդատակարգ Հասարակարգ» էին կառուցում եւ միաժամանակ իրար խառնում ընկերային փոխարարութիւնների քննութեան դիմացած մեկուոր, թէ՞ նրանք, որոնք գտնում էին, թէ Հասարակութեան ընկերային կառուցը ինքնին բարդ համակարգ է եւ ուստի աստիճանաբար ու զգուշութեամբ պէտք է դիմել այս կամ այն վերահատուցման, այլապէս «յօնքը շտկելու տեղ աչքը կը Հանուի»:

Աշխարհակալական ուժերի բոլոր ներկայացուցիչները իրենց ամենածանր Հարուածը Հասարակ աղբային ու Հայրենական ըմբռումներին: Այդ ասպարէզում միայն «նախապայաւորունք» եւ «անցեալի վերապրուկներ» տեսնելով, նրանք կոպտօրէն խարխիւցին ազգային գոյութեան բոլոր հիմքերը եւ բոլոր միջոցներով դաժ

բարձրացրին Հակաղգային ուժերին: Այժմ միանգամայն ակնյայտ է, որ այսպէս կոչուած «միջազգային կոմունիզմի» ներքին պատկանման գործում առաջին տեղն է բռնում ազգային հանգամանքը: Նոյնիսկ իշխանութեան գլուխ անցած կոմունիստները, եթէ ուզում են մնալ իշխանութեան վրայ եւ պաշտպանուել նոյնազաւան, բայց մեծութեամբ աւելի հզօր պետութիւնների ոսնձգութիւններից, — վերջին հաշուով ապաւինում են «ասպալուած» ազգային իրականութեանը, ներքին կէտ ունեցող ուժերի աջակցութեանը: Այդ միտումն ու ձգտումը աննշան չէ նաեւ բուն Խորհրդային Միութեան ներսում, թէեւ, անշուշտ, արտայայտուելու անհամեմատ նուազ հնարաւորութիւններով: Ազգային սկզբունքը վերտօնի հրապարակ է հանում՝ այսպէս թէ այնպէս: Մեծ կարուստներից յետոյ մեծ յոյսեր են ծնւում, այդ ուղղութեամբ էլ բացայայտում է ապաքինման ընթացքը:

Արդ՝ ովքե՞ր էին արտայայտում գալիք սերունդների կամքը: Նրա՞նք, ովքեր սանակորի էին տնում ազգային գոյութեան ու ազատութեան բոլոր կուսաները, թէ՛ նրանք, որոնք օրհասական պայքարի մէջ եղունգներով էին պայտապանում այդ գոյութիւնն ու ազատութիւնը, զոհուած՝ առանց անմատուց լինելու: Ազգային անկախանդ գոյութեան գիրքերի վրայ մաքառողները ամենազէտ իմաստուններ չէին, այլ հիմնականում համեստ գիտելիքներով աշխատաւոր մարդիկ, բայց առողջ բնազդներով, անխաթար զգայարաններով եւ կեանքից բխող ողջամիտ պատկերացումներով: Մինչդեռ այդ դիրքերի դէմ անընդհատ դնդակոծողների շարքում բաւական զգալի թիւ էին կազմում այստեղից-այնտեղից շինու ազիտելիքները հաւաքած իմաստակները:

Այսպէս կոչուած «չեղափոխական իշխանութեան» գործունէութիւնը սկզբից եւեթ ամբողջովին խարսխուած էր տնասանձ աւարեկութեան ու մարդասպանութեան վրայ: Դա միայն կարիքի հե-

տեւանք չէր, այլ նաեւ աշխարհաընկալման ու աշխարհայեացքի առանցք: Իրոնութիւնը ճանաչում էր իր բոլոր վերափոխութիւնների ամենահիմնական միջոց, ինչ որ իրականում երբեմն դառնում էր ինքնանպատակ եւ պարզապէս ներքին վառելանիթը միշտ չոր պահելու պայման: Իրական թէ արհեստական զստակարգային թշնամիների» արիւնով հարթած իշխանաւորները, որոշ ժամանակ անց, այլեւս չկարողացան դիմանալ հերթական փորձութեանը եւ սկսեցին բզկտել միմեանց, ջարդելով ամբողջ սերունդներ եւ իւրաքանչիւր իր հերթին զոհ գնալով հրապարակ եկող աւելի ճարպիկներին: Այս, իր ծաւալով չիրաւի աննախնայ երեւոյթի առդը ընկած էր բուն շարժման հիմքում եւ սկզբից եւեթ տեսանելի ու կոակելի էր շատերի համար: Քանզի բռնութեան խելակորոյս պաշտամունքը չէր կարող աւելի տանելի արդիւնքների հասցնել: Եւ ահա տասնեակ միլիոններ այդ պաշտամունքի դոհը դարձան ամենազոհելի պայմաններում: Արդ՝ ո՞վ էր ճիշդ տեսնում իրականութիւնը եւ կանխատեսնում զայլքը: Նրա՞նք, ովքեր իրենց սկզբնական ոճիրները արգարացրել էին զգասակարգային թշնամիների դէմ անողք լինելու անհրաժեշտութեամբ, բայց միաժամանակ զբարձր հուսմանից» ճառում, թէ՛ նրանք, ովքեր ոճիրների միջոցով իշխանութեան տիրանալն ու այդ իշխանութիւնը պահելը ինքնին արդէն համարում էին անթոյրարելի եւ ամէն տեսակ վաանգներով յղի՝ բոլոր ժամանակների համար:

Այս կարգի յիշեցումները կարելի է անսահմանօրէն շարունակել: Իսկ արդէն յիշածների հիման վրայ էլ այսպէս ասած լեռնաշափ հատորներ կարող են շարադրուել: Իւրաքանչիւր դէպքում տրուող «ո՞վ է ճշմարիտը» հարցը հենց իր մէջ պարունակում է պատասխանը, եթէ աչքի առնել բերենք միայն եւ միայն պատմական ու այժմէական զուտ իրականութիւնը, այլ ոչ թէ այդ իրականութեան խեղաթիւրուած պատկերումները, իշխանաւորների ու նրանց կամակաւարների

կողմից հրամցուած ու հրամցուող ապակողմնորոշիչ ինքնազոյութիւնները: Եթէ արտայայտուած են մարդկանց հետ խօսելու եւ հասկնալի լինելու ակնկալութեամբ, պէտք է գոյութիւն ունենան եւ իրեն իրենց համապատասխան անուններով կոչելու լեզուաաարբեր ու արամագորութիւն, պէտք է մշակուեն, փոխադարձօրէն ճանաչուեն ու յարգուեն որտակի լափանիւններ, այլապէս գուր են միմիանց հասկնալու եւ հակադիմացութիւնը փորձերը, թէ՛ մասնակի եւ թէ՛ ամենայն մակարդակներով:

Արդ՝ ընդհանուր յայտարարի բերելով մինչեւ հիմա ասուածները եւ աչքի առջեւ ունենալով յատկապէս աւելի քան 50 տարի առաջ ախարհի մէկ վեցերորդ մասում իշխանութեան տիրացած ուժերի քաղաքականութեան բնայթն ու հետեւանքները, իշխանաւորները եւ ընդդիմադիրների փոխադարձ պայքարի հանգամանքները, մի անգամ եւս յիշենք, թէ բոլոր դէպքերում ռո՛վ է ճշմարիտը: Անկախ՝ մարդկանց դիրքից ու խօսքերից, յաղթողների կամ պարտուողների բանակին պատկանելուց:

Ճշմարիտ էին բոլոր նրանք, ում համար մարդկային ազատութիւնը իմաստ ունէր եւ անկարելի էր գոհարեւել վերացական ու անիրական կարծեցեալ զբարիքներին: Ուրեք մերժում էին բռնակալութիւնը իր հիմքով ու բոլոր դրսեւորումներով: Ուրեք մարդկային ուղղակի փոխարարներութիւնները գերազատում էին զբասակարգային պայքարից թելադրած պատրանքներից ու արկածախնդրութիւններից: Ուրեք բժրոնում եւ հաշուել էին առնում ազգային իրականութեան վաւերականութիւնը, գրանից բխող քաղաքակրթական ու մշակութային արժէքների պահպանման անհրաժեշտութիւնը: Ուրեք զգուշի էին համարում

մարդատեսչութեան բոլոր ւստութիւնները՝ եւ մարդուի ճգնելու, խեղանգամ դարձնելու, դիմադրելու, անբան էակի մակարդակին հասցնելու միտումով յորինուած «օրէնքները»: Նրանք, ուրեք իրենց այդպիսի մտայնութեան ու վարքադի համար լուսութեան դատապարտուեցին, հայածուեցին, քանա ու աքոր ճաչակեցին կամ զոհուեցին: Այդ լուսկամ քացայայտ դիմադրութիւնը վերջին հաշուով, այս կամ այն չափով կասեցրեց մարդատեսչ ուժերի գրոհի նախնակուն թափն ու ամբողջական յաղթութեան հասնելու հնարաւորութիւնները: Այդ դիմադրութիւնը անպայման երաշխիք է նաեւ ապագայ վերափոխումների համար: Եթէ վաղը կամ միւս օրը համատարած խաւարը փարատուի եւ վերապրող հասարակութիւնը աղատուի կապանքներից ու իր գլխի տէրը դառնայ՝ դրա համար նրա շնորհակալութեան խօսքը կ'ուղղուի ոչ թէ բռնակալութեան յեղադարձ հանդիսացած ու նրանից օդարուած իշխանաւորներին եւ նրանց կամակատարներին, այլ, ընդհակառակն, բոլոր անմեղ հալածուածներին ու զոհերին, որոնք իրենց առողջ անհաշտութեամբ ու աննահանջ պայքարով բարձր պահեցին բնութիւնից ժառանգած մարդկային կոչումը, պաշտպանեցին մարդկային արժէքները եւ դրանք իւրաքանչիւրն իր հերթին, իր կեանքով ու մտնով, կոտակեց դալիք սերունդներին: Բարոյական ճշմարտութիւնը, այստեղ արժէ ընդգծել, երբեք բռնութեամբ յաղթողների խեղադար ցնծութեան մէջ չէ, այլ սերնդից սերունդ հաւատարմօրէն փոխանցուող ու ճառագայթող մարդկայնական մնայուն արժէքների: Կեանքը վրկայում է, որ այդպիսի արժէքներ գոյութիւն ունեն:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ե Ա Ն Ա Ն Մ Ի Ջ Ա Կ Ա Ն

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

X

«Բանաստեղծներու փիլիսոփան» տիտղոսին աւթանացած էլ Մաարրիի մահով սկսաւ իջնել արաբական սոկիւարուն վարադօրր: Անոր անհետացումէն ետք՝ Հազիւ ըսելի ճիշեր:

էլ Մաարրիէն մինչեւ Ճպրան ու Մութրան լուսաւոր ո՛չ մէկ անուն: Արաբական քաղաքակրթութիւնն Հետ՝ նաե՛ւ գրականութիւնը կ'ապրէր անկման առաջին վայրկեանները: Արքունիքի զեղխ կեանքը, կաշառակերութիւնը, զեղծարարութիւնը, սեռային սանձարձակ տրամները, դաւադրութիւնը, եւ ի՛ մասնաւորի սովեզարու ծնունդ սովեզիկ լեզուին նահանջը՝ եղան այն հիմնական սրտանոտները, որոնք արաբական բանաստեղծութիւնը եւս առաջնորդեցին զէպի անդունդ:

«Գուրամ»ի ճոխ լեզուն կ'ապրէր լճացման վտանդը: Վերանորոգման որևէ փորձ հաւասար էր սրբապղծութեան: «Գուրամ»ի սուկեղիկ լեզուին ու ժողովուրդի խօսակցական լեզուին միջեւ օրքստօրէ ծաւալող անջրպետք եւ առաջինին յամառ քարոցումը նախանշաններն էին զալիք մեծ վտանգին: Ներքին խոր ակերէ պոռթկացող ճշմարիտ բանաստեղծութեան փոխաբէն, երեւան եկաւ արքունիքի՛ եւ Հարէմական զեղխ խնջոյքներու կարեւորագոյն զտոյրէն նկատուող անբովանդակ ու անդիմադիժ առաջափութիւնը՝ փանթէզի-բանաստեղծութիւնը:

Անձանօթ տեսլիքի բոցերուն մէջ սղջակիզուող ընտրեալ բանաստեղծներու ուրոյն ձայները չէին լսուեր ալլիւս, վասնզի բանաստեղծութիւնը լեզուական մարզանք մըն էր, իսկ բանաստեղծը՝ արքունիքին յղվացած յանձնակատարը:

Տաղաշարի եւ արձակ մըն էր բանաստեղծութիւնը: Բառապաշար ցուցադրող Հանգէտ մը՝ յար ու նման մկաններու ցուցադրութեան, կամ՝ յաջողագոյն պարագային, մինչ այդ ստեղծուած դրական ծաղկանոցներէն փունջ կազմելու արհեստ: Այս եղաւ պատճառը, որ բառերը ըլլան պաշ, անշունչ պուպրիկներ, իսկ քերթուածը՝ անհորիզոն ստեղծողներու թիւում:

Այսպէսով, բանաստեղծին գլխաւոր մտահոգութիւնը Հանդիսացաւ ունկնդիրի ականջին հասնելի երաժշտութեամբ ու մեղմ բառերով երկնայեակ տաղեր գրել: Բանաստեղծութիւնը շփոթուեցաւ արհեստին հետ, իսկ բանաստեղծը, Ըպն Ուաքի՛ն էլ Թանկիւրի բացատրութեամբ՝ «նմանցաւ իր երազուրիչ ձայնով Բնկնդիրը իրեն կապող երգիչին»: Այսինքն՝ խորքը պարզուեցաւ իմաստէ, երբ բանաստեղծին առաջնահերթ նպատակը եղաւ բնական մտահոգութիւնը (ձեռք ձգել ունկնդիրը իրեն կապելու արհեստին գաղտնիքները, ունկնդիրին ապահովել այն հաճոյքը, որ ան կ'ակնկալէ իրմէ):

Այս պայմաններուն մէջ, սնանկացաւ բանաստեղծութիւնը, իջաւ երգ-բանաստեղծութեան նախնական մակարդակին, ու զարգացան աշուղական տաղերը, օգտագործուեցան խօսակցական լեզուն ու տաղաչափական արագ, ուստիստուն շափերը, որոնց կատարելագործուած օրինակը կարելի է նկատել «Մուաշախ» (գուսանական երգ), «Գէնէլ» (աշուղական երգ) եւ «Մուխամ-մասաք» (Նազեակներ), որոնք իբր թեմա կը շօշուիին երկրային ծանօթ իրեր, ինչպէս՝ սիրուհին, անոր ոսկի վարձերը, ծաւի կամ սեւ աչքերը, դիտակն ու ծիծերը, ազամանդաշող աստղերը, ծաղիկները, դետերը, ծառերը, մէկ խօջով՝ ընթացիկ կեանքը:

Սակայն, կատարելագործուած երեք սեռերը նաև վարակուեցան դարուն ձեւաձուլութենէն: Անի նկատմամբ ցուցարկուած այս խոր հետաքրքրութենէն ծնունդ առաւ այնպիսի բանաստեղծութիւն մը, որ խրթնարանութիւնը զարձաւ հեղձուցիչ ներկայութիւն եւ խեղդուեցաւ խօսակցական լեզուին անմիջականութիւնն ու ջերմութիւնը:

Միայն անուն մը կրցաւ բանաստեղծութեան պատմութենէն ներս մուտք գործել անկիւնադարձային հանգամանքով, — Գատի էլ Պատէլ: Իր մօտ արձակն ու քերթուածը ընդելուզուեցան իրարու, յաճախ քերթուածը սկսաւ արձակով եւ աողի կէսէն անպիսի շարունակեց զարգանալ տաղաչափութեամբ, որուն յաջողագոյն նմոյշներուն կարելի է հանդիպիլ Աստուիսի կողմէ իրմ-բազրուած «Համապատկեր արաբական բանաստեղծութեան» երկրորդ հատորի այն բաժնին մէջ, որ յատկացուած է Գատի էլ Պատէլին:

Արհեստային բանաստեղծութեան գլխաւոր ախտերէն մէկը եղաւ ջերմութեան, լուսնի, սրտի եւ մաքի Հլմարիտ տրոփներուն բացայայտ պակասը: Բանաստեղծութիւնը յար եւ նման եղաւ դարուն մակերեսային կեանքին, պարզապէս՝ տեսակ մը բառերու մամանց:

Բայց բառերով Հաստատուած հաղորդակցութիւն ու կապ մը ըլլալէ աւելի՝ իմաստ է բանաստեղծութիւնը, որ ծնունդ կ'առնէ իրաւ բանաստեղծին բերած անակնկալներուն անհրաժեշտ ապահովութեամբ, նոր տեսիլներուն յարաշարժութեամբ, պատկերներուն միջեւ տեղի ունեցող կրճատ ու մշտանորոգ զրոյցով եւ բառերուն ո՛չ-բառարանային հեռաւորութիւններով:

Այս պայմաններուն ներքեւ, լեզուն կը դառնայ ինքը ստեղծագործութիւն մը:

XI

Նոր դարու երկրորդ կիսուն, արարական պատմութիւնը կենդանութիւն ստացաւ, շնորհիւ արեւմտեան ուղղակի եւ անուղղակի ներարկումներու :

Լիբանանի մէջ, ամերիկացի ու եւրոպացի միախնարներուն հիմնած վարժարանները, արեւմտեան մշակոյթի տարածման համար անոնց կատարած աշխատանքները ուղղակիօրէն նպաստեցին արարական դարձումքի անման, որ սկսած էր Միջին Արեւելէն Եւրոպա ուսանելու դացած ու վերադառնալէ ետք զայն կիրարկելու լծուած սերունդին կողմէ :

Անդին, Եզրիպտոսի մէջ, եւրոպական միտքն ու մշակոյթը պիտի նըպաստէր արարական դարձումքի ձեւաւորման, բայց այս անգամ անուղղակիօրէն, եզրիպտացի ղեկավարի ճը՝ Մուհամմէտ էլ Ալիի բարենորոգչական աշխատանքներուն դժով :

Արդարեւ, խանդավառութեամբ Եւրոպայի ճարտարարուեստական յեղափոխութեան ձեռք բերած արդիւնքներէն եւ գինուտրական մարմաջներէ ճըղւած՝ Մուհամմէտ էլ Ալի Եւրոպա դրկեց խումբ ճը ուսանողներ, որպէսզի եթրոպական ճարտարարուեստն ու բանակը ուսումնասիրելէ ետք դառնան երկիր եւ լծուին եզրիպտական ճարտարարուեստին ու բանակին ձեւաւորման աշխատանքներուն : Մրազբուած այս զոյգ աշխատանքներուն զժով եւրոպական մշակոյթը, իր կարգին, թափանցեց Եզրիպտոսէն ներս ու արարական դարձումքին կենսական տարրերէն մէկը հանդիսացաւ : Սակայն, աւելցնենք անմիջապէս, թէ եւրոպական մտքի սնուցիչ դերը ջատագովողները բախեցան արգելքներու, որոնք ծնունդ կ'առնէին խոր պատճառներէ :

Այս պատճառներուն առաջինը կը հանդիսանար արարական ու եւրոպական մշակոյթները իրարու հետ հաշտեցնելու աշխատանքը : Անոնք ճընունդն էին տարբեր աշխարհներու, կու գային փոխադասական բոլորովին հակասական մթնոլորտներէ, զարգացած եւ անած էին տարբեր միջավայրերու մէջ :

Աւելին .

Թաքուն պատճառներէն մէկը ա՛յն է թերեւ, որ երբ արարները ծանոթացան եւրոպական պրականութեան, իրենք գիրենք անելներու դէմ յանգիման գտան, որովհետեւ եւրոպական մշակոյթին հետ շփման մէջ մտած մտաւորականները դիտակից էին, որ իրենց գտնական գրականութիւնը հարուստ ժառանգութիւն մըն է : Թէ՛ բանաստեղծական եւ թէ՛ արձակ ժառանգութեամբ (իմաստասիրական, փոխադասական, միստիք երկեր) հպարտ այս մտաւորականները գիտակից էին նաեւ ա՛յն ճշմարտութեան, որ Արեւմտեանի համար եւս պեղելիք հանք է արեւելեան մշակոյթը, ի շարս որուն՝ արարականը :

Օրինակ մը տալու համար յիշենք անմիջապէս, որ նախամահմետական բանաստեղծութիւնը, անոնց յաջորդած ոսկեդարեան տաղերը, ինչպէս եւ արարական փոխադասութիւնն ու արձակը (Ըպն ինարուն, էլ Պարապի, էլ Նաֆարի, էլ Մարրի, «Հազար ու մէկ գիշերներ», եւ այլն) թարգմանուեցան բազմաթիւ լեզուներու, ուսումնասիրուեցան եւ մտան Եւրոպայի համալսարաններու դասանիւթերու շարքերէն ներս, արժանանալով եւրոպացի արեւելագէտներու խանդավառ հիացման :

1798ին, դէպի Եզրիպտոս կատարած իր արշաւին ընթացքին, հակառակ

Տաղաչափեալ արձակ մըն էր բանաստեղծութիւնը: Բառապաշար ցուցադրող Հանդէս մը՝ յար ու նման մկաններու ցուցադրութեան, կամ՝ յաջողագոյն պարագային, մինչ այդ ստեղծուած գրական ծաղիկնոցներէն փունջ կազմելու արհեստ: Այս եղաւ պատճառը, որ բառերը ըլլան պաղ, անշունչ պուզրիկներ, իսկ քերթուածը՝ անհորիզոն պատկերներու թխուածք:

Այսպէսով, բանաստեղծին գլխաւոր մտահոգութիւնը Հանդիսացաւ ունկնդիրի ակունջին Հանելի քրտնաթեմա՞ն ու մեղմ բառերով երգեցիկ տաղեր գրել: Բանաստեղծութիւնը շփոթուեցաւ արհեստին հետ, իսկ բանաստեղծը, Լայն Ուաքիհ էլ թանկիսիթ բացատրութեամբ՝ «Սմանեցաւ իր իրապաւիրիչ ձայնով ունկնդիրը իրեն կապող երգիչին»: Այսինքն՝ խորքը պարպուեցաւ իմաստէ, երբ բանաստեղծին առաջնահերթ նպատակը եղաւ բեմական մտահոգութիւնը (ձեռք ձգել ունկնդիրը իրեն կապելու արհեստին զազունիքները, ունկնդիրին ապահովել այն հանգիստը, որ ան կ'ակնկալէ իրմէ):

Այս պայմաններուն մէջ, սնանկացաւ բանաստեղծութիւնը, իջաւ երգ-բանաստեղծութեան նախնական մտկարդակին, ու դարգացան աշուղական տաղերը, օգտագործուեցան խօսակցական լեզուն ու սաղաշափական արաբ, ոսոսասուն չափերը, որոնց կատարելագործուած օրինակը կարելի է նկատել «Սուաշշան»ը (գուստնական երգ), «Ղէնէլ»ը (աշուղական երգ) եւ «Սուխամ-մասապ»ը (հնգական երգ), որոնք իբր թեմա կը շօշափէին երկրային ծանօթ իրեր, ինչպէս՝ սիրուհին, անոր ոսկի վարսերը, ծառի կամ սեւ աչքերը, զիստերն ու ծիծերը, աղամանդաշող աստղերը, ծաղիկները, գետերը, ծառերը, մէկ խօսքով՝ ընթացիկ կեանքը:

Սակայն, կատարելագործուած էրեք սեռերը նաև վարակուեցան դարուն ձեւամարտութենէն: Աեւի նկատմամբ ցուցարմերուած այս խոր հետաքրքրութենէն ծնունդ առաւ այնպիսի բանաստեղծութիւն մը, ուր խրթնարանութիւնը դարձաւ հեղձուցիչ ներկայութիւն եւ խեղդուեցաւ խօսակցական լեզուին անմիջականութիւնն ու ջերմութիւնը:

Միայն անուն մը կրցաւ բանաստեղծութեան պատմութենէն ներս մուտք գործել անկիւնադարձային Հանգամանքով, — Գատի էլ Փատէլ: Իր մօտ արձակն ու քերթուածը ընդերուզուեցան իրարու, յաճախ քերթուածը սկսաւ արձակով եւ տողի կէտէն անդին շարունակեց զարգանալ տաղաչափութեամբ, որուն յաջողագոյն նմոյշներուն կարելի է Հանդիպել Ատոնիսի կողմէ խրճարուած «Համապատկեր արարական բանաստեղծութեան» երկրորդ Հատորի այն բաժնին մէջ, որ յատկացուած է Գատի էլ Փատէլին:

Արհեստային բանաստեղծութեան գլխաւոր ախտերէն մէկը եղաւ ջերմութեան, շունչի, սրտի եւ մտքի ճշմարիտ տրոփներուն բացառապէս պակասը: Բանաստեղծութիւնը յար եւ նման եղաւ դարուն մակերեսային կեանքին, պարզապէս՝ տեսակ մը բառերու ժամանց:

Բայց բառերով Հաստատուած Հազորդակցութիւնն ու կապ մը ըլլալէ աւելի՝ իմաստ է բանաստեղծութիւնը, որ ծնունդ կ'առնէ իրաւ բանաստեղծին բերած անակնկալներուն անհրաժեշտ ապահովութեամբ, նոր տեսիլքներուն յարուշարութեամբ, պատկերներուն միջեւ տեղի ունեցող կրքոտ ու մշտանորոգ գրոյցով եւ բառերուն ո՛չ-բառարանային հեռաւորութիւններով:

Այս պայմաններուն ներքեւ, լեզուն կը դառնայ ինքը ստեղծագործութիւն մը:

XI

18րդ դարու երկրորդ կիսուն, արաբական պատմութիւնը կենդանութիւն ստացաւ, շնորհիւ արեւմտեան ուղղակի եւ անուղղակի ներարկումներու:

Լիբանանի մէջ, սմերիկացի ու եւրոպացի միտոնարներուն հիմնած վարժարանները, արեւմտեան մշակոյթի տարածման համար անոնց կատարած աշխատանքները ուղղակիօրէն նպաստեցին արաբական դարձօնքի ամման, որ սկսած էր Միջին Արեւելքէն Եւրոպա ուսանելու գացած ու վերադառնալէ ետք զայն կիրարկելու յծուած սերունդին կողմէ:

Անդին, Եզիպտոսի մէջ, եւրոպական միտքն ու մշակոյթը պիտի նըպաստէր արաբական դարձօնքի ձեւաւորման, բայց այս անգամ անուղղակիօրէն, եզիպտոսի ղեկավարի մը՝ Մուհամմէտ էլ Ալիի բարենորոգչական աշխատանքներուն զօով:

Արդարեւ, խանդավառուած Եւրոպայի ճարտարարուեստական յեղափոխութեան ձեռք բերած արդիւնքներէն եւ զինուորական մարմաններէ մղուած՝ Մուհամմէտ էլ Ալի Եւրոպա դրկեց խումբ մը ուսանողներ, որպէսզի Պարոպական ճարտարարուեստն ու բանակը ուսումնասիրելէ ետք դառնան երկիր եւ յծուին եզիպտական ճարտարարուեստին ու բանակին ձեւաւորման աշխատանքներուն: Մրազբուած այս զոյր աշխատանքներուն զօով եւրոպական մշակոյթը, իր կարգին, թափանցեց Եզիպտոսէն ներս ու արաբական դարձօնքին կենսական տարրերէն մէկը հանդիսացաւ: Սակայն, աւելցնենք անմիջապէս, թէ եւրոպական մտքի անուշիչ դերը ջատագովողները բախեցան արգելքներու, որոնք ծնունդ կ'առնէին խոր պատճառներէ:

Այս պատճառներուն առաջինը կը հանդիսանար արաբական ու եւրոպական մշակոյթները իրարու հետ հաշտեցնելու աշխատանքը: Անոնք ժընուելն էին տարբեր աշխարհներու, կու գային փիլիսոփայական բոլորովին հակասական միջնորոտներէ, զարգացած եւ անած էին տարբեր միջավայրերու մէջ:

Աւելին.

Թագուն պատճառներէն մէկը ա'յն է թերեւս, որ երբ արաբները ծանօթացան եւրոպական գրականութեան, իրենք զիրենք անենքու ոչմ յանդիման գտան, որովհետեւ եւրոպական մշակոյթին հետ շիման մէջ մտած մտաւորականները զիտակեց էին, որ իրենց դասական գրականութիւնը հարուստ ժառանգութիւն մըն է: Թէ՛ բանաստեղծական եւ թէ՛ արձակ ժառանգութեամբ (իմաստասիրական, փիլիսոփայական, միստիք երկեր) հպարտ այս մտաւորականները զիտակեց էին նաեւ ա'յն ճշմարտութեան, որ Արեւմուտքին համար եւս պեղելիք հանք է արեւելեան մշակոյթը, ի շարս որուն՝ արաբականը:

Օրինակ մը տալու համար յիշենք անմիջապէս, որ նախամահմետական բանաստեղծութիւնը, անոնց յաջորդած ոսկեդարեան տաղերը, ինչպէս եւ արաբական փիլիսոփայութիւնն ու արձակը (Ըպն Ռալտուն, էլ Փարսպի, էլ Նաֆարի, էլ Մաարիի, «Հազար ու մէկ գիշերներ», եւ այլն) թարգմանուեցան բազմաթիւ շեղումներու, ուսումնասիրուեցան եւ մտան Եւրոպայի համալսարաններու դասանիւթերու շարքերէն ներս, արժանանալով եւրոպացի արեւելագէտներու խանդավառ հիացման:

1798ին, ղէպի Եզիպտոս կատարած իր արշաւին ընթացքին, հակառակ

անոր, որ Նափուլէոն իր նուուն մէջ կը կրէր արարատառ մամուլ, սակայն Եգիպտոսի գրաւումէն ետք հոն ցրուած թուօցիկները ոչ մէկ ձեւով կրօցան սանձել թնակչութեան ազգային պոթիկումը: Ընդհակառակն, այս ձեւով մամուլը նպաստեց զարթօնքին, իսկ եգիպտացիին ձօս ձեւաւորուեցաւ այն հաստատ համոզումը, որ թէ՛ անգլիացին եւ թէ՛ ֆրանսացին զաղութարար է նախ եւ տաալ, որոնց մղիչ ուժերը իրենց տնտեսական եւ ռազմապիտական հաշիւներն են:

Նափուլէոնի արշաւէն (1798) մինչեւ Պաղեստինի դրաման յաջորդող յուսարեկութիւնը (1948), բանաստեղծութիւնը ընդհանրապէս շօշափեց պատմական եւ ազգային նիւթեր: Անակնկալներն ու պատրանաթափութիւնները ցնցեցին զայն, որ ձեւով մը հանգիստացաւ արաբական պատմութեան քաղաքական, բնկերային եւ մշակութային զարկերակը:

Արարական երկիրներուն մէջ, անդլիական եւ ֆրանսական գաղութարարութիւնը ծնունդ տուաւ նաեւ ազգային յինելութեան հրամայականին: Այս պոսթմաններուն ներքեւ, գրականութիւնը եզաւ միջոց, փոխանակ նպատակ մը բլլալու:

18րդ դարու երկրորդ կէսէն ետք ծնած բանաստեղծներուն առաջին նըպատակը եզաւ պայքարիլ եւրոպական քաղաքական ուժին դէմ, զանգուածները հրահրել հայրենասիրութեամբ եւ արծարծել յեղափոխութեան հուրը: Ուստի՝ անոնք բաւարարուեցան ազգային մշակոյթով եւ մշակոյթին ազգային պիտակցութեան կերտման իբր դործօն նպատառը գերը վեր գտանցին գեղարուեստական նուրբ առաջադրանքներէն:

Եթէ բաղադատական մը կասարենք 18րդ դարու երկրորդ կիսուն եւ 19րդ դարու երկրորդ կիսուն ստեղծուած գրականութիւններուն միջեւ, պիտի տեսնենք, որ վերջինները պահելով հանդերձ գրականութեան ազգային դիմագիծը, փորձեցին արարական դասական բանաստեղծութեան ուղիներով ընթանալ եւ զայն թորմացնել նոր ժամանակներու շունչով: Սակայն, այս սերունդը նոյնպէս չկրցաւ ձերբազատուիլ դասական ժառանգութենէն, մնաց անոր տիրապետութեան ներքեւ եւ, լաւագոյն պարագային, կրկնեց արգէն իսկ նուաճուած բանաստեղծական նմոյշները:

Նախորդ դարու գրականութեան հետ բաղադատած՝ զարգացումը ակններեւ է: Բայց երբ զայն կը դիտենք իրբեւ գրական շրջան մը ցոլացնող վաստակ, նոյնիսկ հի՞ է անոր մօտեանք գաղջ քննարկողի մը տրամադրութեամբ, առաւելադոյն արժեքիլը կ'արձանադրենք, երբ կ'ըսենք, թէ 19րդ դարու վերջին երեք-չորս տասնամեակներուն երեւան եկան գրական սուր զգայարանքի տէր բանաստեղծներ, որոնք սակայն սահմանափակուեցան դասական նմոյշները կրկնելու կրաւորական պարտականութեան շրջանակներուն մէջ: Յիշեալ ժամանակաշրջանին է միայն, որ արարական գրականութիւնը Արեւմուտքէն ժառանգեց գրական նոր սեռեր: Այսպէսով, մինչ այդ արարներուն անձանօթ քնարախաղը եւ ի՛ մասնաւորի արձակի զանազան ճիւղերը (վէպ, թատերգութիւն, նորավէպ, պատմուածք, տպաւորապաշտ էջ) մտան արարական գրականութենէն ներս: Նոտեւ այս շրջանին է, որ բանաստեղծներու մէկէ աւելի խմբաւորումներ պատրաստեցին արդի գրականութեան ենթահոլը: Հետագային, քննադատներու կողմէ անոնք տեղաւորուեցան գրական գանազան դպրոցներու մէջ, կոչուելով՝

- Ա — Ընդօրինակողներ, կամ դասականներ,
- Բ — Նախառումնաթիքներ, կամ նոր դասականներ,

Գ.— Ռոմանթիկներ, կամ նորարարներ,

Դ.— Գաղթաշխարհի բանաստեղծներ :

Այս շորս սերունդներն ալ վեր ի վերոյ յարգեցին տաղաշիփական ու յունահունդական բանաստեղծութեան աւանդները : Խալիֆան կամ էմիրը զովքերէլու փոխարէն՝ բանաստեղծները սկսան գրադիլ ժողովուրդով : Փոխւեցան դերակատարներն ու դերերը : Այլ խօսքով՝ ժողովուրդի խաւերուն հարցերը, ընկերային թեմաները, գիւղացին, հայրենիքը, հայրենի բնութիւնն ու հողը, ինչպէս գաղթաշխարհի բանաստեղծին համար հայրենիքի կարօտախտը եւ նման նիւթեր կաղմեցին յիշեալ շորս սերունդներուն գրականութեան ատաղձը :

Նաեւ մամուլը կ'ապրէր բարգաւաճ շրջան մը, թերթերն ու գիւղերը լայն տարածում գտած էին ժողովուրդի խաւերուն մէջ, իսկ բանաստեղծին ու ընթերցողին միջեւ յարաբերութիւնը՝ ամէնօրեայ պահանջը :

Պէտք է ըսել, որ յիշեալ շորս սերունդները ընտրուող երանգներ կան նաեւ միւս սերունդներուն գրականութեանց մէջ : Հակառակ յստակ ու բանաձեւուած գրական դասանձքի մը, բանաստեղծը արեւոյ կայսրի կ'ապրէր իր հայրենիքին բոլոր տոգնապները : Այս իսկ պատճառով, նոյնիսկ նախաճումանթիք ու սոմանթիք բանաստեղծներու երկերուն մէջ կը հանդիպինք ժշակոյթի զանազան հանգրուաններուն իրազործուած արձագանգներու :

Աւելի յստակ ըլլալու համար աւելցնենք, թէ հսկան հարց է ասիկա իրաւ գրագէտին համար : Ի վերջոյ, տաղանդները անոնք են, որոնք գրական զանազան զարդերէն կը յաջողին ստեղծել խառնուրդ մը եւ զայն կ'օժտեն իրենց ինքնատիպ շունչի, աշխարհահայեացքի, արտայայտութեան անսկզկալ ու հարուստ եղանակներուն վաւերականութեամբ :

Հակառակ անոր, որ արարական արդի բանաստեղծութեան շորս սերունդներն ալ ունին գրական սեփական համոզումներ, կարելի չէ սակայն անոնցմէ մէկը կամ միւսը թուականներու սահմանի մը մէջ տեղաւորել : Ի վերջոյ, պէտք է նկատի ունենալ, որ անոնք ժամանակակիցներ էին ու զրեթէ տարեկիցներ :

XII

Պահպանողական նկարագրի տէր ընդօրինակողներուն կամ դասականներուն համոզումով բանաստեղծութեան ակունքը եղաւ արարական դասական բանաստեղծութիւնը : Մէկէ աւելի կէտերով դասականները կը նմանին 18րդ դարուն Եւրոպայի մէջ երեւան եկած նոյնանուն դպրոցին : Մասնաւորաբար Մուհամմէտ Մամի էլ Պարուտի եւ իր հետեւորդները փորձեցին հետեւիլ Եւրոպայի դասական բանաստեղծութեան բարոյական եւ ուսուցողական ուղղութեան : Բայց այս սերունդին ալ, ինչպէս նոյն ուղղութեան հիմնադիր արեւմտեան հոսանքին՝ անկումը սկսու, երբ իրենց դասանձքը, — ճոխ նախադասութիւնները, անցեալէն ժառանգուած բանաստեղծական բանաբով ու ստեղծագործական նոյն բարձրորակ մակարդակով պերճ տաղերը՝ հռչակեցին յաջողութեան յաւիտենական պայման :

Հայրենասիրութեան հուրը արծարծելու մտահոգութիւնը կէտ հարւածելու այս պահպանողական բանաստեղծութիւնը հետադարձութեան տարրերով : Ճառային բնոյթ ստացաւ բանաստեղծութիւնը :

«Հատրմտիրներ արարական արդի քանաստեղծութեան» հատորին յառաջան-ուսումնասիրութեան մէջ, այս հարցին մասին կատարած իր վերլուծումներուն զօժով, Մուսթաֆա Պէտէուի կը կատարէ ուշադրաւ հետեւեալ սխտանանշումը:

«Անոնց քանաստեղծութիւնները ընդհանուր առումով կարելի է կոչել ընդհանրացումներու քանաստեղծութիւն: Ասիկա այն քանաստեղծութիւնն է, որուն հեղինակը միշտ գլխակցութեան վիճակին մէջ կը մնայ, որովհետեւ կը Յառէ, իր մտապատկերին մէջ, դիմացը եղող հանդիսականներուն»:

Այդ շրջանին, մինչ եղիպտացի Ահմէտ Շաուպի ու Հաֆէզ Իպրահիմ անձնական հաշիւներէ մզուած կը գոյհրդէին «Օսմանեան հալիփայութիւն»ը, որուն մէջ կ'ուզէին տեսնել մահմետական հարստութեան շարունակութիւնը, ծագումով թուրք ուրիշ եղիպտացի մը՝ Ուալի էլ Տին Եաֆան, կը ստորադէր քաղաքական բանաստեղծութեան ամէնէն հասուն նմուշները՝ դատապարտելով «Օսմանեան ցաղաւթալարութիւն»ը: Իրաքցի նոյն սերունդին պատկանող ներկայացուցիչները (որոնք աշխարհագրականօրէն աւելի ժողովրդով աւելի են կապուած սուլթան Ապտուլ Համիտի քաւարանին, կը գտնուէին անոր անմիջական լուծին ներքեւ) կ'ապրէին արիւնարբու սուլթանին քմայքներուն ենթակայ եւ միացեալ ճակատով մը բուռն պայքար կը մղէին բռնակալ լուծին դէմ: Այս ճակատին յոռաշմարտիկները եղան Ճէմալ Մարտի էլ Ջահահուտի եւ Մարուֆ էլ Բասաֆի, մասնաւորաբար վերջինը, որ ընկերային, քաղաքական ու յեղափոխական ջերմ շունչով օժտուած իր ջերթուածներուն համար մեծարուեցաւ ո՛չ միայն Իրաքի, այլեւ արաբական բոլոր երկիրներուն մէջ եւ ամէնուրեք հռչակուեցաւ «ազատութեան քանաստեղծը»:

Օսմանեան կայսրութեան անկումէն եւ անդիպագիներու կողմէ Եղիպտոսի գրաւումէն ետք՝ Ահմէտ Շաուպի աքտուեցաւ Սպանիա:

Արաբին Աշխարհամարտի վախճանին, իրեն արտօնուեցաւ դառնալ հայրենիք, ուր միացաւ Ուալի էլ Տին Եաֆանի «ազգային շարժում» ճակատին: Այսպէսով, պալատի բանաստեղծը սկսաւ տապնապիլ ժողովուրդին հարցերով, հայրենիքի անկախութիւնը դարձաւ ամէնօրեայ յաճախանք, եւ մեծ փոքրապատկաններուն տէր դարձած երկրչր ստեղծեց դասականութեան լուսազոյն նմուշներուն համահասար քաղաքական ու ինկերային երգեր: Գուցէ այս էր պատճառը, որ իր անունը շրջիցաւ արաբական աշխարհի բոլոր երկիրներու գրականներուն շրջներուն վրայ, որոնք քրանաստեղծ իշխաններ» մակդիրը վար առին իր ուսերէն, փոխարէնը պատուելով զինք «քանաստեղծներու իշխանը» տիտղոսով:

Իսոյց պէտք է աւելցնել անմիջապէս, որ ինդրոյ առարկայ բանաստեղծները չկրցան ձերբապատուել մշակութիւն լուծէն եւ եղան անոր ստրուկները: Խօսակցական լեզուին ու գրական լեզուին միջեւ գոյութիւն ունեցող ընդարձակ անջրպետը յեցնելու ոչ մէկ ճիւղ կատարեցին, կրկնեցին նախորդներուն սխալները եւ ճիւղ ա՛յս պատճառով իրենց յաջորդեցին գրական նոր շարժումները:

Աւանց գրական լեզուի ռճային ու դեղապիտակեան մակարդակը ոտնակոխելու, գրական լեզուն խօսակցական լեզուով հարստացնելու աշխատանքը գրականութեան էական հրամայականներէն մէկը համարող Եուսէֆ էլ իմալ, լուսազոյն գրասերած է այս վտանգաւոր կէտը:

«Բրակամ լեզուն խօսակցական լեզուն իսկ է՝ ճիւղ մը հպատակած պարզապէս: Կարելի չէ գրականութիւն ունենալ՝ առանց գրական ու խօսակցա-

կամ լեզուի կապին: Այսպէս, 19րդ դարու գրողները ոչ թէ գարթօնքի, այլ յետադիմութեան գրողներ են, քանի որ անոնք փոխանակ լեզուիմ երկու միւլիքում միջու գոյութիւն ունեցող բացը լեցնելու, աւելի խորացուցին գայն: Այսօր, մեր իրական գարթօնքի օրերում, գայն կ'աշխատինք արբագրել, հակառակ անոր, որ շրիշներ (այսինքն՝ մեծամասնութիւնը) լեզուիմ գեզեկութիւնը կը չափեն գայն քաղղատելով «Փարան»ի եւ հինէն եկած բանաստեղծութիւններում լեզուիմ հետ»:

«Շըլքի սերունդը եղաւ այն մտաւորական խումբը, որ հաւատաց եւ իր տակնայեներէն դերուդոյր դասեց չլեզուի պատնէշը» քանդելու աշխատանքը: Արեւմտեան գրականութեան լեզուի զարգացման ամէնէն կենսունակ հատարըը հանդիսացող խօսակցական լեզուին հարստացուցիչ փորձը նկատի ունեցող լեզունանցի մտաւորական բանաստեղծները, այս մարզէն ներս, մեք ձգեցին մեծ նուաճումներ:

Նորարարութեան տարրադոյն շաղախն ու արիւնը զաւանեցին լեզուին թարմացումը, որովհետեւ հաւատացին գեղագիտական այն խոր ճշմարտութեան, ըստ որում՝

«Նորութիւնը բանաստեղծութեան մէջ ամէնէն աւելի կ'երեւայ լեզուիմ մէջ: Իրաքանչիւր նոր բանաստեղծ, այսինքն՝ տեղեւորութեան, ինքնին նոր լեզու մըն է, ա՛յն իմաստով, որ նոր փորձառութիւն մը ունեցող անպայման գայն կը դրսեւորէ նոր բառերով, (նոր՝ որովհետեւ բանաստեղծութեան մէջ, տակաւին առաջին անգամ ըլլալով կը գործածուին) եւ անեցմով կը ձուլէ հարաւստ ու անակնկալներով լեզուն նոր նախադասութիւններ, սովորական երեւոյթներէն անդին կը թափանցէ ու կապ կը պահէ լեզուիմ ժամանակակից գարգացման հետ»:

Եւսէֆ Էլ Ռալի վերոյիշեալ հաստատումը կը բխի զոչը լեզուներու միջև ծառայող անջրպետին վերջ տալու խոր մտահոգութենէն, որ իւրաքանչիւր իրաւ գրաւէտին համար անձեքրագատելի նպատակ մըն է: Նախ՝ իբր անձ գոյութիւն, ապա՝ փոփոխութիւն եւ լինելութիւն, «այրովհետեւ բան մը նախ գոյութիւն կ'ունենայ եւ յետոյ միայն կ'ըլլայ»...:

XIII

Լիբանանցի բանաստեղծ Ռալի Մութրանի բանաստեղծութիւններու անդրանիկ հատորը բացող կարճ յառաջաբանը կարելի է նկատել նախադասութիւն շարժման առաջին լուրջ փորձը:

Ուսանողական գրասեղաններուն վրայ, Փրանսական գրականութեան նախադասութիւն եւ ուսանիքի բանաստեղծութիւններուն հանդէպ խոր համարում ունեցող բանաստեղծին ուշադրաւ յառաջաբանին ընդմէջէն, արարական բանաստեղծութիւնը կը բացուի նոր հորիզոններու:

Գրական իր առաջին փորձերն ու յառաջաբանը կու դան ազատացելու, թէ Ռալի Մութրան բանաստեղծը յիշեալ երկու սերունդներու քերթուածներուն մէջ գտած է այն նորարար շուշը, որով կարելի է կենդանացնել արարական արդի բանաստեղծութիւնը: Այս երկու սերունդներուն պատկանող բանաստեղծներ Ռուսօ, Շաթուրիան, Լամարթին, Ալֆրէտ տը Վիլիեր այս կամ այն չափով կը միջնորդեն արար երիտասարդ բանաստեղծին սկզբնական գործերուն: Որով՝ կարելի է ըսել, թէ Մութրան բանաստեղծին գրական համարումները կը բխին Փրանսական սկզբէն:

Այսուհանդերձ, Ճպրան Խալիլ Ճպրանի հետ՝ Խալիլ Մութրանն է արաբական արդի բանաստեղծութեան նախակարապետը եւ մարդաբէաշունչ տաղանդէն՝ Ճպրանէն ետք կարեւորագոյն հիմնադիրը, որովհետեւ իր յառաջաբանը ծանօթ հանգանակներէն անդին անցնել փորձող կարեւոր երկու կէտերու վճապակամութեան շնորհիւ, արաբական բանաստեղծութեան հաշուոյն արձանագրուող յաւելում մըն էր:

Առաջինը՝ բանաստեղծական ամբողջական կառոյցի հանդանակն էր, իսկ երկրորդը՝ խորքը աւելի զերազատ է բանաստեղծութեան հնչականութեան եւ բանաստեղծական հին ըմբռումէն, ըստ որում՝ բանաստեղծութիւնը անջատ եւ ամբողջական տողերու համադրութիւն մըն է:

Արդարեւ, մինչեւ Խալիլ Մութրան եւ զաղթաշխարհի բանաստեղծներուն երեւումը, բանաստեղծութեան ըմբռնումը տուհառարակ կը հիմնուէր հնչականութեան, բանաստեղծական բիւրեղ բառերու եւ օրկանակոն կապով իրարու հետ կապ չունեցող անջատ տողերու նուաճման, ինչպէս նաեւ նախապայման միայնակութեան յաջողութեամբ: Այլ խօսքով՝ բանաստեղծութիւնը կ'արժեւորուէր մասնիկներու (տողեր, եւ տողին մէջ գոյութիւն ունեցող պատկերին կուռութեամբ, մտածումին պայծառ արտայայտչականութեամբ, եւ այլն) գեղարտական հարտութիւնը նկատել առած: Մասնիկները, այսինքն՝ բանաստեղծութեան ընդհանուր մարմնէն թաղուած կարգ մը տողերէ բաղկացած շղթան բուարար էր՝ արժեւորելու զերթուած մը: Մութրան առաջինը եղաւ, որ մասնիկներու փոխարէն՝ ծանրութեան կեդրոն հրաշակեց զերթուածին ընդհանուր կառոյցը, խտութիւնը եւ բանաստեղծութեան անխախտելի միութիւնը: Ան եղաւ տաղիւններէն, որ մարդուն ու բընութեան առաջինը եղաւ, որ մասնիկներու փոխարէն՝ ծանրութեան կեդրոն հրաշակեց զերթուածին ընդհանուր կառոյցը, խտութիւնը եւ բանաստեղծութեան անխախտելի միութիւնը: Ան եղաւ տաղիւններէն, որ մարդուն ու բընութեան առաջինը միջեւ նկատեց հանդիսութիւններ եւ յաջողեցաւ հոգեկենդանի ընտելութիւնը: Իր սերնդակիցներէն Ապտըլ Բահման Եուզըր, Ապրպաս Մահմուտ էլ Աղգաս, Էպրահիմ Ապտըլ Գատէր էլ Մազնիի եւ ուրիշներ եւս ձայնակցեցան իրեն: Ասոնք, անդլիական բանաստեղծութեան ընթերցումներու զօնով՝ ծանօթացած էին անդլիացի ուսմանթիքներուն:

Թէ՛ Փրանսական, թէ՛ անդլիական քնարական նմոյշները սերտող այս բանաստեղծները արդի դրականութեան արուեստադէտ առաջին սերունդն է: Անոնք կեղերոնացան բանաստեղծին զգացական աշխարհին վերիօլորումներուն վրայ: Անձնական, քննակեդրոն ու քնարերգակ այս սերունդին համար բանաստեղծութիւնը ծնունդ կ'առնէր հեղինակին անձնական փորձառութիւններէն եւ բնութենէն: Բանաստեղծը առաջին անգամ ըլլալով խղուեցաւ ընկերութենէն: Ապու էլ Ալա էլ Մասրրիին ետք առաջին յարջ երեսոյթը կարելի է սեպել Մութրանը, որուն էջերուն զերթուածը կ'ըլլայ: Բանաստեղծ մարզուն՝ բնութեան, աշխարհին ու զգացական կացութիւններու միջեւ երկաթասութիւն մըն է բանաստեղծութիւնը, եւ երբ այս կամ այն զերթողը կ'ալիկոծի ներշնչման անծանօթ ուլիխանին հետ, զգալի կը դառնայ մենութեան թախտոս ու քնարական շեշտը:

Հակառակ այն բացայայտ ճշմարտութեան, որ այս սերունդը արձանագրեց պատուաբեր նուաճում թէ՛ խորքի եւ թէ՛ կառոյցի մարզերէն ներս, հակառակ այն ճշմարտութեան, որ կրցան որոշ չափով պարզացնել բանաստեղծական այն ճշմարտութեան, որ կրցաւ որոշ չափով պարզացնել բանաստեղծութեան աղբեղութիւնը: Աշխարհաբնկալման, մտածելակերպի, նկարագրի հանդիսութիւնը սկսեցին է: Ապու Նաուաթի եւ Ապու Թամմամի հոգեմիճակը (զ'էննֆ օտարական էննֆ) նաեւ այս սերունդին մօտ կը յայտնուի:

Աւելին. եթէ բաղդատական մը կատարելու ըլլանք, պիտի հասնինք այն եղբակացութեան, թէ Ասյպասեան բանաստեղծութեան ընդհանուր նկարագիրը, լեզուական դրոշմը, ինչպէս նաեւ երաժշտութիւնը, այս կամ այն չափով, պարտադրած են իրենք զիրենք:

Ընկերութենէն անջատուած մենակեաց նախաոմանքի քննարկու բազմաթիւ քերթուածներ կ'արտայայտուին դարուն Հիւանդադին հոգեմիջ-ճակին մասին:

Նախաոմանքիք սերունդը արարական արդի բանաստեղծութեան անուշին պայթումն է, անցման սերունդը, յայտարարած եղափոխութիւնը:

XIV

1914 դարու վերջին տասնամեակներուն զրուած գրականութեան ղէմ խումբ մը յախուռն բանաստեղծներու մղած քննադատական պայքարը անուղ-զակի ձեւով նպաստեց ո՛չ միայն ոտմանքիք զպրոցի բիւրեղացման, այլևս արարական արդի բանաստեղծութեան հաշտին արձանագրեց նուաճում մը, երբ ոտմանքիք սերունդի երիտասարդ ներկայացուցիչները լծուեցան ստեղծարարական գրականութիւնը ժամանակակից պեղագիտական բարձունքներուն բարձրացնելու աշխատանքին:

1915ին, Ըպրահիմ Ապտըլ Գասէր էլ Մէդինի կը հրատարակէ քննադատական առաջին լուրջ ուսումնասիրութիւնը, ուր ընդօրինակող սերունդէն Հաֆէզ Ըպրահիմի գրականութիւնը կ'ենթարկուի սուր քննադատութեան:

1921ին, գրական, ընկերային, փիլիսոփայական, հոգեբանական, կրօնական ու քաղաքական մարզերուն քաջածանօթ մտաւորական-բանաստեղծ Ասյպաս Մահմուտ էլ Աբգաստ, եւ էլ Մէդինի միասնաբար կը հրատարակեն «Իիւանք»: Քննադատական յօդուածներու այս ժողովածուին էջերուն, ընդօրինակողներու սերունդէն կարգ մը «ընտրուած հոյակաւորներ» կը ջարդուին ու կը վերածուին գրական փլուտակներու: Զարդուողներու առաջին գրքին վրայ կու գայ «բանաստեղծներու իշխան» Ահմէտ Շաուգին: Իսկ «Իիւանք» հրատարակումէն երկու տարի ետք, 1923ին, լոյս կը տեսնէ լիբանանցի բանաստեղծ, պատմուածագիր, թատերագիր ու քննադատ Միխայիլ Նախիմի «Մաղը» քննադատական հատորը, որ զաղթախարհի բանաստեղծական շարժման գրական սկզբունքներն ու հաստոյ հանգանակն էր: Այս բոլորին վրայ եթէ դումարենք Մոթրանի, Ճպրանի ու Ռիհանիի քննադատական ու մտաւորական յօդուածները, կրնանք մեր աչքին առջեւ ունենայ արարական արդի գրականութեան իսկական զարթօնքը հունաւորող եւ զայն գրական երեւոյթի մը վերածող հանգամանքները:

Լիբանանցի բանաստեղծ Անթուան Բաստ, Արեւմուտքի հետ կապ պահելու եւ անոր մշակութիւնը բացուելու գծով լիբանանցի գաղթախարհի բանաստեղծներուն բերած նպաստին մասին գրած «Նոր բանաստեղծութիւն» անուն իր հակիրճ յօդուածին մէջ, կը կատարէր հետեւեալ մեկնաբանութիւնը.

«Այս ուղղութեամբ, Լիբանան արարական երկիրներու առաջնորդը համդիսացաւ: Ասիկա գարմանալի երիւոյթ չէ, քանի որ Լիբանան իր գոյութեան սկիզբէն իսկ աշխարհի վրայ բացուած պատուեան մըն էր:

«Առաւելարար գաղութներու մէջ ապրող բանաստեղծներն էին, որ իրազարծեցին գրական այս գարբօնէր. անոնք ուղղակի ծանօթացան բանաստեղծութեանը»:

տեղծական զանազան ուղղությամբ և զանազան մուծեցին արարական քա-
նաստեղծութեան մէջ :

«Ասիական քաղաքի բննադատութիւններու, գաղութի գրականու-
թիւնը կըրցաւ իսկական ընթացիկներուն, սրտիկեղծու ազնու ծնունդ տա-
ծ էր կեանքի նոր պայմաններէն եւ կը յօսէր նոյն պայմաններուն մէջ ապրող
ընթացիկներու հոգիներուն :

«Այս փոփոխութիւնը զուրս բերաւ արարական միտքը աւանդապաշ-
տութեան ցածիցներէն :

Այս փոփոխութիւնները իրր թափարարն ունեցան երեք տարբեր կե-
րոններ :

Արարական գրականութեան մէջ «Ափոյլ» (Եղիպտոս), «Էլ Ռայիթա
իլ Գալամիա» (Հիւսիսային Ամերիկա), «Էլ Ռուպա Էլ Անտալուսիա» (Հարա-
ւսային Ամերիկա) անուններով ծանօթ երեք շարժումներուն ամէնէն յեղա-
փոխականները եղան Ճպրանի եւ Նախմէի գլխաւորութեամբ, յիշանանցի
խումբ մը բանաստեղծներէ բաղկացած «Ռայիթա» յականները :

Մինչ Եղիպտոսի եւ Լուսին Ամերիկայի նորարարները հաւատարիմ կը
մնային դասական գրականութեան որոշ համոզումներուն եւ հայրենիքն ու
ազգային նիւթեր շօշափող քննաներով քերթուածներ կը ստորագրէին, Մ.
Նահանգներ ընտելող արուեստագէտ բանաստեղծները կը զրուէին աւելի յե-
ղափոխական դիրքեր եւ նորին, անծանօթին, ամբողջական ու գեղեցիկ սր-
ւեստին հասնելու նախապայման կը յայտարարէին «ոչ» ըսել անցեալին,
ձեռք ձգել արուեստագէտին ամբողջական ազատութիւնը, յետոյ սուղուիլ
արուեստագէտ մարդուն հոգիին մինչեւ ամէնէն խոր կէտերը եւ բարձրանալ
ամբողջական ու Անծանօթ աշխարհի որսորդներուն, այսինքն՝ գեղեցիկ Բանին :

Այս սերունդին գրօշակիւններէն Ճպրանի ինչպէս Ճպրան, խօսքը աւան-
դապաշտ գրչեղբայրներուն ուղղելով՝ կը գրէ .

«Դուք ունիք ձեր լեզուն, իսկ ես իմ սեփական լեզուն : Կ'ըսեմ ձեզի ,
քէ զագաղին տախտակները ոչ կը ծագին եւ ոչ ալ կը պողաւորին : Կ'ըսեմ,
թէ այն բոլորը, զոր պէտքերը(*) կը կարծէք, ուրիշ բան չեմ՝ եթէ ոչ ա-
սեղնագործուած ամուսնիներ եւ կրպակաւ պատրաստներ :

Իրանանեան գրականութեան մէկ ճիւղը հանդիսացող զաղթաշիրտի
գրականութիւնը, իր զոյգ թեւերով, ոտմանթիք շարժումին տարածման գըլ-
խաւոր ազգականներէն մէկը եղաւ :

Աղատութեան կամ բարեկեցիկ կեանքի մը երազով Մ. Նահանգներ ու
Լասին Ամերիկա զաղթած քրիստոնեայ բանաստեղծները հրատարակեցին
բաղձաթիւ թերթեր եւ գրական հանդէսներ, որոնց էջերուն մշակեցին Արե-
ւելքի ոգեղնութիւնն ու Արեւմուտքի նիւթականութիւնը իրարու մէջ ձուլող
գրականութիւն մը : Սակայն, այս սերունդներուն գրականութեան գլխաւոր
զիծը հայրենիքի կարօտն է : Պայմաններու բերմամբ՝ երկու սերունդներն
այլ կ'ապրէին հեռու Լիբանանէն, որուն պատկերն ու հոգին կը ծաւալէր ի-
րենց հոգիներուն :

Մանկութեան անդիտակից միճակին վերատիրանալու աննչ մը կը բու-
ցարձակի իւրաքանչիւրին տողերուն : Քնարերգակ թախիծ մը կ'առաջնորդէ
զիրենց հոգեմիճակէ հոգեմիճակ :

(*) Պէտք — կոչ, հազորդագրութիւն : Հոս անմարկութիւնը հազորդագրութեան ան
ամենագ բարոյախօսական ու իմաստասիրական գրական տեսի մը մասին է :

Անոնց համար, բանաստեղծութիւնը կախարդական եւ յեղափոխական պատարագ մըն է, իսկ գերթողը՝ սահմանեայն ու անսահմանը ընդելուզել փորձող տէրիւշ մըր, որ կը ձգտի մարդը իր սկարտութիւններէն, վէրքերէն, պատրանաթափութիւններէն ու մա՛նուանդ Աստուծոյ պատկերը ըլլալու հանգամանքէն ձերբազատելով՝ ստեղծել Քամրոզական մարդը», իսկ ձգրանի բացատրութեամբ ո՛ր յն մարդը, որ զե՛ւ պարզ, ե՛ւ մութ խորհարդ մըն է անարտ՝ յար ու մման բնութեան»:

Այս իսկ պատճառով, գաղթաշխարհի բանաստեղծները լծուեցան արարական լեզուին հոստորականութիւնը սանձելու զործին եւ իրենց գրականութեան հիմնական նիւթը հռչակեցին «Մարդը»:

Անտարանէն ներշնչուած իրենց ստեղծագործութիւններուն ճամբով, գաղթաշխարհի յիբանանցի գրագէտները հասան գերմարդկային հարցեր քրննելու իմացական մակարդակին, որ իր յաջողասէն զոյգ ներկայացուցիչներուն՝ ձարանի ու էմին էլ Ռիհանիի մօտ եղաւ անկարելի կարելիութիւններուն մարմնաւորումը: Յաջողութիւն մը, որ այս երկու գրագէտները առաջնորդեց միջազգային գրականութեան լուսաւոր պատուանդաններուն:

Իբր թեմա արարական բանաստեղծութենէն ներս մուտք գործող այս նոր բնաշխարհի տէրիւշները ծագկեփունջերով չգիմաւորեցին մարդիկ, զսնոնք մարաստանեցին ապաղղայնացումով ու վարդապետականութեամբ: Սակայն, ժամանակը եկաւ արժանաւորապէս վարձատրելու ո՛չ միայն արարական գրականութեան, այլեւ միջազգային գրականութենէն ներս անկրնազարձային երեւոյթ մը իրագործած ձարանն ու էլ Ռիհանին:

Ինքն է, որ սկսաւ արարական անմիջական գրականութիւնը, Լիբանանի բնութեան կախարդական բոլոր հարստութիւններով օժտեալ եւ անոր խորհրդաւոր ծոցէն ծնած այս բանաստեղծ կախարդը՝ ձարանն Սալիլ Ճրպրան:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(Շար. 3)



Վերջին մէկ-երկու տարիներուն, Հայաստանի մէջ լսյա տեսան բանաստեղծական, վիպական թէ քննադատական շարք մը աշուղտու երկեր, որոնց պիտի անդրադառնանք մեր յաջորդական համարներուն:

Ստորեւ քանի մը հատին տեսները.

«Անգամ, բացուի՛ր» (Համո Սահեան)

«Դեպի իտքը (Իրան)» (Միլլա Կապուտիկեան)

«Մեղքսնաց» (Քաղմիկ Դուռյան)

«Ինչպիսի բայրը» (Գէորգ Արշակեան)

«Եղիշէ Զարեց» (Սուրէն Աղաբաբեան)

Ստե՛ք՝ եւ ուրիշներ:

Ընթերցողը պէտք է կրահած ըլլայ, որ 70-ական թուականներէն ետք հրատարակ հանուած հատորներուն մէջ եթեմասուն առ հարիւր համաստեղծութեամբ մը աւելի տեսանելի են հայրենի մեր զրոյներուն ինկական հախտոյրութիւնները, արժեչափերն ու կատարողական կարողութիւնները, ըսել կ'ուզենք՝ ընդհանրական թեմաները տեղի առած են տեղական նախաձեռնութեամբ ընտրուած նիւթերու եւ անհասանելի տարբերիչ յատկանիշներու արուած յարզը հասած է ուրախացնող տոկոսի մը:

Վերսիլեալ շարքին մէջ կան արժէք ներկայացնող ուրիշ հատորներ եւս, ինչպէս Նանա շարքէն դուրս մնացած շարքային հրատարակութիւններ, որոնք, իրենց կարգին, քննութեան նիւթ պիտի դառնան մեր աշխատակիցներուն:

Շարքը կը բանակը Համո Սահեանի «Անգամ, բացուի՛ր»-ով:



Հ Ա Մ Օ Ս Ա Ն Ե Ա Ն Ի

«ՍԵՂԱՄ, ԲԱՑՈՒՒՐ»

Այս այն վարդեն է, որը շուրջ քսանամյակներից հետո կարող է ստեղծել լիանձնյա արտադրանքներ:

Գ. ՄԱՀԱՐԻ

Մասի վրայ համարյա հարյուր ամիսների անընդմեջ շարունակված էր կրակը (1940), երբ հրատարակեց իր երախտաբանը և կրեց արտիստի հետևիքը և զարթոնքը, երբ սկսեց ասել իր ընտանիքի և անհատի համարը՝ «Սեղամ, բացուի՛ր», որով ժամանակ, մասնակցեց, կը կարգանք:

«Սեղամ, բացուի՛ր... Կախարդական խոսք արարական հեփիսոսներում, սրով իսկայն բացուում են բաժնուած գամները:

Շտաբայական այս խորագրին սակ հեղինակն ամփոփել է վերջին 3-4 տարուայ սակագործությունները:

Միջին ժամանակների ժամանակ էլ ընդ այս համարին մէջ է զգեստ Սեղամին կախարդական ո՞ր գույները կ'ուզէ բանույ արգելք բանաստեղծել իր ու ընթերցողին առջև, հասածուս է Քարձուած ո՞ր գանձին, բանաստեղծական յայտնութեան մը, հայրենական զննչկութեան մը, ժողովրդային խոհի մը, արգարութեան, կրկնակութեան, ո՞ր Իրադրանքները առանձին-առանձին, անարգելու, և բարձր մէջ, անկասկած:

Որովհետև բանաստեղծի երկունքը, հայրենասիրի հուրը և ժողովուրդի սիրտը միասնական կը խորան մէջը, անհանգստացնելով հոգին փոխ առ փոխ, իրադրանքներին պաշարներով, ծառայած, լուծուածներուն համար ազդեցնելով, պահանջելով, հրահանգելով՝ Սեղամ, բացուի՛ր:

Սեղամը, ինչ խոսք, խույ լինաց Սահանքի երկունքին, կոչուած ու ազդեցնելուն առջև և ժողովուրդի զինք յատկապէս վերջին տասնամակին, ընտանիքով իրեն զխանգելուն արուեստի գործերը արարելու շնորհած պահեր:

Մարդու, բանաստեղծի, բացարձակ, մասնագործի, կուսակցի հակասական սպորտներու զաշու Սեղամ, բացուի՛ր մէջ բազմազան միջոցներով ժաման տասն և յազմազան վեհակներ, նրբին, ուրազ, կարտասանող ու վրդովող վերջեր, յայտնակներ, կարտներ, կրտստներ, կարտներ և ստանդ մոցին, լուրջ, զով է վեր՝ արեւ ու արեւն, հոգ ու խնամքներն, զոյնիք ու իրարարը, զամբ, զտոս, ժամի, հրեւանք, սէր ու լուսնիւն, մահ ու արտադրու:

ստեղծարարներ, մէկ խօսքով՝ ընթացիկէն առաքելը
ժակարգակի մը վրայ բազմաձեւ ու բազմաբան
կէանք՝ բանաստեղծութիւն:

Մանրամասնութիւնը զուրկ պիտի չըլլար շա-
հնկանութենէ:

Կենսատու ընդթով եւ բայխուէլու, Եարաւ-
ներ յաղեցնելու, ամայքներ շնչեցնելու, մաքրելու
եւ երգելու ինքնիկ մղուսներու տէր թեմա մը
ունի Մահեան, ըստ իր, որուն հարող նախանձա-
յոյզ մարդը նախանձ զրգոտը պարզութեամբ պի-
տի ըսէր:

Թող գէշ մի օր ապրիլի,
Բայց ապրիլի չիլի պէտ:

Տեղ մը ըստի պատկերով զբոսորդուած
մարդկայնական այս բազմանքը ուրիշ տեղ հ-
զած է՝

Արսերու, արտերս վարած,
Պարտէրս մարած մեծնի:

Այսպէս ապրած, մտածած, վարուած Մահ-
եանի շնարկան հերոսը երբեմն կը կտակածի
ձեռք բերուած արդիւնքին մասին, զուր կը թը-
ւին իրեն աշխարհի քեռը թիթեղեղեղ մարտը
յանձնառութիւնները, ջանքերը, հոգսերը, կան-
չիւրը, վաղգիւրը, ճանհարին ու անկարելին՝ փոր-
ձած ըլլալու ճիգերը՝ բոլորը զուր:

Բայց էլի, օրբոյ իմ,
Շնորհակալ եմ եւ հազար անգամ,
Որ զանէ ինձ յեղ յմացիք
Աշխարհի յոգնած աների վրայ:

Կը ելանակէ, որ զուր չեն եղած իր ճիգերէն
եւ ո՛չ մէկը: Բեռ դարձած ըլլալու օրինակը
կայ, ի՛նքը, ու բեռ չըլլալու համարն բացուած
է, ի՛ր ճամբան հոս կայ նաեւ ոճական նրբ-
բանք մը, դժգոհելով ու ժխտելով զզգուհուածին՝
ու զժխտուածին՝ զկեցկութիւնը, ուժը, մարդ-
կայնական արժէքը հաստատելու արուեստագէ-
տին հնարքը, որ ճաշուարկից ի Մահեանի մօտ,
կը յայտնուի նաեւ վարը եւ համով ք դարձեալ:

Ինչ եղիլ եմ, եղիլ, —
Միայն չառէք, քէ ես
Աւելորդ եմ եղիլ:

Ասիկա իր ներկայութիւնը, առանձն եւս՝ իր
արժանաւարտութիւնը զգացնելու ձեռք մըն է եւ ո՛չ
թէ, անշուշտ, զտրութիւն յունեցող միաններուն,

զինք աւելորդ համարողներուն ուղղուած պա-
տասիրան մը: Որովհետեւ զիտե՛ք, որ զբոսորդով,
ներշնչով ու արարչութիւններով «կատարեալ
մարդու, մարգարէի, Աստուայ յաւակնորդ» անհա-
տականութիւնն է ան, մեծ ու բազմաթիւ պարտ-
քերու յանձնառու մարդը, որ պարտքերը վճարելէ
պիտի չզարգրի, պիտի չվերջնանս պարտքերը,
կատարուածները նորերու հրամայականներ պի-
տի զգացնեն իրեն, պիտի պահեն հոգին տալու,
բաշխուելու մնայուն տենդին մէջ:

Ճրանասկան արդի դրականութեան տարա-
ժուան անուանիքն մէկը, վիպագրի, զենազատ ու
յոդուածագիր Ֆլույ Բուա, իր «Գրականութեան
պարտականութիւնը» անուն հատորին մէջ տեղ մը
կ'ըսէ: «Վեպ մը կը սկսի, երբ մէկը կը գարմա-
նայ: Կը պատահի, որ գարմացոյց կնդիմակը ի՛ն-
քը ըլլայ, յանախ՝ իր հերոսը, աւելի յաճախ՝
նրկուէր միասին: Այս տեսութեան յրէւ կը
համապատասխանէ բանաստեղծ Մահեանի յանգ-
ժաղործական մղուսը: Զարմանալու ընդարձակ
այդ ունակութեամբ օժտուած խառնուածք է ան,
բոլոր երեսփոխանը կրնան զարմացնել զինք ի-
նք կրնայ զարմացման վիճակի մը մէջ բռնել ի՛ր
իրերը, եւ էական, տեսնել՝ զբարասկները գար-
մանակեալ, «մաշկիկները գարմանակեալ», «ժողովու-
ները գարմանակեալ» եւ զարգացման զին մը զնե-
լով ծնունդի այդ շնորհին մէջ, շարժականի՛:

Ես չեմ կարող յարմանալ
Ամենից շատ չարմանալ
Զարմանալի մարդկանց վրայ,
Որ կարող են
Ահուսարակ յարմանալ:

Զարմանալու անընդունակները բութ հոգի-
ներն են, հաշիւներով իրենք զիրենք խորտակած
արարածները, լլըճուկները, միջկուրթիւնները,
ո՛չ՝ կեանքը բանով մը հարստացնելու կոչումին
սպասարկողները, այլ կեանքին բեռ եղողները,
որոնց հանգէպ այս բարի, հեջ, ա՛նգամ խառն
ու միջնորդին հետ հաշտ ապրող բանաստեղծը ու-
նի խոր արճամարտանք մը, զոր կ'արտայայտէ
դարձեալ իր ոճով, արունց ազմուկ-ազազակի,
զոպուած տառապանքով:

Եղիլով մեռնի, աշխարհ, մալուք մարի,
Միջակութիւններդ միտքերում
Պատտա պատտա արիմ եռգիս, կերամ
Ու չհանգուսացմ ալսում տարի...

Ձարմանալու անընդունակ արարածներու գա-
տին կը պատկանին նաեւ հոգի ուսող միջակու-
թիւնները, որոնք չեն գիտեր ինչպէս, միւլու-
թեանց հասարակ յայտարար նենկամտութեան
զայեկոծ ժուլցքով անպայման, կը գրոտ-
նեն յանկարծ զիրար եւ միարեան կը գտնան
իսկոյն եւ էրրեք հանդիստ չեն ճանչնար անհա-
տին խողաղութիւնն ու կեանքին ներդաշնակու-
թիւնները խախտելու աւերիլ իրենց արշաւներուն
ընթացքին: Օժտուածներուն զէմ այնչոյս փոք-
րահասակներուն մոլեգնութիւններն ու դուրսէն,
իբցսած հասակին պատճառով զարժեալ, դերծ
պիտի չմտար հարկաւ նաեւ Համօ Սահեան, որ
զարմացման մարդացնող լաղախէն զուրկ ցարտե-
րուն եւ միարեան միջակութիւններուն կարգին
մտութեամբ է թխտական արիչ ալ տխարներ:

Սա շիւ կարող չարիսմարեելի
Այն փոքրամտ մեծաւորիմ,
Որ կարգում է գործի գլուխ
Իր տեղալոյս մերձաւորիմ:

Փոքրամտին մեծաւորի առիճանին բարձ-
րացած ըլլալու առեղծաւոր նախ, անդուստ մեր-
ձաւորին նուրբան անըմբռնելի պարագան յետոյ,
փոքրամտ մեծաւորին եւ անդուստ մերձաւորին
զործակցութիւնը վերջապէս, որ մարդկային կա-
ռուցչին մէջ յայտնուած հին ախտանշան մըն է,
միջակութիւնները միարեան զարժեող առաջին
պատճառը, որուն զարման չլստուցաւ բնաւ ու
ախտակիրները շարունակեցին մնալ դործի վը-
րսոյ, լեցուցին կեանքը լղբճուկութիւններով, զը-
տութիւններով, խաշակութիւններով, միջամը-
տեցին իրենց չհասկցած դործերուն, օրինազրե-
ցին սոցիոտութեամբ, մերժեցին կուրութեամբ,
ա՛յն առիճան, որ

Երկար ժամ էր, քէ կարն տարի,
Զնակացանք այս աշխարհի
Այնն ու ոչը...

Գժուարահասկնալի այս ժամանակէն զինչ
Հասկանամք կը գանդատի յաճախ Համօ Մահ-
ճան, քակալն զհասկցածները թուելով կը հառ-
կըցուի արդէն, որ բուսակա՛ն բուն Հասկցած է
աշխարհէն, ուր, իբ հաստատուներով զարձ-
եալ, ընթուած են հոգին ու երկնքին սահմանազը-

եհրը, դիտութիւնը լեցուցած է բոլոր տարածու-
թիւնները, թախչեները բազմապատկուած են, խո-
րութիւնները պեղուած, մեծագործութիւնները Խ-
բարու կը յաջողեն, լսյո է ամենուրեք, ույսու-
հանդերձ հօտը հոգիւր չի մանկար, հաւքը՝ իր
ծաղիկ

Իւ... դառնի է միջեր տնգամ
Գայլը գառին ժառանգակից:

Վերոյիշեալ բութերուն, միարեան միջա-
կութիւններուն, փոքրամտներուն, անգլուխնե-
րուն եւ զայլերուն ստեղծած գտտին մէջ դեռ
կան անդիմադրելի ուրիշ ալ դերակատարներ, ծիա-
ծաններ կուլ տուած զամբներ, ամբողջներ, ա-
մէն ինչ ուղող, պահանջող, խլող եւ տակալին
հարստահարուածին կուրութիւն, խլութիւն, դա-
հունակութիւն պարտաքող կոչը ու խուլ ուժեք,
որոնց հետեւ ամենող վերձանուսին կը հրոտա-
րինք մեծաւորիւն, մնաց որ, անոնց իրակամու-
թիւնը այնքան կարեւոր չէ, որքան բանաստեղ-
ծին յայտնարեան բանաստեղծական իրականու-
թիւնը, պատկերաւոր վերաբերումը, բերած հո-
գերանութիւնն ու դողը, որոնք երբեք բացակայ
չեղան Սահեանի դրչին սակ ու շեղում, բաց-
վիճի մէջ նուաճուած են առաւելադոյն նամ-
ժատութեամբ մը:

Անչեալ մը աշի Համօ Մահեան եւ մանկու-
թիւն մը, ու մտնութիւնը՝ առանձին մէլումայր
մը, Զանկեղուրի շրջանը, որ առաջին օրէն ընկե-
րացաւ հոգիին ու աճեցաւ հեռը՝ իբ անհասան-
լի հրապոյրներով: Այլարհի այդ ժամին անտա-
ռը, կանանը, զարագը, լրբիճը, հողը, անձրե-
ւը, արեւը, անոնց մէջ, մտ, վրան, վերեւ ապ-
րող արանն ու անասուն բոլոր էակները իրենց
անհասանկանութեանց սղ յատկանիչներով՝ շա-
ռալմամբ, հետքերով, կայունութեամբ, ծիա-
ծաններով, ճառագայթներով, լուսութեամբ, հո-
գերով, ճիշդով ու ճիշդով մուտք դործած են
բանաստեղծին էջերուն մէջ եւ բառերունն ու
պատկերներուն մէջ իրենց լիութիւնը գտած՝
կ'ազրին իրենց երկրորդ կեանքը:

Բնութեան հետ ըլլալու, բնութեան պէս ըլ-
լալու, բնակա՛ն ըլլալու ներքին այս պահանջը
ամէնօրեայ կղաւ այս բանաստեղծին մտա եւ յոգ-
նեցուցիչ չեղաւ ընթացողին համար երբեւեցէ:
Անփոխարինելի այդ հարստութեան ծոցը Մահեա-

նի հողին մանկացու միշտ ու զիրքէ զիրք Վար-
բայան աբուհատը, էրբ անկէ բերուած ազաւո-
րութիւններուն իւրաքանչիւրէն գող մը, շնորհ
մը, հրանք մը ուզեց կենսազրիւ:

Ինչ կը զգայ, կը թրթուայ, կը հաստատէ
ու ընթերցողը կը մասնակցէ զգոցուածին, կը
հաւատայ թրթուին իրաւութեան եւ կը համոզ-
ւի նաեւ, որ բնութիւնը բոնաստեղծին իրապէս
ստեան է այսուրժ նորոգ իր հնութիւնը՝ Լրջէժ-
ներուն անգնութիւնը, քարափներուն համբերու-
թիւնը, անգուեղներուն տարողութիւնը, «սեփա-
կան վէրքերն ապաքինելու կարողութիւնը», եւ
զին՝

Իմ Բնաբան յետմի ուրախութիւնը,
Իմ Բնաբան յետմի ինքնախորհիւնը,
Իմ Բնաբան յետմի ինքնախորհիւնը,
Իմ Բնաբան յետմի ինքնախորհիւնը,
Իմ Բնաբան յետմի ինքնախորհիւնը...

Այս Թարմ բնութագրումներուն ամենէն նըր-
բինն ու սիրելին վերջինն է անշուշտ, իր մեծու-
թիւնը զգալու եւ անուշղակիորէն խոստովանելու
հնարքը, զինքն իր մեծութեամբ չլսարժենալու
երկնայինութիւնը: Անշուշտ Առանց մեծութեան՝
միւս վիճակները ո՛չ այդպէս կը զգացուէին եւ
ոչ ալ այդպէս հաւատարի կ'ընծայուէին: Անար-
հաւատ, մուտկուութեան, ինքնութեան, ստեղ-
ծումի եւ վերացման ազրիւր է հոս մեծութիւնը,
որ իր լրումին բարձրացած է բարոյական միւս
պայմանով, անով չլսարժենալու տղամարդկային
առաքինութեամբ:

Բնութեան յզնահարմար կրկնութիւններուն,
լարժուաններուն, խոտըններուն ու անխոտ բրնձ-
ներուն գեղեցկութիւնները պատկերացնելու ա-
բարքին հետ՝ տարբերային նոյնքան յակտանիներ
էր մէջ համարող բարդ նախը արտայայտու-
կան այսպիսի Թարմութիւններով պեղելու շնոր-
հը Ստեանի արուեստին մէկ ուրիշ ընդգծուած
նուաճումն է:

«Սեպտմ, բացուի՛րքի մէջ մարմնաւորած կա-
յուն իրերուն կարգին յատկանշական է մոնա-
ւանդ բարք, որուն թէ՛ զազաքակրթութեան ու
մշակոյթին ծառայած մտքը եւ թէ՛ մարդու ձեռ-
քէն հետո մնացած թափնը հիացումի, երկե-
ղի, խոնարհութեան, մեղեդիի, պարի ու պար-
թող ազդակի պատճառ է բանաստեղծին հո-
մար:

Իրար գլխին նստած սարի,
Ձորեր բնած իրար ծոցում:
Սարերի մէջ ու ձորերի
Մի քարեղէմ իրարանցում:

Քանեսկին առաջին երկու տողերը, պատկե-
րուոր ըլլալով հանդերձ, շատ բան չեն քսեր,
Ստեանը առանձնացնող ներքին ուժ լուսին եւ
զժուար պիտի ըլլար գանգաղի անոնց առջեւ,
եթէ բացակայէր ամբողջութեանը շարժումի մէջ
զնոյ տողը՝ «Մի քարեղէմ իրարանցում»: Սա-
կանի մտքին, որոնն ու տեսողական զգայարան-
քին յաճախ այս որակով կը ներկայանան իրերը,
ներքին անհանդարտութեան ալիքներէն զարեւած
տարրերու կենսականութեամբ:

Քարաշատ վայրի մը նկարագրող պարզող
պատկեր է Քարեղէն իրարանցումը, որ ներշնչու-
չելու ներդրակ հնարաւորութիւններ կրնայ ու-
նկան ըլլալ, բայց գեղեցիկ է բանաստեղծին գե-
ղեցկացնող զգայարանքին շնորհիւ: Գուցէ նաեւ
նման պատկերներու առջեւ է, որ ընդհանրացում-
ներու մասին կը սկսիք իօսել: Պատկերին ծա-
նոթ ընթերցողը նման երեւոյթներուն հազիւ թէ
կարենայ այնքան սեփական աչքերով նայել: Սակ-
եանը պիտի միջամտէ անպայման՝

Մի քարեղէմ իրարանցում:

Բնութեան պատկերները սիրելի ընծայող
Ստեանի մեծագոյն յատկանշիւններէն մէկը այդ
է, լարժումը, միւսը՝ հակադրութիւնն է, որ
անակնկալ յայտնութիւններով կը մարդկայնացը-
նէ բնուած պատկերը:

«Սեպտմ, բացուի՛րքի մէջ ըրտալըն վերձագ-
րին տակ նկարագրուած է անտարի անտառեան
բնակար մը, որ կը սկսի ու կը զարգանայ այդ
լեցնող ու սիրտ լեցնող Թարմութեան պատկերնե-
րով, — շողաթաթախ ցող է, ցողաթաթախ շող,
Թոշունի երգ, կղերուի ցողաթաթախ բուռն
ամբողջութիւնը զգոյթաթաթախ երանութիւնը,
բայց յանկարծ՝

Հնու-հնունում, մի իսկ քրտ, ծախ ու կայծ...
Ու ձորն ընկաւ անտառի աչիի տայ
եղերուի արնաբարսոյ մի բուռն...

Անտառն ստեւ Ծիր-կաթիճից էր կախած,
Ասից-գլուխ արցունքի մէջ քաքախում:

Յառաջ է աւարտուած սպաւորութեան մէջ
հոգեբանական տեղադրութեան պատճառը: Պակ-
տոյ շունչին հետ բնականը կորսնցոյ իր պեր-
տութենը, երանութեան փոխարէն թախիծը պա-
տեց ամէն կողմ ու շղարթաթախ անտառը նոյն
վարկեանին արցունքի մէջ թաթուեցաւ:

Բայց ասոնք վիճակներու տեղաշարժներ են,
սրտի հիմնական ու առանձին ոչ մէկ նշա-
նակութիւն ունին բանաստեղծութեան մէջ, ուր,
արցունքը եւ ժպտը նոյն կէտը ունին:
Վիճակներու այս տեղաշարժներուն ժառ կա-
րեւոր, բնական է, բանաստեղծին վերաբերումն
է, պատկերիչու, յորհչու, Համոզելու զորու-
թիւնը, որ, աւելորդ է ընդդէմ, Համա Սահա-
նին չէ պահած նաեւ հոս: Անոր գրչին տակ
յազաթաթախ բառալը եւ արեւթաթախ բառալը
ուներն նոյն ուժը:

Սահահան ո՛չ միայն անւարժին մէջ շարժումը
կուսակու բնազը մը ունի ու Հանդարտութեան օ-
րէնքը կիրարկելու բնականութիւն մը, այլեւ ներ-
քին զոպոզութեամբ վրէժ ճարհիլու համար թեւ
բացոյց կակներուն ու անդունդներուն խորհուրդը
Համոզել: Գեաղբիւր իր թալու բացմանը զորան
բանաստեղծութեան մէջ զանի մը կարտազաւա
արանագրութիւններ ձեւակերպելէ ետք՝

Եւ Արքայանքիս խորհուրդով յափնմ
Արձախի հայրամարտ վիեհրի վրայ:

Բանաստեղծ եւ արժեւ: Ներշնչանք ու ճար-
քանք: Ծորհուրդ ու վիճ: Աւ գործողութիւն: Վի-
հրէ խուզարկելու ելած արժեւին տեսիլնունծա-
լին ճարհանքը զիլ աւրջութիւն չունի բանաս-
տեղծին ներշնչանքին հետ, որ ներքին անդունդ-
ներու տարողութիւնը ստուպիլու համար յաճախ
կը ձեռնարկէ արկանալից եման թախիճներու:

Ըլլալ հոն, սիրելի միջավայրին մէջ, Նայիլ
վեր ու վար, բարձունքներուն ու վիճերուն, յանձ-
նելի թախիճներուն ու սուզումներուն կախար-
չութեան, եւ ապա՝

Փռուեմ Գեաղբիւրիս փեշերի վրայ
Ու խղճսմ ճրամ, որ Գեաղբիւր չուճի:

Այսինքն անոր, որ զուրկ է լրացուցիչ կրթ-
նականութիւններ յայտնակերպելու արարքին օժան-
դակող սիրելի եղբրքներէ:

Հոս արգէն բանաստեղծը կը զգացնէ մեղի

աւելի խոր կրականութիւն մը, այսինքն ո՛րն որ
Սահահանի բնութիւնը իր թելադրած, յուզած, ներ-
շնչած պատմութեամբ, Հոգեբանութեամբ ու ապ-
րումներով ունի ազգային շնչու անհատականու-
թիւն մը, որ նոյն ասոն կը մասնակցի իր ար-
բան գաւազներուն հոգեկան կառուցքին, անձան,
կարկանդակ, ուժ, ու նրբութիւն, ու ընդշնչան
ամբարիլու ու ծաւալիլու անոց հետաւորու-
թեանց: Այս պայմաններուն մէջ է, որ քանդա-
տեղծը կը յորհչի Հարազատին հասնիլ եւ նորոգ-
ւած իր զգայարաններուն թերած տալ յաւելում-
ներով ամէնորեան, Ժանթը, մարտիմ քարձա-
ցրենի նոր սրակի մը:

Գու սարերի մէջ եւ ձորերի մէջ,
Անձանորք զու Արքայի մէջ
Ու հեհրի մէջ ամենահիմը,
Գու ի՛մը, ի՛մը ԱՄԵՆԱՄԻՐԸ:

Եւ մի բուս մրկած մամուրը Էարիզ
Եւ յետին հիւլէն հիմնական ծառից,
Եւ Էա քոզարքը, ծիլը, կոհոնը,
Եւ Էո՛նը, Էո՛նը, ԱՄԵՆԱՄԻՐԸ:

Այս Հանդամներուն մէջ գտնուող զամե-
նահիմը Հայաստանի է հարկաւ, որուն միջ-
վայրն ու շրջապատը Ժանթ է ամէնուն, ու ա-
նոց արուած ստորագրելները կը հանդիսանայ Գ,
Անակի օրերէն: Բանաստեղծին պոետաբան
միւս տարրերէն ամանց եւս Հանդիպած ենք ուրիշ
տեղ: Պետին հիւլէն կը հանդիսանայ նորակայի
օրերէն տալին: Բայց ամբողջութիւնը սահանա-
կան շունչ մը ստացու է, սովորական դերանու-
ներով սկսած եւ նորանորներով զարգացած սո-
ղեբուն ընդշնչանք մը ընդ թերած է բուրբոյլին
նորոգ համ մը: Կարիք է ընդհանրացնել զայն,
չնիւալ Հայրենասէր մարդուն, սիրամառ արտին,
զեղեղութեան մը առջեւ թրթուրու ընդունակ
ունէ՛: Ըզդի ու չկասկածիլ անոր Հաւանական
արձագանդներուն մասին: Ընթերցողին ուշադ-
րութիւնն չի վրիպիլ անշուշտ նաեւ անոր կա-
ռուցքի զարգացումը, աւերիչ փորձութիւններ
յազթաւարիլու տարեւութեամբ ամենահիմը կա-
րենալ մնալու թանկ պատիւը, նորերուն մէջ ամե-
նանորք դառնալու մեծ նախանձանդրութիւնը,
հիմն ու նորին դիմաց թրթուրուց մարդուն սո-
սիալական վիճակները վերլուար, որոնք կ'ա-
պահովեն շարժումը, զարգացումը, պատկը

Պէտք է ընդգծել սակայն ժամուկէն մինչև կողոն հասնելու հրահանգը եւ հոն կանգ առնելու խոնարհութիւնը, այսինքն՝ ծաղիկ ու պտուղ լցուցողներու ժողովարարութիւնը, ու զամենտէրէս զարժանի, որ առնակալու հրահանգն է, եւ զամենաքննելու, որ զոչարեւորութեան յանձնարարութիւնն է:

Այս ամենակերպ, ամենախորհրդ, ամենախորհրդ, ամենախորհրդ եզրու աշխարհին մէջ կազմուած են Սահեանի թէ՛ արտակարգացած ժարդու աշխուտունէ մտկարար եւ թէ բանին սպասարկու կոչեցեալը: Առաւելուոյն լուսով մը զնախաստեղծ ու բիրտ յախտեալքեան զարբի մէջ արժատ արժանան այդ աշխարհէն, շարին տարեկից այդ եւերքէն ան կ'առնէ իր ներշնչումը եւ անոր պատկերներուն, ջրերուն, ապաստաններուն, ժողովուն, վերստին, կատարներուն կենսագրութեամբ, ամբողջութեամբ ու արտաբնութեամբ կը լինեն անորքը, այդ բոլորն հարած ինքնութեամբ կ'առնէ ներկայանալ աշխարհին, զայրեաներուն, սերունդներուն:

Քինչ-որ խորհուրդ կայ մի անցումելիս անորով սրտը երկու տաննոց ուրիշ պատկեր մը ունի Համո Սահեան, որ վարէն վեր զիս մը կը հասցնէ եւ դան ի վեր կարծախայտներ վազեցնել հոսք:

Նայում եմ գետին ու խորհում եմ ես
 Յզպումմնիս էլ, լինում է մի պահ,
 Գնում եմ դեպի անտեճները պող,
 Կարմրախայտերի վառանքի պէս:

Նման առիթներու է անպայման, որ ժարդիկ խորունկ նիւթը պարզ արուեստով տալու փնտրուած արժանիքին մասին կը խօսին: Սահեանի մտտ յաճախուղէպ է այս նուաճումը: Արտաքին իրականութիւնը եւ ներքին ճշմարտութիւնը՝ զով ջրզին: Հազարդական՝ ամբողջութիւնը: Կենսունակ, հետեւաբար նաեւ ասօ՝ մինչև անգամ ակունքին զով Համարեա՝ աւերող զպաշտ ժողովրդը:

Արտեքին հաւատարմի մտալու այս սկզբունքը պատկերի վերածնունտ է ուրիշ տեղեր եւտ ջուրէ թեմայով դարձեալ: Եթէ ջուրը ակունքէն չհեռանայ՝ ծով չի դոյանար ու գեղեցկութիւն մը կը պակտի աշխարհէն, եթէ ջուրը կարուի ակունքէն՝ կը կորսնցնէ թափը, ժաջրութիւնը, կերպարանափոխուելով՝ հարստանալու հնարաւորութիւնը: Հեռանալը պայման է՝ նոր ձեռի մը հաս-

նելու համար, ակունքէն չկարուիլը կրկնակի պայման է՝ շնորհակալութեամբ, ու պայմաններուն պայմանը՝

Ջրի նման դու աշխարհ եկ,
 Ար չուրք քեզ յտանի, երգ:

Մտանալու եւ հեռանալու, ուժիւրուելու եւ արտածուելու սկզբունքով զրուած է նաեւ զկարուելի եմք բանաստեղծութիւնը: Պօսքը հայրենի մեջմայրէն, կանանկերէն, հաւքերէն, կրքերէն, Եղիկներէն անջատուած արտին մասին է, որոնց բախտանկերը

Առնեմ, զնեմ էմ վերքերիմ,
 Ար չու նորից քեքրուանս,
 Ազգախնայնս ու յաւանս:

Այս պայմաններէն պիտի անցնես, առողջու-
 նաս, զօրանաս, զինուիս եւ ապա միայն

Թովալով քոյննս գնաս
 Քեզ կարտած,
 Քն կարտած ետառները:

Կ'ըսեն, թէ վէպի մը զկենսադրականը նոր-
 քան շահեկան է յանախ, որքան վէպը ինքը: Անարե ժխտ այդ թեմայով նոյնիկ վէպ մը զը-
 րած է՝ «Իրամանեցանք» (Les faux monna-
 yeurs): Գաղափարներու աղբիւրին, զրեւու մը-
 դուին, արարքին, տառապանքին ու հաճոյքին մասին վկայութիւններ բերող հեղինակային այդ խոստովանութիւնները արժանաւորներուն ծոտ իրապէ՛ս ունին ասանմին կշիռ ու վայելչութիւն: Մեր մէջ, Ջարեկեցի ետք, զրեւու արարքը զբա-
 կանութեան վերածած ամէնէն հետաքրքրական բանաստեղծը եղաւ ու կը մնայ Համո Սահեան:

Ճշմարտութիւնը՝ հողից,
 Խոկ խորհուրդները խոռվ
 Տառապանքից իմ փարձուած
 Եւ իմ փորձից եմ քերել:

Հողը, հողին վրայ թեւածողները, հողին վը-
 րայ ծիսականուողները, վառողները, հողակիցներն ու հողանիները միշտ այդ պաշտով ներխո-
 յացած են Սահեանին, եղած են ճշմարտութեան ծնուցիչ ուժեր, լեցնելու, մեւաորելու, գոճա-
 վառելու եւ շնորհակալութեամբ պատճառ՝ շնորհակալութեամբ հողից: Աւ խորհուրդները

միւս Հնոցէն, մարդուն հողին, տառապանքէն, որ անձնօթ մի՛նք մը չեզու Սահեանին եւ Հեանեցաւ իրեն իրբեւ Վերածանս, անդաւաճանս, զգոճանս, Վանդաղարս» եւ երբ ոտաւս պանքը թող տուաւ օձիքը, ինք կանչեց տառապանքին, որովհետեւ աւանց անոր՝

Ինչիս տուն ի՞նչ գալիս,
Երգս կի՛ք շի ճարուս:

Իր երգին, այնինքն՝ պարտքին, այնինքն՝ կոշուճին ճշմարտութիւնը եւ կատարման կշռակները, այսպէս, մայրան ասոցնայի մը մտածած են այս բանաստեղծը, որ բնութեան արտայայտութիւններուն եւ իր ներքին կացութիւններուն միջեւ զուգահեռ մը գծելով կը ջանայ արդիւնաւորել, ամբողջել կամ խաղաղեցնել հողին: Նման արուստի մը արդիւնք է դարձնալ իր թանկագին Վերակենդանեան արտաբերուն մարդկայնացումը կամ ապրտածանալու իր բաղձանքը: Պատմութիւն, խորհուրդ, յանձնարարութիւն թելադրող արտաբերուն ուղղուած է Հետեւեալ աղերսը.

Կանցնէ՛ք այդպէս իմ շարք բարդ,
Հրամայէ՛ք, որ քարանձաւ
Եւ ձեզ մնամ բարք, բարք,
Սիրունիներին ընկերսնամ:

Երգուածը «հողակից» արտաբերուն ու հողին յանձնարարութիւնն է արդեօք, թէ՛ արտաբերող վաստակ մը կտակելու մարդկային առաքելական բաղձանքի մը խոր իրաւութիւնը: Թէ՛ մէկը, թէ՛ միւսը, հարկուաւ:

«Ու ես իկայ» բանաստեղծութիւնը, որ ինքնակենսագրական փաստերու վրայ կը զարգանայ եւ կ'աւարտի Վեկոզին» երգիին կոշուճով եւ իրազդերմաներով, սերունդներսան ընկերանալու ունի աւելի վաստակի պատճառ մը, որովհետեւ իր ծնունդով եւ իրմէ՛ ծնած գեղեցկութիւններէն առաջացած խոր համոզումով, կեանքի ճեմէ՛ կամ մերգներում»

Մեր աշխարհի համ աւ հոսով
Մի՛ ցօր կիք էլ աւելացաւ:

Աշխարհի համարգներուն վրայ աւելցած սահեանական երգը ծանօթ է մեղէ, ինչպէս նաեւ խորհրդային սահմաններէն ներս թէ՛ գուրս դանթառ ասանակ ուրիշ ժողովուրդներու, ու ծանօթ

է ստակաւար իր առանձնաշատութիւնը պարմանաւորող կեցողիչ տարբերով, Վմեր աշխարհի համ ու հոսով» մանաւանդ, շնորհիւ այդ համին ու հոսին առաւելագոյն սեւ հաղորդող բանաստեղծին անհատականութեան, որ առաջին օրէն գիտցաւ ու շարունակեց կապոյտին, մայրամուտին, կեանքի պտոյտին եւ մէջ ու մշուշին մէջ լողալ՝ Վեհական թեւերով, լողալ՝ Վեհական շողերով, զողալ՝ Վեհական զողերով, եւ լոյս տալ՝ Վեհական կրակով: Իրբեւ ուրոյն աշխարհի մը ծոցէն ծնած եւ այդ աշխարհին ուրոյնութիւնը շնչաւորող բոլորով, շունչերով, կանչերով, ազիթքի հրաւիրող հրապոյսներով տեսարար արբիւր անհատ՝ Համօ Սահեան պիտի ուզէր տակաւին, որ իր երգը օժտուէր հողային հարստութեամբ շնչաւորող զօրութիւններով, ունենար Վեհակոզիչ բոլորը, Վարակովիչ շունչը, Վարակաւիչ կանչը, ըլլար Վէին զինիթ պէս, Վաշմարտային աչքերը բացող թռչուններն են, բոլորով յազնցուն, արթնութեան հրաւիրող կանչերով լի:

Այս բովանդակութիւնը ունի Համօ Սահեանի բանաստեղծական միջավայրը եւ այդ միջավայրին մասին է խօսքը նորէն.

Մի՛ խօսէ անեմ քն անանից,
Մի՛ լուր տանեմ գալիքներին:

«Սեզամ. քացուիք», ինչպէս նաեւ նախորդ Հատորին («Քարափննի երգը»), ինչպէս նաեւ նախկինին («Մայրամուտից տասը») մէջ, Համօ Սահեան զբնթէ՛ ամբողջութեամբ սանձած է լուրիերկերայ թոխիցները եւ այս անկէնհէն, Վյուղ ակունքներէն բխող տաք ու Վանհասելի յազնուճանքով յանգած է աշխարհին ներկայանալու արգասաւոր համոզումի մը:

Հարցադրոյցի մը ընթացքին այդ մասին խօսելով, ան կը խոստովանի, որ տարածուելու կուշիւն

«Արդիւնքը եղաւ այն, որ ես գրեցի առաւ երկարամիզ սոսնաւորներին մի ամբողջ շարք ինձ համար. որպէս բանաստեղծի, հեռու եւ անձանց կրկրներին մասին: Երբ միամիտեան վերջերս մեր Վարական թերթում կարգացի, թէ հարկատու է լայնացնել ճնարիքուիւսն աշխարհագրական հորիզոնները, ես ժպտացի»:

Շարունակելով՝ տակաւին պիտի ցուէր այն մարդոց հաշիւն,

«Որոնք հաւատացնում են մեզ, թէ բանա-

անզոր պիտի է հետամայ իմքն իրենցից եւ իրեն
չբրտնջելով, գրի աշխարհի մասին... Իսկ այն
բանաստեղծը, որ իր բանաստեղծութիւններէն ի-
քնն համելով գրում է ուրիշներին մասին, հազիւ
թէ հետաքրքրի այն ուրիշներին:

Ի հարկէ, եւ անհրաժեշտ է:

Որովհետեւ իրենք իրենցմէ հեռացողները ան-
նոք հրաժեշտ են միշտ, որոնք իրենց մէջ գանդա-
ղիւտ քիչ պատճառներ ունեցած են, աշխարհը
իրենց մէջ զգայու խորութիւն չեն ունեցած, զո-
րութիւն չեն ունեցած, կազմակերպչիք գտնու-
չեն ունեցած, ուրիշներուն հաղորդիչք արժանի
տարերք չեն ունեցած, զորէ կըզած են ներքին
տարերքերէն ազատադրուելու բուռն տենչերէն:

Համօ Սահեան Վեղցուցք բանաստեղծութիւն-
ներու աշխարհագրական իր հորիզոնները, նոյն
համեմատութեամբ ընդարձակելով ամենապար-
ծական հնարաւորութիւնները:

Ի հարկէ, զլեզուով, բացուի՛րք հուսարա-
զօր բանաստեղծութիւններով լեցուած միակտուր
դորձ չէ: Հոն անչ գտած են հրապարակագրական
ժակարգակի մը վրայ ծնացած կարգ մը ոտա-
նաւորներ, ծրարային շարքերէն (եկեղծիկներ-
ընթաց, «Ես լնմ կարգ») անոնց շատ մօտիկը զըս-
տաւոր կտորներ, ինչպէս նաեւ անկիւն մտորում-
ներ: Պարզ օրինակ մը չիլիլու համար՝ կար-
գանք:

- Յնու՛մ ե՞ն-գալիս,
- Անու՛մ ե՞ն-տալիս,
- Անու՛մ ե՞ն, գնու՛մ,
- Թողնու՛մ ե՞ն, գնու՛մ:

Անիկա ամբողջէ մը անունած մաս մը չէ,
իրրեւ ամբողջութիւն էլ զբաւած քառուկ մըն է

եւ խորագրուած է «Մարգիկ», ուր, սակայն, ո՛չ
լարժող մարդ կայ եւ ոչ ալ շնչաւորող բանաս-
տեղծ: Շարժային մարդոց երթեւեկը կտրելի չէ
արգիւնչ կեանքին մէջ, մտահոգիչ ալ չէ անոնց
պարագան, որովհետեւ, ի վերջոյ չբողջուած են,
զնու՛մ, բայց պարազան երջը չէ լարժային բա-
նաստեղծութիւններուն, պէտք է շատ զոչը ըլ-
լու այս վերջիններէն, որովհետեւ ասոնք չեն ձը-
գեր երթար, կը մնան ու բնա կը զառնան բա-
նաստեղծին, գրականութեան...

Բարեբախտաբար, թոյլ կտորները հեղձու-
ցիչ անասութեամբ մը չեն ինկած զլեզուով, բաց-
ուի՛րք մէջ: Տիրակալը մեւսներն են, լսմն լըն-
լառութեամբ օտուտաները, նախորդ էջերուն
յիշուածները, որոնց վրայ՝ հասարկն ծանու-
թեան կեդրոնը կազմելու համար՝ պէտք է գու-
մարել անոնք, որոնք նախորւած են քարեղէն
խորհուրդին (զՈ՛ր ար մայում եմք), մանկու-
թեան աշխարհէն հրաժատ կարօտին (զԿոմունի-
ստ ստմերք), ներքին հարստութեան (զԵս կա-
րուտ եմք), սիրոյ (զԵս յիմացայ թէ ինչպէս),
հաւատարմութեան (զԿը գամք), երգին (զՄտն-
քիմ շուկն իմ երգիքն), կենդանադրին (զՊարայր
Սեւակ) եւ հայրենասիրութեան:

Ասոնք, բոլորն ալ, իրեն յզացուած եւ հա-
տարուած՝ կը կրեն Սահեանի բնորոշ յատկանիշ-
ներէն մէկը կամ միւսը, երբեմն բոլորը միասին,
խորութիւնն ու պարզութիւնը, երաժշտականու-
թիւնն ու պատկերելու ուժը, թելադրականու-
թիւնն ու անկեղծութիւնը, նոր բաներ կերտելու
կարողութիւնը եւ հինները նորագիտութեամբ
Արուստը:

Ընթերցողին սիրտը բացող գիրք մը՝ զՍե-
զուով, բացուի՛րք:

Պ. Ս.





Կոմարներ

Կ Ը Ղ Օ Ղ Ա Ն Ջ Ե Ն . . .

Արարելն լեզուին ծանոթ եւ ժամուին լրջօրէն հետեւող մեր երիտա- սորդներէն մէկը ներկայացուց մեզի վարժ թարգմանութիւնը, որ եթէ մէկ կողմէն կը հաստատէ բանաստեղծին հաղորդակցութեան արագութիւնը, մյուս կողմէ՝ կը բազայայտէ մեր երկրին հաղորդակցութիւն ստեղծող հա- րուստ նարարութիւնները, թէ՛ բնականը եւ թէ՛ բնականին վրայ մեր ար- տեսողականներուն գումարած գեղեցկութիւնները:

Հոս, առաջին տպաւորութիւնը առնուած է Արարատէն եւ երկրորդը Ռաֆայէլ Իորայէլեանի կոթողած սարգարապատեան յուշարձանախումբէն, որուն պատմութիւնը, խորհրդանշական բաժիններն ու խորհուրդը նոյնպէս չեն խուսափած արար բանաստեղծին ընկալչութենէն:

Համէլի է մեզի Իսրայէլեանի զլուխ-գործոցին կարգ մը ժուտերը բո- վանդակող թիւին մէջ բնթերցողին ուշադրութեան յանձնել անկէ ստացած արար բանաստեղծին ներշնչումը:

Ս Ա Ր Դ Ա Ր Ա Պ Ա Տ Ի Զ Ա Ն Գ Ա Կ Ն Ե Ր Ը

... Երեւ օգանուներ Այմա Աքայի օգակայանէն մեզ փոխադրեցին Ե- րեւան, ուր տեղի պիտի ունենար Ասիայ եւ Ափրիկէի բանաստեղծներուն ստեղծագործական մեծ փառաստօնը:

Հոն, երեւանի օգակայանին մէջ, մարդ դէմ առ դէմ կը գտնուի երկնքի խորերէն կայտաւած լեռնաշղթայի մը, գար կը պատեն սպիտակ ամպերը...

Եւ լեռնաշղթաներուն կ'երկարի հայեացքդ եւ կը զգաս, որ անոնց կողմը կը յառաջանաս...

Կարծես թէ առասպելական այս լեռները Մացնիսի լեռներէն ըլլային, որոնք հաւերուն տախտակները կը քակեն հարիւրաւոր ֆլորոսքր հեռաւո- րութիւններէ...

Երբ հայ քարեկամներէս մէկուն ուշադրութիւնը գրանց արտասովոր այս լեռներուն ուղղուած սեւեռաքիբ հայեացքս, Եգիպտոսի օրաբերէնով ը- սաւ:

— Արարատ լեռն է, մեր հայրենիքին խորհրդամշանը, սակայն այսօր կ'իյնայ թրքական սահմաններէն ներս:

Մայրաքաղաք Երեւանէն երեսուն ֆլուսքր հեռաւորութեան վրայ կը բարձրանան գանգակակիր սիւները Սարգարապատի յուշարձանախումբին: Մուտքին՝ կանգնած են գոյգ մը ցուլեր, որոնք իրենց գլուխները խոնարհած են իբր սուգի խորհրդանշան այն միլիոն հայերուն, որոնք թուրքերու կազ- մակերպած ծանօթ հայաստանութեան ընթացքին մորթոտուեցան:

Սրբ կը սկսիս բարձրանալ աստիճանները՝ դէմ յանդիման կը գտնուիս սիւներու, որոնց գագաթներէն գանգակներ կախուած են: Եւ կը զօղանքեն անոնք: Եւ անոնցմէ կը ծառայի երաժշտութիւն մը, որ չէ յօրհնուած ոչ մէկ երաժիշտի կողմէ:

Այդ երաժշտութիւնը յօրհնած են գոհերն ու նահատակները:

Եւ մարդ չի հասկնար, թէ ինչպէս կը զօղանքեն անոնք:

Հոն գոյութիւն չունի ոչ մէկ գանգահար:

Եւ անոնք չեն հնչեր, ինչպէս կը հնչէ ժամացոյցը:

Մակայն, այնուամենայնիւ, կը զօղանքեն... Հսկը կը շարժէ գանոնք, ու կը զօղանքեն:

Հովին մէջ յաճող նահատակներուն ճիշերը կը զարնուին անոնց ու կը զօղանքեն...

Եւ կամ՝ Արարատ լեռը իր գագաթներէն կ'արձակէ արծիւներ, որոնք իրենց թռչելով կը քափառարեն գանգերը ու գանգերը... կը զօղանքեն...

(«Ընսպուհ էլ Արարատ») Մ Ո Ւ Ի Ն Պ Ա Ս Ս Ի Ս Օ

Հետ, հրաւերներ կու տային մէկը միւսին, կը գուրգուրային իրարու առողջութեան վրայ, կը թղթակցէին:

Տառերօթ տարիներու տիրոջը տւեղութեան ամէնօրեայ ահաբեկումներու ենթարկուած ու ահաբեկիչներու գոյութիւնն ու գործունէութիւնը հաւանական նկատող Մահարին, հսոկեալի է, որ զոչոչ ըլլալու հոգեբանական հարկադրանքի մը ճշումով՝ երեւութապէս պահէր զբարի գրացնութեան» խաղող կապերը իր երիտասարդութեան թանկագին տարիները հիւսիսի ցուրտերուն կեր դարձուցած «սապողաւոր Նեռ»ին խնկարկու. «մանր ճերմակներուն հետ, բայց «անմեղ մեղաւոր»ի իր խորունկ ետը շէր կրնար ու շկեցաւ ներքի անսոց, վկա՛յ՝ իր մտերիմ թուղթերը, վկա՛յ՝ «Ջգոյշ եղէք, մարդի՛կ» խորագրուած բանաստեղծութիւնը, անոր հետեւեալ երեք տուները մանաւանդ, ուր տրուած է կասաղի ստալինեղանկ Նայրիի Զարեանի բնութագիրը.

Ու առաջին անգամ հայ քանաստեղծը նեմզ
Նրա փառքը երգեց քսու եւ լարճնաշուրթ,
Ձոռից խիզճ քու ետքի, ծախեց քնար ու երգ,
Գրչի տեղ նա բռնեց քանասրկութեան դաշտը:

Այդ նրան նա երգեց, ժամու գտնին՝ որ պոկեց
ժողովրդի սրտից կանգնեան մի Աղասի,
Զարեան մի եղիշէ, Այնքանադր մի Բակունց,
Լուսէ գաւակներին Գարսիսի եւ Ղարսի...:

Նա կռնակից խփեց, երբ գտնեց իրա
Նստած էլն անել, մթին գնդաններում,
Ու սողունեց նրանց պատուանդանին վրայ
Որպէս հսպիտ ու գոյ, որպէս մանր Ներսէ:

Նենգ, քսու, լորճնաշուրթ, խիզճ ու հողի զոհած, քնար ու երգ վաճառքի հանած, բանասրկութեան դաշտն բռնած, կռնակից խփող, սողունակուն, իրրեւ հոպիտ ու գոյ ապրող եւ իրրեւ մանր Ներսէ զործող մարդեր ապրեցան հոն եւ ըստ բազմաշարար Մահարիի՝ Նայրիի Զարեան վերջինը շէր այդ անարժան վարքով ապրող այն ներկայացուցիչներէն, որոնք ներկայ են դեռ, եւ, որոնցմէ՝

Ջգո՛յշ եղէք, մարդի՛կ, դեռ ապրում են նրանք
Վրէժխնդիր մաղձով, դժգոհ եւ ռիսակալ՝
Նրանք երազում են փանաքեռի վրայ
Նրա ստուերը սեւ ծանր շողուն հագած:

Երեւութապէս Նայրիի Զարեանի հետ հաշտութիւն կնքած Մահարի խորքին մէջ առաջին կը մտածէր «փոքր Ներսէ»ին մասին, եւ անոր անձին մէջէն հաստատելով գոյութիւնը «վրէժխնդիր մաղձով, դժգոհ եւ ռիսակալ» արամադրութեամբ ապրողներուն՝ գուշութիւն կը յորդորէր այլոց:

Մեկնելով այս ճամբարտութիւնէն, քի՛չ պատճառ կը մնայ մեզի շահմարտու, որ ծոյնը կը զգար եւ կ'ապրէր նոյն ճամբաներէն անցած «անմեղ մեղաւոր»ներէն նաեւ Ալազանը:

Մտերիմ թուղթերը:

Բացէ՛ք մտերիմ թուղթերը:

Մտերիմ թուղթերը միշտ աւելի հաւատարիմ դանտուած են ճամբարտութեան հանդէպ, քան մարդկային շրթները...»

ՄՈՒՆԵՏԻԿԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ...

Արձակի պարուզային, զարմանալի է, Սիլվա Կապուտիկեան, անխուսափելիորէն թոյլ կու տայ նախորդ էջերուն բնոյթը յիշեցնող առարկելի կէտեր, «լաւի, բարու» հետ քիչ ազերս ունեցող շատ մը կողմեր, մինչ իր բուն մարդին, բանաստեղծութեան մէջ տարբեր է յաճախ իր ոճը, ինքը, որ բնահանրապէս «Լաւի, բարու համբաւներ» եղած է վաղ երիտասարդութեան օրերէն սկսեալ, ա՛յն աստիճան, որ ա՛նգամ եօթնասունամեայ բանաստեղծները ներշնչուած են իր իմաստութենէն եւ իր խորագիրներուն նմանակներով սկսած են իրենց յօրինումներուն առաջին տողերը, ինչպէս պիտի տեսնէք քիչ վարը:

Քանի մը տարի առաջ, Հայաստանի մէջ, «Եղիմեանման բառաստեղծներ» խորագրին տակ երեցաւ նոյն հարցին նուիրուած մաքրագործող յօդուած մը, որ սուկայն, ցաօք, շունեցաւ իր Երկրորդը, հակառակ դրացուած խխու պահանջին:

Ահաւաստիկ 1945ին գրած Ս. Կապուտիկեանի «Ես՝ լաւի, բարու համբաւներս» բանաստեղծութեան առաջին տասնմէկ տողերը.

ԵՍ՝ ԼԱՒԻ, ԲԱՐՈՒ ՀԱՄԲԱՆԱՐԵՐՍ

Այսօր լցուած է հոգիս ցնծութեամբ,
Ինչպէս այս այգը՝ թռչնոց գայլայլով,
Ելնում եմ, բացում լուսամուտներս.
Ան աշուշի միջից սկիւտանգ
Ելաւ արեւը:
Ինչպէ՛ս կ'ուզէի այցն այս բարութեամբ,
Միայն բարութեամբ բացուէր աշխարհին...
Ելնեմ եւ այսօր հոգուս այս անախ
Ուրախութիւնը ցրեմ բոլորի՛ն,
Եւ բոլո՛ր, բոլո՛ր, բոլո՛ր սրտերին
Բարի լուրերի համբաւները դառնամ եւ այսօր...

Մտնալով, որ այսպիսի բանաստեղծութիւն մը կայ Հայաստանի գրականութեան մէջ, մտնալով, որ նման բանաստեղծութիւն մը կարողացած է ինք, մտնալով նոյնիսկ, որ կարողացածին ենթական համբաւարեր մըն է եւ ոչ թէ մունետիկ, «Հայրենիքի ձայն» շարտխաթերթի այս տարուան թիւ 13ին մէջ, Սարմէն կը բանաստեղծէ.

Ես մունետիկն եմ լաւի ու բարու

Սարմէնի ոտանաւորին շարունակութեան մէջ «աւետարեր» մըն ալ կայ, եւ՝ վերջին տողը.

Ես մունետիկն եմ լոկ անմահութեամբ:

Բայց կարելի՞ է մէկուն քնքշօրէն ըսածին մունետիկային կողպտութեամբ արձագանգելով ներկայանալ զրականութեան եւ արժանանալ ընթերցողին հաւանութեան...

Ո՞Վ Է ԱՅԴՊԵՍ ՅԱՓՇՏԱԿՈՒՄ...

Քանի որ բանաստեղծութենէ բանաստեղծութիւն իրարու արձագանգելու պարագայ մը մասնանշուեցաւ կանխող էջին վրայ, քանի որ խօսք եւ զու Նայրիի Զարեանի մասին ու յիշուեցաւ Սարմէնի անունը, պարզ հետաքրքրութեան համար ընթերցողին ուշադրութեան յանձնենք նաեւ առաջինին ծննդավայր զիւղին եւ երկրորդին ծննդավայր տունին մասին գրած բանաստեղծութիւններուն հասարակաց մթնոլորտը, միեւնոյն ոգին, բացառապէս կըտայթը:

Նոյն տարին (1946) դրուած այս ոտանուորներուն հեղինակներէն ո՞վ որո՞ւն արձագանգած է արդեօք, Սարմէնը Զարեանին, թէ Զարեանը Սարմէնին:

Ճշգրտմը հնարաւոր չէ մեզի, ոչ ալ կարելոր է որեւէ մէկուն համար: Տխուրը նման հիաստերու գոյութիւնն է ու յարատեւութիւնը, որ բանաստեղծներուն մէջ բոյն դրած բարեքերուն մասին միայն չի վկայեր, այլ նոյն ատեն ցոյց կու տայ մեր մամուլին, քննադատներուն ու ընթերցողին սարսափելի անտարբերութիւնը, դիւրահաճութիւնը, աննստանմանողի որդին:

«Այսպէս» չի կարելի, սիրտի ըսէր սղբացեալ Մահարի, ձեւակերպելով կարելին, բանաստեղծութիւնը որեւէ ազդեցութենէ հեռու պահելու եւ բանաստեղծները աւելի բծախնդիր դարձնելու պահանջը:

Ստորեւ խնդրոյ առարկայ երկու բանաստեղծութիւնները, «հառապանիսէն երկու», «Հայրենի տուն»-ն երեք տունը յաղաւուած:

ԽԱՌԱԿՈՆԻՍ

Իմ հեռաւոր հառապանիս,
 Իմ գիւղ, իմ ծառիս, իմ անմեռ...
 Քեզ է տեսնում ծարաւ հոգիս.
 Շէ՞ն ես արդեօք, թէ՛ տւեր:

Արդեօք հեշտում է հարավի
 Քո դաշտերում սպիծով.
 Ո՞վ է քո սուրբ հողին տիրել,
 Ո՞վ է գուգուում քո սպիով:

Ո՞վ է արդեօք անցնում հիմա
 Հանապարհներն իմ սովոր:
 Ո՞վ է հակում շիրմի վրայ
 Իմ վաղածամ մեռած մօր:

Որքան անցնում եմ տարիներ
 Ու մտեցնում ինձ հողին,
 Այնքան անյուզ եւ անհամբեր
 Քեզ է ձգտում իմ հողին:

1946

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Մեր անգատման տխուր օրից
 Տարիներ եմ կից անցել,
 Արդեօ՞ք դու էլ յիշում ես ինձ,
 Թէ՞ դու վաղուց ես մտացել.
 Ինձ յիշում եմ մեր սարերում.
 Արդեօք դեռ կա՞յ մեր հիմ այգիմ,
 Երգում է մեր գուլայ առա՞մ:
 Իմ մանկութեան ընկերն անգին:

Ո՞վ է այրում մեր յարկի տակ,
 Իրեն յաւէ՞տ տեր է կարծում,
 Իմ գոհաւած հօր շիրիմը թանկ
 Ո՞վ է այդպէս անարգ պղծում.
 Մեր արտերը ո՞վ է ցանում,
 Ո՞վ է քաղում վարդերը մեր.
 Ինչպէս կրակն արորոշանում.
 Յոյս պահել իմ միշտ անմեռ...

1946

ՍԱՐՄԷՆ

ՏԽՈՒՐ ԼՈՒՐԵՐ...

Պոսթընի «Հայրենիք»-ին խոր ցաւով իմացանք, որ Հոկտեմբերէն սկսեալ իրենց հրատարակութիւնը կը դադրեցնեն Հայ մամուլի անդամներէն երկուքը՝ Լնչակեան կուսակցութեան պաշտօնաթերթ «Նրխասարդ Հայաստան» եւ անկուսակցական շարաթաթերթ «Նար աշխարհ»:

Վերջին քանձամեակին, յաճախողէպ եղան Ամերիկայէն եկող նման տխուր լուրերը: Յաջորդաբար դադրեցան որոշ մակարդակի հասած եւ Հայ մամուլին մէջ որակական աննախընթաց ներդրումներ կատարած («Հայրենիք»-ն) Հանդէսներ եւ ամազգրեր՝ «Նոր գիր»ը, «Հայաստանի կոչմակ»ը, «Հայրենիք» ամսագիրը, եւ ահաւասիկ հիմա երկու ուրիշներ՝ 70 տարեկան «Նրխասարդ Հայաստան»ը եւ քսան տարեկան «Նար աշխարհ»ը, որոնք կը խորացնեն արդէն կոտտացող վէճը:

Տունը կան, ուր թերեւս միայն «Նրխասարդ Հայաստան»ը մուտք կը գործէր, եւ ուրիշ տուններ, որոնք «Նար աշխարհ»էն դատ Հայրենի թերթ շէն տեսներ: Հիմա, ուրեմն, Հայրենի գիրքէն պիտի գրկուին անոնք: Մանր է երևակայել այդ դրութեան հետեւանքները:

Համաշխարհային երկրորդ պատերազմէն ետք զազրած Ֆրանսական տասնեակ մը Հանդէսներուն եւ օրաթերթերուն վերջինին առիթով, երկրին մշակութային նախարարը կ'ըսէր.

«Ամէն անգամ, որ թերթ մը կը դադրի, մտածելու ազատութիւն մը կը պակսի աշխարհէն»:

Մեր պարագային՝ հարցը աւելի լուրջ է: Դադրող թերթի մը հետ ամբողջ գանդուած մը կը գրկուի մայր հաւաքականութենէն, մայրենի լեզուէն, կէցուցիչ ստանձաթիւններէ, մանաւանդ հոն, Ամերիկայի մէջ, ուր հաւաքական կրօնքով ապրելու մեծ հնարաւորութիւններ չունինք եւ հոգեկան միութիւնը ամուր պահելու գործը սուսաւաբար մամուլը ինքը կատարած է ցայսօր, պիտի կատարէ մազը, տարագիր բազմութիւններուն այդ ամէնէն ազգու ու տարածուն գործօնը:

Որովհետեւ, թերթը արտաքին աշխարհէն լուրեր ու տեղեկութիւններ հաղորդող սովորական միջոց չէ մեզի համար, լուրերն ու տեղեկութիւնները թերթերէն առաջ արդէն կ'ողողեն մեզ ամէնուր, անհաւասարելի արագութեամբ, նոյնիսկ պատկերազարդ ճոխութեամբ, մեզի համար թերթը ներքին լուրերու բեմ է, ներքին պատկերներու հանդէս, օճախ, հայրենիք, ճանկատ բոցերը՝ իրարու առնչող կապ:

Դադրող իւրաքանչիւր թերթի հետ այս կամ այն չափով, այս կամ այն ուժգնութեամբ կը հարուածուին այդ ամէնքը, մե՛նք՝ իրրեւ միւսուր ու հաւաքականութիւն:


Դադրող թերթերը բարոյական սնանկութեան հետեւանքով չեն յանգած հարկաւ այս ծանր որոշումին, այլ առարկայական պայմաններու ճշմունքով կը քաշուին հրապարակէն: Եւ հոս է, որ պէտք է կոչ ընել Հայ մարդուն իղձմտանքին, աւելի շուտ՝ դիտակցութեան ու ազանովի անոր մասնակցութիւնը վերը ուրուազմուած մտանգը յաղթահարելու կենսական գործին մէջ: Տնտեսական առումով նախանձնի պատկեր մը կը ներկայացնեն այսօր դադրութիւնը եւ ներքին չէ մեզի, պատմութիւնը չի՛ կրնար ներել մեզի, եթէ թոյլ տանք, որ տնտեսական պատճառներով ցամքին արեւնասար մեր երակները:

«Նրխասարդ Հայաստան»ի եւ «Նոր աշխարհ»ի վախճանը դուժող «Հայրենիք»ը կ'ըսէ.

«Արագ ամէն հայ թերթի հետ՝ մեզմէ ալ քան մը կը շիջի. փակուող ամէն թերթի հետ՝ մեր կեանքին մէջ ալ փաս մը կը բացուի»:

«Նրխասարդ Հայաստան»ի, «Նար Աշխարհ»ի եւ անոնց նախորդներուն ճակատագիրը պէտք է խնայուի մեր միւս թերթերուն, մեզի՛:

Սրակարգի լուրջ հարց է մամուլին կացութիւնը, որուն լուծման, այսինքն՝ տեսականացման ու բարգաւաճման օգուտն պէտք է մտածէ ու աշխատի իւրաքանչիւր Հայ մարդ:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐՔԵՑ»

- Բ. Թօփալեան, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1970
- Վահէ Վահեան, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1970
- Խրախունի, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1970
- Գ. Ազդարեան, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1970
- Մ. Տէրունեան, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1970
- Ա. Մառուկեան, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1971
- Նզիվարդ, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1971
- Զաւրատ, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1971
- Ա. Ճանեան, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1971
- Վ. Գարսիէօզեան, բանաստեղծութիւններ, Փարիզ, 1971

«ՌԱԳԻՆՆ»ի իմբպրատուները բաց է ամէն օր, առաւօտեան ժամը 9-13, կէսօրէ
ետէ՝ ժամը 4-30-7-30: Շաբաթ օրերը՝ ժամը 9-12:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ՀԻՔԱՆԱՆ 25 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 10 ՏՈՒՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2.50 Լ. ՈՍԿԻ

پاكين
مجلة شهرية ، أدبية وفنية عالية
مدير المسؤول
السيد آرتمين كارنيك قزائجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
ԱՍՍԱԳԻՐ
ԳՐԱՆԱԿՆԵՐԻ ԲՈՒԹՅԱՆ
ՆԻ ԱՐՏԱԿՆԵՐԻ

ՀԱՐԻՁ ԻՍՏԱԳԻՐ
Կ. ԱՍՍԱԳԻՐ
ԻՍՏԱԳԻՐ
Գ. ԱՆԱԳՆԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչությունի կապիտ

G. SASSOUNI
Rue Sélim Boustani
Beyrouth - Liban